



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1903



ՅՈՎՀԵՆԵԼԻՇ ՄԱԼԻԽԱՍԵՐՆ

ՅՈՐՈՏ-ՄՈՐՈՏ

ՊԱՏԱՆՐԱՆՐ ԻՐԱԿԱՆ ԿՆԱՆՔԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԶ

—
—

ԹԻՖԼԻՑ
Տպարան Մոլիս Վարդանեանցի.
1903

1903

ՅՈՎՀԵՆԻՍ ՄԱԼԽՈԽԵՐՆ

891-99
Մ-15

ՅՈՐՈՏ-ՄՈՐՈՏ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵՎՆՔԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԸ

— օջջութեալ գիրք —

8832

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանցի.
1903

6 NOV 2011

ԻՄ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՄԱՅՐ ԵՐԵՑՈՒՀԻ ՍԿՈՒՀ

ՄԱԼԻՎՈՍԵԱՆԻ

ԺԵՂԱՊԱԼԻՆ

ԵՄ ՆՈՒԹՐՈՒՄ

ՈՐԳԻ ԱԿԱՆ

ԱՆՀՈՒՆ ԿԱՐՈՑՈՎ

Дозвол. Цензурою, Тифлисъ, 20 Апрѣля 1902 г.



10904-57



ԿԱՐՈՑԱԿԻՉ ՄԱՅՐ ԻՄ

Քսանեւերկու տարի որդուղ կարօտը քաշելոց ետոյ 1904 թ. սեպտեմբեր ամսի 26-ին նոյն կարօտը սրտումդ կնքեցիր մահկանացուղ:

Այն անհուն վիշտը, որ ինձ պատճառեց քո մահը, այնքան մահկանացուղ կնքելը չէր, որքան այն գիտակցութիւնը, որ իսկ կարօտով մեռար:

Մօր կարօտ... ուա այն ցաւակցական անկինդ կալիքն է, որ ամենաասուրք եւ ամենանուիրականն է մեր անցաւոր կեանքում, որ շարժում է ամենաանգութ բռնաւորի իիզն անգամ:

Թարմ շիրմիդ առաջ ծունկ խոնարհած յիշաւակիդ եւ նուիրում „ՀՕՐՈՑ-ՄՈՐՈՑ“-իս երկրորդ զիրքը։ Ընդումիր այն եւ բարեխօս եղիք վերին Տեսչութիւնան առաջ, որ ոյժ եւ կարողութիւն շնորհէ ինձ աւելի կատարեալն ու աւելի բաւարարն անելու այն հայրենիքի, մանաւանդ ծննդավարի համար, ուր ծնուել ու մեծացել ենք մենք:

Քո որդի ՕՀԱՆՆԵՍ



ԴԱՐՁԵԼ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

«Հօրոտ-Մօրոտ»-ի առաջին գիրքը հրատարակելիս մենք առել էինք, թէ «Հօրոտ-մօրոտ» պատկերները վերցնելով Զաւախէթի կեանքից՝ զրեցինք (խօսակցութիւնը) նոյն գաւառի բարձառով:

Գիրքը լոյս տեսնելուց ետոյ թէ նամակներով և թէ բերանացի եղան գիտողութիւններ լեզուի մասին. ա) մասնագէտները զոհունակութիւն յայտնելով զրում էին, որ աշխատեմ առելի խիստ հատեւել բարբառին. բ) ընթերցող—առհասարակ գասակարզը տանիջում էր, որ «Հօրոտ-Մօրոտ» զրած լինելով գաւառական բարբառով այնքան հեշտութեամբ չէ կարգացնում. դ) ինկ գրականութեան բելիարիստ մասին հետեւող պահանջում էր, որ զրէի զուտ գրական բարբառով, քանի որ «Հօրոտ-Մօրոտ» զեղաբեկացան մասին վերաբերեալ լինելով մեպհականութիւն է ամբողջ հայութեան, և ոչ թէ միայն մի գաւառի:

Այդ բոլոր կարծիքներն, ինքն ըստ ինքեան ունին իրենց լուրջ տեսակէտերը. բայց այն կայ, որ գաւառական կեանքի ոչ մի զրուածք չի կարող տպատինել զրանից, մանաւանդ երբ խօսեցնում են տիպերին, չես կարող նրանց սպին, կենցազը գրական լեզուով այնպէս պատկերացնել՝ ինչպէս նրանց իրենց ոճով, լեզուով, որը նրանց կեանքի աղին է:

Մեր այս համառօտ բացառըութիւնը առլուց
ետոյ հարկ ենք համարում յայտնել, որ մնում ենք
մեր առաջին որոշման, այն է՝ խօսուն լեզուն պահել
գաւռուական (մաքրած, կոկած) խոկ նկարագրականը՝
զրական:

Յ. Մ.

ՕՉԱԽԻ ՄԱՐՈՒՄԸ

,,Ամենայն թադաւորութիւն բա-
ժանեալ յանձն իւր՝ աւերի, և ամե-
նայն քաղաք կամ տուն բաժանեալ
յանձն իւր՝ ոչ կացցէ,,,

Մատքես ԲԺ 25.

I.

Ո՞ւ կարող էր մի վատ բան առել և... զիւղա-
ցի նահապետ Ատայի օջախի մասին, բերանը կծռիր
ետեղ կդառնար, լիզուն կշորանար փորը կքաշուիր.
Նրա կարողութիւնն էր սպակաս, անոնել, թէ մար-
դավարութիւնը: Տունը, վանք Աստծու տուածին,
հօ տուն չէր, վանք էր, կատարեալ վանք. տաս-
տամնընդինդ լուծք եղ ու գոմէշ, երկուն-քառասուն
կով ու մատակ, չոկերով ձի, երկու-երեք հարիւր
զլուխ մարի ոչխար, զոյգերով կապած որձ ձիեր,
ցորենով ու գարով լիքը ամբարներ, կարասներով
ու ծափերով լիքը իւղ ու պանիք, տնն, անդ, արտ,
արօտ... էլ ո՞ր մէկն ասես. տուն որ մտնէիր՝ բի-
րանդ բաց կմնար, բարեկ կմոռանայիր:

Էլ մարդ կամ, որ նահապետ Ասայի տունն իջած, օջախի զլուխը նստած, հայը կերած, մարդավարութիւնը տեսած չլինէր. Երկնքի հաւքը որ հաւք է, նաև մինչեւ անդամ իւր պատառը նրա սեղանից կարել էր:

Ինքը նահապետ Ասան էլ պարթե հասակով, խելացի գրաւիշ դէմքավ, խոսով արծաթեայ մազերով մի վայելչակաղմ տպամարդ էր, որ տեսնէիր մայիլ կմնայիր, միայն ախ քաշելով կասէիր, «արդար չէ դատաստանդ Աստուած, որ ծերութիւն ասածդ էդպէս մարդու համար էլ ևս սաեղծել»: Նա կինէր մօտ եօթանասուն տարեկան, տեսոծ թերութավի, Պատկերչի, Լօրիս-Մելիքոսի պատերազմները, վեց տարի խլբաշութիւն արած, ինը տարի էլ զլաւութիւն (տանուաէր), հազար տես եղած, հազար բան լսած, հազար օջախի զլուխ նստած, նրանց սեղանի ուրախութիւնն ու գարգն եղած, խելքով կառավարած, արդար գատառատաններ կարած, նահանգտպեանների ու գաւառապեանների հետ նստած վեր կացած, բոլոր սանչաղի խօսակցութեան առարկան եղած, լուսների սիրտն ու հոգին գառած:

Նա մինչեւ այդ հասակը հասնելը անդարդ ապրել էր, ուրախ և գործուն կեանք վարել, շափի կարօտ շմնացել: Սակայն ինչպէս ամեն մի հողածնի, այնպէս էլ նահապետ Ասայի կեանքի ձմեռը մօտեցել էր. դեռ նա նոր էր պսակել իւր փոքր որդուն՝ Գաբէլին, որ մեռաւ իւր սիրելի կողակից Գիւլիդար խանումը, որի հետ նա կիսել էր թէ վիշտը և թէ ուրախութիւնը, և որի օգնութեամբ մեծացրել, չէ-

նացրել էր հօպից բաժին հասած տունը, օջախի անուն վաստակել:

Գիւլիդար խանումի մահից ետոյ, երբ ծերութիւնը յաղթել էր նրան, նա, ինչպէս մեր տատական-պապական սովորութիւնն է, իրեն նուիրել էր աղօթքի և երկրպագութեան, այս աշխարհի հետ իւր հաշիւն արդէն վերջացած համարելով՝ պատրաստում էր միւս աշխարհի համար:

II.

Գիւլիդար խանումի մահից յետոյ տան կառավարութեան ղեկը, ըստ հայկական սովորութան անց էր կացել նրա մեծ հարսի՝ Ղարագէօղի ձեռքը, բանալիները զօտկից նա էր քաշ արել, տան կառավարիցը, անտեսը նա էր դառել:

III.

Մի օր Ղարագէօղն, իւր փաքր աղջկան կողքին նստեցրած, միջակ նիբո՞չ եազգիւլի հետ հաց էր թխում:

Եազգիւլը խմորը գնդում, տալիս էր նրան, նա էլ թիկից՝ թե գցելով բաց տնում, երկարացնում, բաթաթին (հացառ) գցում, թուրոնի շուրթը զարնում: Իսկ երբորդ տեղերինը՝ Զաղիտան թոնքատան տափում կանգնած ամաններն էր լուսնում, սերուցքը խնոցին լցնում, հաբելու համար պատրաստում, գարակները սրբում, տուն ու զուռ աւելում, մաքրում:

Եազգիւլի փոքր որդին տեղից վեր կենայով
շապկանց վիզն ու կուսծքը քորելով գնդումնու վա-
գեց թնդրափը, մօր մօտ սպաս խնդրելու:

—Գրնջու ու մահու կեր ապրի տեղ, այ, այ քե-
զի ապուր—, զոռաց նրա վրայ Դարագէօզն ու կող-
քին զրած ակիչով խփեց երեխայի փափուկ մոհ-
րին.—Էլի ինչ վեր կերալու պէս թնդրի զլուխը
փազեցիը, զալմազալդ ցըիր:

Երեխան այդ անսպասելի հարուածից սաստիկ
ճիչ արձակեց և ընկաւ մօր զիբկը:

—Քաֆիր ես, ինչ է, էլուչս էլ անհաստած
զարկեն. տղիս շանչը կարաւ. ինչ էրաւ քեղի—,
երեխայի արտասուքը փայփայելով սրբելով խօսեց
եազգիւլը:

—Ապա ինչ վերկենալու պէս թնդրի զլուխը
կվազէ:

—Ելնելով ինչ եղաւ. եկաւ երկու զլալ ա-
պուր ուտելու:

—Ապուր ուտել կուղի, թող էստեղ ցածն սպա-
սէ—, իւր կիրքը քօղարեկեց Դարագէօզն:

Այդ միջոցին զգալը քթին—բերնին քսելով իւր
առջե զրած չիլէն եր խփշացնում Դարագէօզի փո-
քը աղջիկը: Նա հետո ուտում էր, հետոն էլ աշքերի
տակով նայում տեղի ունեցող կռուին և սրտի մէջ
ինչ որ յանցանք զգալով ինքն իրեն խօսում, «ինձի
չէք կարող ծհծել, համա, մայսս կողքիս է»:

—Ապա աղջիկով լմւ տանել ևս կուշտի, կողով
շիլէն դմել ևս առաջը:

—Զմատ լաւ եմ էրէ, շատ լաւ:

—Ինչի, քուկդ տղայ է, իմս տղայ չէ:

—Երկանս վաստակն է կենամ, ինչ պիտի
էնես:

—Երկանդ պէս աշխատողի մէկն էլ իմ էրիկս
է. էնիկ էնորէն ինշով է պակաս:

—Ի՞նչ—, աչքերն եազգիւլի երեսին չոեց
Դարագէօզը.—զիտեկն, ազքտի լակոտ. ինչպէս կը-
տեսնիմ՝ կեսուբդ մեռնելչն ետև լիզուդ շնա ևս
հանէ.... Յերանս մի՛ բանալ տայ, զօրով մի խօսեց-
նել տայ՝ թէ չէ զիտես, համհամ...

—Բերանդ որ բանան մւմ ինչ պիտի էնես.
էստեղ քեզէն վախեցող չկայ—, համարձակ, մինչև
իսկ յանդուղն պատասխանեց եազգիւլը, «կարսին
ինչ ձէն տառ՝ էն կիմանաս»:

—Ինչպէ՞ս—, նրա յանդուղնութեան վրայ զայ-
րանալով իշխող հայեացըով ճշաց Դարագէօզը,—
պատասխան կուտաս, համա. էս հացը որ կուտես՝
մւմն է, զէ, հրամմէ, պատասխան տու:

—Ումն է՞ս—, ձեռի խմորը գնդելը զաղարեց-
նելով, զլուխը հարցական թափ տուեց Եազգիւլը:

—Ումն է:

—Համա:

—Ի՞սս է, իմ ջաղցիս ալիւրը:

—Քու ջաղցիկ ալիւրը... էջ-էջ, մէկ էլ ըստ—,
զաւեշտական կրկնեց Եազգիւլը:

—Մէկ էլ կսեմ, ու երկուս էլ:

—Աստուած կուրես. էդ ուրտեղից եղաւ քու
շաղացդ:

—Ուրտեղից:

—Համա:

—Էնտեղից, որ իմ այսի ճակատիս օսկեստանցով

ևմ շինել տուէ—, ցոյց տուեց իւր ճակատը Դարագէօղը, որտեղ վարդի տակ մի շերիտ (շարք) սովի ևս կար:

—Հըլլ’—հըլլ’. Էնոր համար օսկեստանքդ ծաւեցիր, որ վերջը կայնիս ըստս, թէ «իմ ճակատս օսկեստանցով է շինած, ջաղացը իմս է», համ...

—Ապա ինչ կկարծէիր, չըլլ’ վիշշկեաշ սլիտի էնէի:

—Դէ որ էդ էր, ապա ինչի վերջը կայնար, ըսիր, թէ «օսկեստանքս տուաք, ջաղցի վրայ խարչեցիք, առանց օսկու գլուխս կցաւի, մի շերիտ առէք»:

—Ջատ լաւ եմ էրէ, շատ լաւ—, պատասխան չունենալով լրբութեան տուեց Դարագէօղը:

—Մացու եզները ծախել տուիր, նոր շերիտ առար, ճակատդ գրիր:

—Ջատ լաւ եմ էրէ, շատ լաւ, մեծ տեղեր կինդ եմ...

—«Ջատ լաւ ես էրէ», հապա՛. ինչպէս չէ:

—Ապա դու որ բողմադդ ծախեցիր—, այժմ Դարագէօղն սկսեց հաշուել, —օշխար տուար, սարն ես զրկէ, բուրգը կմուղես քեզի կէնես, աշխատանքը չերդ կդնես՝ բան շեմ ըսէ՞—, ջրաղացին տէր դառնալու մտադրութիւնը փաստաբանեց Դարագէօղը:

—Իմ օշխրիս փարի մէջ հաղար հեղ եմ ըսէ, թէ տան փարս չկայ. անկծիդ բուրգը հանէ. համա ջաղցի փարի մէջ տան փարս կայ:

—Հէջ էլ չէ—, բուռնցքով խոնչպէին խփեց Դարագէօղը:

—Երկու ախազօր շինած է, երկու ախազօր բաժին է. հէջէջ էնդին—էնդին մի ընկնի:

Զաղիտան, որ մինչ այդ լուռ ականջ էր դնում, մինոյն ժամանակ սաստիկ վիրաւորւմ, որ իրեն մարդատեղ չէին զնում, կուտին չէին մասնակցել տալիս՝ էլ չկարաց համրերել.

—Չըլլ’ էս տան մէջ խորդ ոբղին ես ու մարդու ենք, որ գիշեր-ցերեկ աշխատինք, վերջը՝ «դառը դատինք, դատարիկ նստինք»:

—Էտ քեզի վեկ (ով) խօսեցուց. գույն ինչացու են—, նրա վրա նօթերը կիտեց Դարագէօղը,—ու երեկ մէկ, էսօր երկու՝ եկել ես բանի մէջ կիսառնուիս:

—Ինչի պիտի շխառնուիմ, էս տան մէջ ինչ որ ձեր երկտիքն են, էն էլ իմս:


—Հըլն, քու երկիդ էլ օսկեստանցդ փարով խանութ է բացէ. էլ ինչ կըլրդուաս:

—Ջատ լաւ է էրէ. ինչի պիտի չէնէ. ամեն մէկդ որ ձեր կողմը կքաշէք, մեզի ջաղցին տէր էնել չէք ուղէ էն էլ իրեն համար պիտի մտածէ?

—Չըլլ’ ջաղցին գուն էլ ումուղ ունիս—, ծաղը եկող հարց տուեց Դարագէօղը:

—Ինչի պիտի չունենամ. տան մալ է. իրեք ախազօր բաժին է:

Եադիւն այդ բոպէ մնաց երկու կրակի մէջ. չզիտէր ինչ խօսիր. եթէ տոէր «իրաւունք չունի», իրեն ես այդ խօսքն ասած կինէր, բանի որ ջաղիտայի ու նրա ամսւանու Գարելի իրաւունքներն էլ նոյնն էին, ինչ իրը կ իր առնենանը. եթէ տոէր «Ճն էլ իրաւունք ունի» այսպէս անուգիւ էր, բանի որ



Հրադացը կամենում էր երկու եղբօր բաժին տեսնել:

—Եղ խելքերուդ «քշն» ըսէք—, նրանց երկուն գառաւ Դարագէօղը, և ձեռը փարաց օղում:

—Պաճի, այ պաճի—, այդ ժամանակ զրսից լուսեց օտարականի ձայն:

—Ո՞վ է—, հաղղից (ամառուայ սենեակ) լրսեց նահապետ Ատայի ձայնը:

Նրա ձայնը լսելուն պէս հարսներն իսկոյն լուսցին:

—Հեռաւոր երկրից օտարական անցուար ենք, լսել ենք նահապետ Ատայի օջախի անունը, հիւր ենք իջնելու:

—Հիւրը Աստծունն է, համեցէք, իշէք—, խօսեց նահապետ Ատան և առաջ անցաւ բարեկուու:

—Նիւրսն ով կայ. Էյ, Խաչօ, Մըկիչ, եղէք ձիանը նես քաշեցէք—, հրաման արձակից նահապետ Ատան և հազարով հլսքերին հրաւիրեց ետղըդ:

—Գրնդ, զրոդ, եֆ (երբ) պիտի քեզի ու առարկին լողացնեմ, ճախարը*) գնեմցոր բաժնուիմ, ինձի համար ջոկ (առանձին) տուն ըլլիմ, էսքանի ձևոնին հոգիս ազատուի—, քթի տակ անիծեց Դարագէօղն և կրացաւ թորոն եփած հայը հանելու:

*) Ճախար=գագաղ. մի հատ է լինում զիւզում, որով մեռենիներին տանում են տանից գերեզմանատուն թաղելու. նրա միջից մեռելի զիւզը հանում, պատահքով յանձնում են հոգին, ու նորից բերում զիւզի եկեղեցին:

VII.

Դարագէօղը տարիին առած, վայելչահասակ սեաչեայ կին էր: Նրա խական անունը Մարիամ էր, բայց սեաչեայ—հրաչեայ լինելու համար մականուանել էին զարագէօղ:

Նա օրիորդ հասակում շատ երիտասարդների սիլս էլ ափկ-աակ անել առել, շատերն էին նրա հօր մօտ խնամախօս ուղարկել, սակայն նրա ծնողները միակ արժանը համարել էին նահապետ Ատայի օջախը, նրա մնծ որդուն՝ Ազաջանին:

Դարագէօղը Գաբուննենց առն ոտք դրած օրից գծագրել էր իւր հաշիները տպագայի վերտրերմանի, որին հետեւում էր իւրաքանչիւր քայլափսում մտածելով: Նա կեսութզ պէս ներոզամիտ և խազաղասէր ընաւարութիւն չունենալով շատ անգամ տեղիք էր առել անբաւականութիւնների. բայց վերջին, իւր ձեռով ստեղծած անբաւականութիւնը նրան կատարութեան գագաթնակետին էր հասցըել, մի մատակ արջ գարձրել:

«Նրանք իմ զէմս էդպէս բերան բանաձն... իմ ջաղցիս վրայ աչք ունենաձն... ես էնոնց խրան կուտամ, սպասեցէք զնք. թնդ մէկ Ազաջանը քաղքէն զայ... բայց... յանկարծ կանգ առաւ նա, երբ կրքի բռնկման ժամանակ յիշեց, թէ ով էր Ազաջանը, ինչպիսի մարդ էր նա:

Եւ այդ յուղման ու նախագծեր կազմելու խորհրդածութիւնների մէջ կաթի քուղաները թերը զցած բաղի նման կողքէ—կողք ընկնելով զալիս էր

տուն, որ տեսաւ Աղաջանին դռանը սալաքարերի
վրայ նստած, պապիրոսը ձեռին:

—Քա մարդ ջան, բարե՛վ ես եկէ քաղքին:

—Մաղ ըլլիս—, ըստ սովորականին պատաս-
խանեց Աղաջանը:

—Միքիշ Էնդին գնա նստիմ: Աղջի Սուրբն,
աղջի արի մէկ էս քռւզաները նես տար—, սափոր-
ները մեծ աղջկան տուեց Ղարագէօղն, ու չորս բո-
լորքն աշք ածելով նստեց ամուսնու կողքին:

—Քաղքին ես եկէ. ըստ աեսնինք ինչ խարար:

—Իսկի. ինչպէս որ գնացի, Էնդէս էլ ետ դար-
ձայ:

—Դէ հիմի մէկ ինձի հարցու, թէ էստեղ ինչ
խարար:

—Ի՞նչ խարար պիտի ըլլի—, նշանակութիւն
չտուող տօնով հարցուեց Աղաջանը:

—Էլ էն խարարը, էլ էն խարարը, որ Աս-
տուած ինքը թափէ, ազատէ:

—Ի՞նչի, ինչ կայ որ...

—Ես որ էն Ուռուս-Խաչօի չուզակած աղջիկը,
Եղզիւլը...

—Ե՛մի՞... աշքերը չուց Աղաջանը, կառես
ուղենալով լուցնել կնոջը:

—Քա մէկ գուն էլ գեռ իմացի ինչ կսեմ, ետե...

—Ես գիտեմ էլի ինչ պիտի ըստս. հարիւուր
չէ:

—Քիչ համբերէ, տես, թէ ըստս նահախ
բան է էլի բարկացի, գլխուս զարկ:

—Եփր էդ ինչ տեսակ բան է, որ...

—Երկու խօսք. հոգուդ մեռնիմ...

Աղաջանն ակամայ լրեց: Ղարագէօղն սկսեց.

—Է՞ն օլինը հանեց, էն օլինը, որ «գլխուս
խուփը վերցաւ»... ինձի էլ էլ ոչ մհծի տեղ կդնէ,
ոչ էլ...

—Էդ է՛լը—, հօթերը կիտելով վրայ բերեց
Աղաջանը:

—Վոյ համբելութեանդ ինչ ըսեմ, համ, որ ոչ
լսել կլանես, ոչ իմանալ:

Աղաջանն էլի լրեց. Ղարագէօղը ցանկալի ուն-
կընդութեան համնելով՝ խօսեց.

—Քիզի էլ էլ էն խօսքերը, էն խօսքերը, որ
դույ շանն անգամ չէին լսէ...

—Ի՞նչ—ի՞նչ... դույ շանը՝ ը...

—Ճանու էլ մի լսէ:

—Պատճառը՝, առիթը դարձեալ կնոջ կող-
մից համարելավ հարցուեց Աղաջանը:

Ղարագէօղը նրա ակնարկը լաւ հասկացաւ. ուս-
կան ցայց տուեց, թէ միամիտ է, ոչինչ չէ հասկա-
նում, շարունակեց.

—Պատճառն էն էլ, որ խարուայ տղին ըսի,
թէ թնդրափէն իջնի, կայնել է հետո կոխւ կքչէ, թէ
«ի՞նչ իրաւունք ունիս տղիս վոնսելու. դու վել ես էս
տան մէջ, ում շունն ես, որ իրաւունք կրանեցնես.
ինչ որ քու էրիկդ Ե էն էլ իմ էրիկս է, հըլը մի
բան էլ տաել, որ քու էրկադ պէս թամբալ չէ»...
«Աղջի, կսեմ, ըսի-ըսի, հիմի ինչ եղաւ. խանչւի գ
քարը խոյ չըն կաւ, ամօթ է, ձենդ կտրէ, զուն
անցնողն իմանայ ինչ կոէ», կայնել է, թէ «չէ՛է,
դու վել ես, որ տղիս վրայ խօսիս, կամ քու էրիկդ

ում շունն է... եխտեալին ե՞լի պիտի մեռնի, որ բաժնուինք»...

Աղաջանը, որ հօր անդրանիկ որդին էր, արտաքինով հօրն էլ շատ նման, բացի զէմֆի կաշու գյոնից, որ հօրն սպիտակ ու կարմիր էր, որանը միապաղադ ձիթագոյն, գանդաղաշարժ աչքերով, և սաստիկ նախանձախնդիր էր հօր օջախին ու անուան, որ նախատակ էր գրել հօր մահից եռոյ նրա ոտեղը բռնել, տունը շին պահել՝ «բաժնուինք» խօսքը լսելուն պէս՝ ցնցուեց, կասես իրան մի աման սառը ջուր ածեցին. ճշցա.

—Ի՞նչ ըսմբ... բաժնուինք...

—Ճա, հապալ. —այնպիսի մի ճարպիկ տօնով վրայ բերեց Ղարագէօղը, որ կասես ինքն ևս զարմանում և դատապարտում լինէր մի այդպիսի միտք յղացողին:

—Ե՞ս ձեզի բաժնուիլ խրատ կուտամ, գետինը մտած Աղամի խաբողներ. բոլորդ իրար հետ իրեք տեղերկին էր, իրարու հետ եօլա չէր կարայ եթայ. բիլաքիմ սատկիք, ճա...

—Հը՛ը՛ըն, —սիրու կեղծ քաշեց Ղարագէօղը, —մարդիկը հաստատ մաքերը գրել են, որ հօրդ պլուխը վէր դնելու պէս զռներն իրեք էնեն...

Աղաջանին շատ լաւ յայտնի էր իր կնոջ անհաշտ, անկամորդ բնաւորութիւնը. նա զիտէր, որ նրա ասածի մէջ մի թոյն, մի ծածուկ բան կայ խառնուած, այդ պատճառով էլ պատասխանն ընդհանուր առեց.

—Իրեքդ էլ իրարու լաւ զտել էք. ջարդ ընկնի

ձեր մէջը, ջնարդ, ճա, որ ամեն տան բաժնուելու պատճառ չըլլիք...

«Եէ, չեղաւ», մտախօսնեց Ղարագէօղը. «կացինը քարին դարկի», հարկաւոր է ուրիշ ճանապարհով մօտենալը, ու դառաւ.

—Լաւ կսես, շատ լաւ կսես. խելօք խօսքին ինչ կարամ ըսէ. շատ լաւ բան է, որ մէտեղ մնանք, իրար հետ սիրով ասրինք, բարաքեաթլ տներէս անպահաս էնենք, օջախներս միշտ էս տեսակ գիւռ (չին) մնայ, ուահնչպարի զործն էլ էս տեսակ կպահանջէ... շատ լաւ բան է, համա որ ուզող չկայ...

—Էղ ո՞րն է շուզովը, ըստ տեսնիմ—, խըսիւաց Աղաջանը:

—Հը՛ը՛ըն, —երգելով տեղում նաղանի օրօրուեց Ղարագէօղը, և մի թովիշ հայեացը ձկեց նրա աշքերին. հայեացը, որ եթէ այդ վայրկեանին ձգէր մի ուրիշի վրայ՝ նրա սրառմ անշուշա և սիրոյ կրակը ձգած կինէր.—Ի՞նչ ըսկմ, որ էղպէս միամիտ ենս... էնոր համար է, որ օշխար կառնին, սարը կորկին, տան փարով ու հացով կպահեն, վերջը կծախնն՝ օգուտան իրենց ջերը կդնեն... համ տան հաշուխն խանութ՝ կպահեն, եղած օգուտան իրենց կէնեն համ էլ վրէդ կինդան, քիւֆիւրն էլ աւելի... էնոր համար, է...

Այդ նշանն այնքան ուղիղ բռնեց Ղարագէօղը, որ ուղղակի Աղաջանի խելքի տանը դիպաւ: Աղաջանի մաքի առջե վայրկենապէն էնս աշխարհը փոխուեց, ուրիշ զոյնով նկարուեց. «Ճշմարիտ որ», անցկացաւ նրա մաքով:

Ղարագէօղը կնոջ օժառուած յատուկ բնաւորու-

թեամբ իսկոյն ըմբանեց նրան տիրապետող մտած-
մունքը, բովէ չկորցրեց.

— Թու ինչ ունիս, դուռը. խեղճ ողորմելի, որ
Էսքան ժամանակ է տան առաջ ես ընկէ, կաշխատիս,
բոլորին նշանել—կարգել, «հաւ ես էրէ, թասն ես
դրէ», տունը մէկին մէկ էլ աւելցուցէ, ահճախ—ուն-
ճախ մի ջաղաց շինէ՝ ին էլ կուղին, որ ձեռնէդ
լլեն...

— Ի՞նչ խել, ի՞նչ ջաղաց—, համարեա անտե-
ղեակ հարցրեց Աղաջանը:

— Ի՞նչ ջաղաց մըն է. քանի ջաղաց ունիք:
— Մէկ:

— Բշոը էդ ջաղացը:

— Ի՞նչ կիսուիս, չեմ հասկինայ:

— «Ի՞նչ կիսուիս» որն է. էդ ջաղացը, որ իմ
ճակտիս օսկեստանցով շինեցիր, չսիր, թէ «Զարա-
գէօղ, ազոցս համար մի յախտենական հայ թսդնինք,
որ ուտեն ու ժամանակին մեղի օրհնող ըլլին»:

Աղաջանը նոր հասկացաւ նրա միտքը:

— Մէծ բան է, համար մաս կուղին. թող
ըլլի, որ մնծ ափսէր ես, էդ էլ ամակիդ տեղը
հաշուին... եղքան մանր ու խոշոր ունիս... ինո՞նք
ինչ ունին...

«Ամակիդ աեղ, մանր ու խոշոր» խօսքելին ակա-
մայ ազդեցին Աղաջանին. նա վլուխը շարժելով խոր-
հեց, «Ճշմարիտ որ»...

— Հըլը էն Եազգիւն, ըսինք, տասը տարուայ
հարս է, խօսի էլ ինքան ցաւ չէ. հապա էն պստի
զետինը մտածը, Զաղիտան... պա, պա, պա... մետ-

կեամ էլ կրոնուի, մեակամ էլ խօսք կհասկինայ... քի-
զի էլ ին խօսքերը, էն խօսքերը, որ...

Մինչև այդ օրն Աղաջանը լսել էր միմիայն եր-
կու նիբոջ կոկմները. սակայն այս անգամ՝ Զաղիտայի
անունն էլ լսելով՝ վայրկենապէս մի դառն նողկանք
զգաց գէպի բոլորը. վերստին նրա մէջ փոխուեց
«Ճշմարիտ որը» և կրով լցուեց դէպի նրանց ու ա-
նիծեց.—Գետինը մըսնիք, որ «իմ ու քուկի» պատ-
ճառ չզառնաք, մարդու սիրտ չպղտորէք—, ու ա-
նէծքը շարունակեց մտքում:

«Ճան, վէսու ալչու է»... բերկրեցաւ Եւայի այդ
հարազատ աղջիկը, վեր կացաւ տեղից և նաղանի
քայլուածքով մտաւ տուն:

V°

Բայց միայն Զարագէօղը չէր, որ լցնում էր
մարդու փորք. եազգիւն ու Զաղիտան ևս իրենց
հերթում հանգիստ չէին թողնում իրենց ամուսին-
ներին, ամեն մի տեղի ունեցող երևոյթի ուրիշ կեր-
պարանք տալով՝ հազորդում էին նրանց, և կամաց
կամաց սրաերն ընդհանուրից բաժանում:

Ու քանի գնում նահապետ Ատայի հարսներն
աւելի և աւելի խորթ, նոյն իսկ օտար աչքով էին
մտիկ տալիս իրենց օջախին, միայն մի ցանկութիւնն
— որոշում մտքերում ամուր պահելով.—թալանել այդ
օջախից, որ կասես նրանց համար այժմ օտար լի-
նէր, որքան կարելի է աւելի շատ բան...

Բայց արծուի աչքերի նման սրատես էին Նա-
հապետ Ատայի աչքերը. նա տեսնում էր այդ ամենը

և նույսազգում, որ իրեն մահով վերջ էր տրուելու այդ մեծատուն օջախին. զգում էր իր թանկապին կնոշ՝ Գլուխզարի պակասութիւնն ու անփոխարինելիութիւնն այդ տան համար:

Օօ՛, նըքան դժուարութեամբ և նրախոի անդուկ աշխատանքով էր նա կարողացել կանգնեցնել այդ օջախը, բայց այժմ նըքան հեշտութեամբ կարող էր կործանուել նա: Իրականապէս համոզնած էր, որ շինելը՝ դժուար, տարիների գործ է, իսկ քանզելը՝ հեշտ, վայրկենական: Տեսնում էր, որ իր նահապետական կուսական տան մէջ սրտերն իրարից բաժանուել էին, սէր չկար...

Այդ բաժանուած սրտերը, որ գնալով իրարից աւելի և աւելի էին խորթանում, «իմ ու քուկի» գերի գառնում՝ ընդհանուր առմամբ ցանկանում էին ծերունու մահը, որ բաժանուէին միսեանցից թէ կենակցութեամբ և թէ զործով, սակայն առանձին-առանձին վերցրած ամեն մէկը կարծես նախազգում լինէր, որ տան մեծի՝ նա հազ ետի մեռնելով մեծ բան էր պակասելու իրենից. զգում էր, որ սառն ուղեղով ցանկացածը շէր համապատասխանում վառ սրտի զգացածին:

VI

Ցուքա ու հողմախառն մի օր էր, այնպիսի օրերից մէկը, երբ սաստկութեամբ փշում են հիւսիսային հողմերը, ծառերի գալուկ տերեները վայր ածում, խշացնելով հալածում դէսուդէն, կամ

փոշին գետնից բարձրացնելով ծածկում են երկնքի երեսը, մոխրագոյն, մըսած ամպերը ծխտ որսող բազէի նման շարունակ պտղյա են զործում վլխիդ վերն, և օրը միքանի անգամ անձրև թափելով օդը ցրտացնում, խոնաւացնում: Այդպիսի մի ցուրտ օր էր, որ նահապետ Ատան ձմեռուայ քուբը հագին դրսի դռան շմբին նստած զգաց, որ գլուխը պտղյա է զալիս, աչքիը մթնում են, ականջների զժժոցը շատանում է, ձեռներն ու ոտները խիստ մլսում են, դողդողում, շունչը կտրում է, փոքր հարսին կանչեց.

— Զաղիստան ջան, նրդի:

Հարսն երեսը ծածկած դուրս եկաւ բարերոնած կանգնեց նրա դէմ:

— Քառս, տեղու պատրաստէ, երթամ պառեկիմ. Էսօր քէֆս խարար է:

Զաղիստան անկողինը պատրաստեց և նա մտաւ մահիճ: Սակայն պառեկիլը նրան չօգնեց, քանի գնաց նրա առողջութիւնը դէպի վատն ընթացաւ:

Նրա հիւանդութեան լույսը շուտով տարածուեց գիւղում. «զէշ խարարը թէզ տեղ կհամնի»: Ամբողջ լ... վշտի թափիծով համակուեց:

— Կոհն նահապետ Ատան շատ ծանր հիւանդ է, հա՞:

— Ի՞նչ կխօսի—, բեկուած սրտով լսում էր երկը բորդը:

— Երթանք տեսնելու:

Եւ լ... զիւղի հաստրակութիւնն անողական էր Գարունենց տանից, հիւանդան զնալիս որը տանում էր միրգ, որը աղիղ կերակուր, որը մի ուրիշ նուէր:

Երկու շարաթ՝ այդպէս ծանիր հիւանդ պառկե-
ուց ետոյ մի զիշեր նա քիչ աշքերը խփեց, յան-
կարծ էլի դարթաւ ու իւր մօտ կանչեց բոլոր որ-
դիներին ու հարսներին:

Նրանք շարուեցին ծերունու տեղաշորի շորս բո-
լովքը: Նահապետ Աստին յենուելով թիկունքի ետեր
շարուած բարձերին՝ զող-դող ձայնով խօսեց.

— Որդիքս, ես էս պառկած տեղէս էլ վիր կե-
նալու շեմ. միքանի օրէն հոգիս աւանդելու հեմ. քնիս
մէջ էս սահաթիս մէկ ճերմակ հալուով (շոր) հրեշ-
տակ՝ երևաւ ու ըստ. «Նահապետ, օրերդ մօտեցել
են, հոգիով տալու ես ինսոր, Ով որ քեզ տուել է.
Էս աշխարքի հետ ինչ հաշիւ ունիս՝ վերջացրու,
պատրաստուի»:

Ճրագի լոյսի առջև, կէս զիշերին այդ խօսքե-
րը սարսուռ ազգեցին նրա քնաթաթախ որդիներին
ու հարսներին: Նրանք խորը հառաչ քաշեցին:

— Քանի զիքս ուժ կայ, գլուխս խելք, բերանս
լիզու՝ մօտեցէք որդիքս, խրատս ու օրհնութիւնս
տամ:

Որդիքն ու հարսները չոքէչոք առաջ շարժուե-
ցին:

— Քալէք ջան, իրարու հետ սիրնի մնաք, օ-
ջախս էնպէս ամուր պահէք՝ ինչպէս որ կթողնիմ
ձեղի. «Իմ ու քուկը» միջերէդ հանեցէք, սրտերդ
մաքրեցէք. ձեղնէն ամեն մէկը թող աշխատի օջխի
անունով, օջխի համար, որ Աստծու բարաքեաթն էլ
տներէդ անպակաս ըլլի, սուրբաներդ լիքն ըլլի,
չոփի կարօտ չմնաք: Ազաջան ջան, մեծ որդիս, բա-
լնս, իմ մեռնելս ետե էսոնց հերութիւն զնու պի-

տի էնես, իմ տեղս զնու պիտի բոնես: Հայր Աբրա-
համի օրհնութիւնը վրաէնդ անպակաս ըլլի, մրդի,
նշանածիդ հետ խորին ծերութեան հասնիս, «Սի-
մաւոն ծերունի դառնաս», բոլորին հաւաք աչքով
աշես. ըսել են «անտես, հաւաք տես, դատաս-
տնին շերթաս սկերես»: Դուք էլ բալէք ջան, Աստ-
ծու աջնու խաչը ձեզի օգնական պահապան ըլլի,
«հող բրնէք՝ օսկի դառնայ», «Հոր քարին երթաք՝
կանչի», նշանածներուդ հետ սիրնի մնաք. մի բար-
ձի ծերանաք. Ազաջանին հօր տեղ ընդունէք, հնա-
գանդ ըլլիք. զիտեմ—, հայեացքը հարսների կողմը
ձգելով շարունակեց նա, —ձեր մէջ քիչ անհամու-
թիւն կայ... Էհ... ըսենք հիմի ո՞ր տան մէջը էդ
անհամութիւնը չկայ... համա դուք աշխատեցէք, որ
մոռացութեան տաք, որ չուտով քարուքանդ ըլլիք:
Իհարկէ, բաժնուիլն աշխըրքի օրէնք է, մէկ օք չէ
մէկ օք պիտի ըլլի, էսքան մարդը որ Ազամի զարմն
ու զաւակն են, իրարու հետ որ ապրելու ըլլին
ուր կերթար... ծերունու գէմքը փայլեց անմեղ բայց
իմաստուն ժպիտով.—համա բաժնուիլն էլ իրեն
կարդ ու կանոնն ունի. մենք որ երկու ախաէք էինք՝
բաժնուանք էն ժամանակ, եփ մեղի համար երկու
ձեռք տուն շինեցինք, ամեն բան երկու տան համար
լմինցուցինք. էդ մեր տատական-պապական սովորու-
թիւնն է. զնուք էլ էղպէս էրէք, էղպէս էլ ձեր որ-
դոցն ու թոռներուն յիշատակ (կտակ) թողէք:

Նա նայեց օջախում ծխացող կրակին, քիչ
հանգստացաւ ու շարունակեց.—գնացող-եկողը մնե-
րէդ անպակաս էրէք. միք ըսէ, թէ աւելորդ ծախը
կըլլի. չէ, որդիքս, Աստծուած էնոր տեղ մէկին հա-

գար կուտայ, լաւութիւնը աներէդ ու ձեռներէդ անպակաս էրէք, միք մտածէ, թէ ունեցածներս ու ուրիշն ուտեցնենք՝ մեզի ինչ կմնայ, չէ բայէքս, Աստուած, որ երկնքի հաւքերուն կերակուր կղրկէ իրեն պատկեր մարդուն անօթի չի թողնի, միայն թէ բերններէդ չպակսցնէք էնոր սուրբ անունը: Էլի կսիմ, սիրով ապլեցէք իրարու հետ, մինչև «օրը գայ» բարին հեալը». կաղաչնմ, Աստծու սիրուն, էն տեսակ բաժնուիք, որ հէջ մէկը ձէներդ չի մանայ... կնիկմարդ ըսածներուդ խօսքերուն էլ շատ անկաջ միք դնէ. մարդ էնոնց քանի շատ լսէ, էնոնք էլ մարդու էնքան շատ կսին:

— է՛ է՛ է՛, թուլացած ձայնով գլուխը բարձին թողեց նա, — անուն ըսածդ շատ թանկ աժէ, օջախ ըսածդ էլ էնպէս հեշտութիւնով չի շինուի, համարանդելք մի սահթուայ բան է, «օջախը որ մի անգամ քանդուի՝ պուճախ կդառնայ», էլ չի շինուի. էս «խօսքն անկջներուդ ող էրէք», օ՞օ՞օ, զիտէք ինչքան ծանդը բան է տեսածը կորցնելը...

— Մէկ շորս բոլորներդ աշեցէք, քանի-քանի օջախ էդպիսով մարան ու կրան, ուրիշի գուանը մարապա գարձան. էդպէս եղաւ Մուլոյենց օջախը, հաւի բուն դարձաւ Գալի Ափօի տունը, մարաւ Գողովուոջախը... իմ խրատներս մտքերդ լաւ պահեցէք, որ, բերանս հող ու մոխիլ, դուք էլ էդ որը շընկնիք...

ծերունու խօսքերն այնքան անկեղծ էին, այնքան պարզ, այնքան մեղմ, խրատական ու համոզմունքով լի, որ նրա որդիներն ու հարսներն սկսեցին հեկեկալ. Զարագէօղն անգամ թաշկինակով սըր-

բում էր թաց աչքերը: Թուում էր նրանց, թէ հեկեկում էին ծերունու մահանալու պատճառով. բայց ոչ, դա մի մօտալուտ գաղտնի վշտի նախերգանք էր, որ այդ օրուանից սկսում էր սուզի արտասուրով...

— Դէհ որդիքս, առաջ եկէք, արտասուրներդ սրբեցէք, աղօթք էրէք մեղքերուս համար. թէ մի բան էլ սիմալ էրած ունիմ՝ ներող եղէք:

Որդիներն ու հարսները գլուխները դրին նրա կրծքին:

Նահապետ Ատան շտկուեց տեղում, քիւլահը վայր առաւ գլախից, ձեռները տարածեց նրանց գլխներին ու աղօթեց, — ով երկնքի-գեանի Ստեղծող, մեղանոց բերննվս կաղաչնմ, որդոցս ու հարսներուս ամեն տեսակ փորձանքէ աղատ պահեռ. շատընես էնոնց զարմն ու զաւակը, օրհնութիւնդ տներէն ու տեղերէն անպակաս էնես, չայր Աբրահամի օջախը գարձնես. էս անցողական աշխրքի երեսին նամուսով պահես, որ նամուսով էլ գան, էն աշխարքը կանգնին ահեղ զաւասանիդ առաջը. — ապա աջ ձեռը մէկ-մէկ քսեց բոլորի գլխին, համբուրեց: Նրանք էլ համբուրեցին նրա աջն և արտասուրների մէջ ինեղգուած վեր կացան:

Լուսոյ գոներն արդէն բացուելու մօտ էին, որ լուսոյ գիւղական կոչնակի նիհար ծխկոցը:

Նահապետ Ատան երկիւղածութեամբ երեսը խաշակնեց, աղօթք մրմնջաց և ուղարկեց էրէցի ետիկց:

Եկաւ էրէցը:

Նահապետ Ատան իւր բոլոր որդիներին ու

հարսներին օդայից դուրս ուղարկեց, թեքուեց կողքի վրայ, երկար, շատ երկար խոստովանեց իւր մեղքերը, թողութիւն խնդրեց քահանայից և մի քաղցր թեթևութիւն զգալով ընդունեց հաղորդութիւն:

Միւս օրը, կիւրակի լուսաբացին նա սաստիկ թուլութիւն զգաց, լեզուն թանձրացաւ, հազիւ կարողացաւ որդիներին ու հարսներին խաչակնքել, ու աւանդեց:

Գարունենց տան լացը շատ հանգիստ էր, շատ մեղմ, բայց շատ սրտանց և խորը զգացմոնքով: Երբ ծերունու դագաղը դուրս տարան տանից՝ կասես նրանց սրտերը քաշեցին հանեցին կը ծքերից, տարան թաղելու...

Թաղեցին նրան շատ շքեղ կերպով. և...ի ամբողջ հասարակութիւնն արտասուր թափելով յուղարկաւում էր նրան:

— 0°ο, ինչ մարդ մեռաւ. ափսոս, հազար ափսոս:

— Սադ սանջրդի մէջ մի հատ էր, մի հատ:

— Լնասը կաթէ հոգուդ, նահապետ Ատա, — արտասուրը սրբելով վրայ էր բերում երրորդը, — որ էնքան տարի գեղի իշխան, գեղի առաջաւոր եղար, արդար կառավարեցիր, բոլորի վրայ հաւսար աշքով՝ հօր պէս աշեցիր, արդար էլ մեռար:

— Դժուար է, Ազաջան ջան, շատ գժուար է էդ տեսակ հէր կորցնելը. Աստուած էնոր հոգով քեղի կեանք տայ, — խօսում էր չորրորդը և մի բուը հոդ ածում նրա օծիքից ներս:

Ու ամեն մէկը մի բուը հոդ ածելով նահապետ

Ատայի երեսին՝ շիրիմը համբուրելով ցրուեցին իրենց աները:

VIII

Նահապետ Ատայի պակասելն հէնց առաջին օրից զգալի եղաւ Գարունենց անեցիներին. նրա հեռանալով կասես ամբողջ տունը կերպարանափոխուեց, դատարկուեց. այն սատոը (թախտ), որի վրայ սովորաբար նստած նա անց էր կացնում իւր օրերը՝ կասես որբացած լալիս լինէր տան նահապետի կորուստը. հէնց այդ տեսաբանը՝ դատարկութիւնը սաստիկ աղդում էր նրանց սրտերին:

Առժամանակ լուցին տեղի ունեցող անհամութիւնները, քանի գեռ ծիրունու խրատն ու օրհնութիւնը նրանց ականջումն էր. այնունետեւ վրայ հասաւ ձմեռը. տղամարդիկ մնացին տանը, ուստի և կոիւնին աւելի քաշան, երբ կանայք ազատ ժամանակ և հնարաւորութիւն չէին ունենում կոխներ սարքելու: Ապա վրայ հասաւ գարունը: Գարունենք ժամ առան, նահապետ Ատայի հոգու հացը (քելեխ) տուին և էլի ցրուեցին դաշտը, տունը թողնելով կանանց:

VIII

Մի կիրակի օր Գաբէլն ըստ իւր սովորութեան բաց էր արել խանութը, և այդ մեծատուն հողագործի զաւակը ընկել էր կոպէկանոց առևտրի ետևից:

Ռամիկ գեղջուկին այնքան կսագէ և այնքան ձեռ կտայ թողնել հողագործութիւնն, ընկնել թել ու ասեղ՝ ծախելու ետևից, որքան ոնդեղջիւրին կսագէ թողնել աղատ-արձակ անտառներն ու շամշուտները՝ և ապակեղինի մագաղինում գործակատարի պաշտօն վարել:

Ղարագէօղն իւր մեծ որդուն ուղարկեց մի կոճ թել բերելու:

Գաբէլը, որ «իմ ու քուկի» պատճառով միքանի անգամ դաղուել էր Ղարագէօղից՝ թել չտուեց.

— Թուր է, փարա բերել ես:

— Ի՞նչ փարա. ապլաս ըստ առանց վիարի...

— Զէ, առանց փարի չիլի...

— Ճանը մարդոցին էլ փարա ուղեն.—վիրաւորուած նկատեց Ղարագէօղի որդին, որ մօր պէս մեծարտանի էր, և բարկացկու հայեցքով նայեց հօրեղոր երեսը:

— Հա—մ... դէ որ էղակս է՝ գնա ապլայիդ ըսմա, թէ առանց փարի չի տայ:

Ղարագէօղի որդին վրդովուած հեռացաւ. իսկ Գաբէլը՝

— Ընհ, անճախ (հազիւ) ջիզրս հանեցի, — ատամները կրմացնելով մրմուց:

Այդ վարմունքը Ղարագէօղին այն աստիճան

կատաղացրեց, որ նա իրեն կորցրեց, ու էլ չիմացաւ ինչ անէր, ինչպէս անէր...

— Ի՞նչ էնեմ, հա, հիմի ինչ էնեմ... ալիս, քիչ կմնայ թէ չիպուխն (ճիպու) առնիմ շիմ-շիտակ երթամ խանութը, ինչ որ կայ-չկայ՝ վէր ածեմ, թառումառ էնեմ, ոտքի տակ տամ... հա... ինչ էնեմ... ափսոս որ կիրակի է, էնտեղ մարդիկ կըլլին նստած, Սպաջանը տունն է... Աղաջանը,— յանկարծ կանգ առաւ նա, — Էն եաւա (ապուշ) Յակօն... թաղ հիմի մէկ իրեն անկջովն իմանայ ախալօր արարմունքը, որ մէկ էլ չսէ, թէ «բաժումք չիլիի»... չամա չէ, ես էդ բանը թողնելու չեմ, որ մի կոճ թելը...

Եւ մինչ Ղարագէօղը կատաղած արջի նման ման էր գալիս, լալով ներս մտաւ Ճաղիտայի շորս արեկան որդին:

— Ի՞նչ ես շան ձինդ ցըէ,— որոտաց Ղարագէօղը:

— Աղջիկդ հացս ձեռնէս առաւ... հաց, — լացեց մանուկը:

— Ահան քեզի հաց, ահան, ահան, դէ կէ, դէ կէ, որ կշատնաս, տեսանքը հիմի... գրովս ու մահս տամ ձեզի հացի եեղ, որ ուտէք ու կատղիք, խանթին էլ դուս էնէր...

Մէջքին ու թիկունքին ստացած ծանը հարուածներից երեխան նախ կապտեց, ապա հազիւ շոնչ քաշեց և ետոյ սկսեց մաղիկ-մաղիկ գալ (սաստիկ լաց լինել):

Ճաղիտան որդուն օգնութեան հասնելով դէն մղեց նիրոջը, լոլեց երեխային նրա ձեռքից, զգա-

ցուեց մայրական բոլոր գորովով ու ճշաց.

—Անսատուած, անխիղճ, մէկ տես խեղճ ա-
նասունս ինչ եղաւ, բերնդ վաստըկողդ գոռքազոռ
ըլլի:

Բատական էր այդ միքանի խօսքը.

Դարագէօզն այլ ևս առանց գէսուդէն նայելու
առաւ ձաղտիչն *) ու վրայ վաղեց:

Ձաղիտան հոգու կսկծից դէն ձգեց երեխային,
բռնեց Դարագէօզի սեսաթ մազերից ու պինդ ձիգ
տուեց:

Անլսելի հայհոյանքների կարկտի տակ դէսու-
դէն փուռեցին նրանց վարդն **) ու լաչակը:

Աղաջանը, որ այդ ժամին պատահմամբ տուն
էր վերադառնում՝ փողոցից կանչ ու ճիշը լսելով
ներս մոռաւ, և ականատես եղաւ այդ խայտառակ
տեսարանին: Բովէական դառն տպաւորութիւնից
նրա ծնկները թուլացան, աչքերը մժնեցին, հոգուն
ու սրտին կասես տիրութեան, մաշող մի սկ քօդ
պատեց:

«Հայ վախ հայ, տակը գնացել է», անցաւ նրա
մաքով, և իրեն կրցրած վրայ վաղեց.

—Ի՞նչ կենէք անզգամներ...

Ձաղիտան երկիւզից ու ամօթից փախաւ ծակը
մտաւ, իսկ Դարագէօզը այլանդակ դէմքով մռնչաց.

—Ե՞դ էլ քու պստի լաւ ախպէրդ ու էնոր

*) Ճիպոտ, որով բուրդ են ձաղկում:

**) Գլխի ըրջանաձև դարդ է, որի ճակատի
մասը զարդարում են ծաղկաւոր ասեղնագործով կամ
անկուածով:

կնիկը... մազելրուս դաստին աշէ... էրիկը խանթէն
թել չի տայ, կնիկն էլ քեզի պես ու երես կը ըֆրէ...

Այդ խօսքն ինչպէս մի թոյն Դարագէօզն ածեց
Աղաջանի ականջը, սիրալ...

XI

Աղաջանի սրտից արիւն էր կաթում, երբ դի-
տում էր այդ բոլորը: Մինչ այդ նա գեռ այն հա-
մոզմունքին էր, թէ միայն կանայք են, որ խանգա-
րում են օջախի անդրբութիւնը, որ սրտով բաժան-
ւած են զերդաստանական համայնքից, բայց այժմ
նա կամաց կամաց զալիս էր այն համոզմունքին, որ
կնոջ ասածները մասամբ իրաւացի են, որ եղբայր-
ներն ևս չեն արգաբացնում իւր յոյսերը. «մի կոճ
թելը, մի կոճ թելն ինչ է որ»... սոսկումով յիշում
էր նա և մնում զարմացած, շուտարած, որ ընտանի-
քի մէջ այդ տեսակ «փմուքուկ» էր կատարուել.
ու ակամայ զալիս էր այն եղբակացութեան, որ
միայն ինքը, այն, միայն ինքն էր մնացել նախան-
ձախնդիր հօր օջախին ու անուան, և միմիայն ինքն
էր, որ ամերաժան սրտով նուիրուած նրան՝ ամեն
կերպ աշխատում էր... Ապա երբ պատկերացնում
էր ապագայ բաժան-բաժան լինելը, որի հետեանքը,
ինչպէս ինքն օրինակով զիտէր, լինելու էր աղքա-
տութիւնն ու թշուառութիւնը, արտասուին առնում
էր աչքերը, կրակը ցւում ջանը, և կարօտով նայում
էր լայնածաւալ տուն ու տեղին, որը կասես իւր
վայելչութեան վերջին հրաժեշտն էր կարդում:

—Ալի, ախ, ախ,—հառաշում էր նա, —ինչպէս, ինչպէս չեմ կարայ հասկցնէ, որ վերջը խեղճը մենակ ինքներս ենք ըլլելու. ախ, նահապես Ատա, անուշ հէրիկս, որտեղ ես, գերեզմնիդ մեռնիմ... կարօտած սրտով, այսուած ուղեղով յիշում էր նա, կանչում էր նա:

Այդ դառը խորհրդածութիւնների մէջ մի բովէ միտք արեց նա խօսի եղայրների հետ, աշխատել համովկլու... «Բայց, յանկարծ կանգ առաւ նա, խօսիմ՝ ինչ ըսեմ, ինչ, քանի որ էնոնք էլ հանդիսանին, քանի որ բուն պատճառը էնոնք չեն, պատճառը»...

Ու ցաւած սրտով գալիս էր այն եղբակացութեան, որ արդէն բանը բանից անց էր կացել, բաժանուելն անխուսափելի էր դառել, որ ինքը մենակ այլ ևս անկարող էր զիմադրել վաստ ժամանակի բերմունքին ու նրա ահեղ փոթորկին...

Այդտեղ արդէն հետզհետէ փոխւում էին նրա մաքերը, մաքի մէջ երեան էր գալիս բաժանուելու ձևակիրապութիւնը, որն իւր հերթում անց էր կենում մասամբ ընշասիրականին. «Ճշմարիտ որ, երբ բանն այստեղ է հասել՝ ես ինչո՞ւ պէտք է զրկուած մնամ»...

Աղաջանը գեռես այդ անորոշ տատանուղ անվճռականութեան օրերի զբութեան մէջ էր, որ տեղի ունեցաւ հետեւալ դէսկը.

Մի կիւրակի օր Դիւինի (միջակ եղբօր) ոչխարը սարից եկել էր գիւղ աղ ուտելու. հովիմ եկել էր տուն աղ ինդրելու. Ղարագէօղը մերժել էր նրան ասելով.

—Գլուխս տամ աղի տեղ. ում օշխարը որ է, ով կծախիէ՝ օգուտը չերը կդնէ, էն էլ թող աղի դարձը քաշէ:

Եազգիւլն հովուից առաջ վաղ էր տուել մարդու քով, որ հօտի մօտ էր, իմաց տալու՝ կրակելու: Իսկ Դիւինը, որ գաշոյնը գոտուց կախած, բերանը պատած մի գատ էր, և վաղուց լարուած էր Ղարագէօղի դէմ՝ բովէն հասած համարեց. Էլ առանց դէսուդէն մատիկ տալու դագանակը խլեց հովուի ձեռից և վաղ տուեց տուն:

—Ո՞վ ես զու, ինչացո՞ւ ես էս տանը մէջ, որ իմ օշխրիս աղ չես տայ:

—Ինչի՞ պիտի տամ... Էնքան ջաղցէն կերպ հերիք չէ, հիմի էլ տան աղը՝...

—Այ քեղ ջաղաց, այ, —ցոյց տուեց Դիւինը ուղքերը:

—Եղիկ խաշէ, կնկաղ ուտեցու:

—Մէկ ըսա տեսնիմ, էդ զու մւմ շունն ես էս տանը մէջ, որ...

—Դէ, գիտէ ես... կարգին խօսի. մէծ ախարդ կնիւն եմ...

—Ախարդս էլ ու, քեղ էլ. շան քած...

—Դէ՛ք, չոռլի՛*), արթղ հերիք եղաւ:

Դիւինն այլիս անկարող եղաւ իրեն պահել. «Հոռլի՛», զա մի այնպիսի արհամարհական, ծանը, ծաղրական ածական էր, որ կասէին մի գեալայի կամ մի լակոտի: Նա այդ բովէ կգերազասէր, որ իրեն հայհոյէին, նոյն իսկ թուրը վերցնէին վիզը

*.) Թոքախտաւոր:

Հտորէին, քան «չոռլի» խօսքն ասէին: Նա յօնքերը վրայ բերեց, աշքերը չւեց և կրծտացնող ատամների արանքից ժայթքեց.

— Ղահրա:

«Ղահրամ»: զա թնչ խօսք է. մի՛՛ Ղարագէօղի պէս հայ կինը կտանէր այդ խօսքը. այդ բովէնա պատրաստ էր զրկանքի, ծեծի, նոյն խէլ ջաղացը թողնելու, քան լսել իւր անկարնու սրբութեանն այդպիսի մի արատաւոր խօսք, այն էլ իւր տապրից... օ՞՞՝, այդ անտանելի էր. նա էգ վազը նման մողնչաց, բարկութիւնից կատես ուռնացաւ, մեծացաւ, կրակուտ աշքերը հրհրացրեց, զէմքը ամօթի և բարկութեան կնիքով ծածկեց և երկու ճկուն թռիչք գործելով ճանկերը խրեց Դիւնին երեսը:

Դիւնին մի վայրկեան սարսկց. նա չհասկացաւ ամաշելու պատկառանքից էր, թէ ահարկու սարսափից, որ կործեցին նրա վրայ Ղարագէօղի հուր դարձած աշքերը: Սակայն խսկոյն նա նորից տիրապետեց իրեն, և բռունցքները կծկելով իջցրեց նրա զլսին ու երեսին:

Ղարագէօղն այնպիսի մի սուր ճիշ արձակեց, որ տան ձեղունը թնդաց:

Եազդիւր, որ նոր էր հասել Դիւնին ետեկից՝ կտաղած վրայ պրծաւ Ղարագէօղին և վարդն ու շերիւր ցրիւ տուեց:

Այդ իրալանցման մէջ Զաղիտան, որ դեռ քողը քացած, երեսը պատած չէր՝ վաղ տուեց խանութու չնայած թէ ներսն ավ կայ՝ դռնից կանչեց.

— Գարէ՛լ, հասի, Աղա Ախալըս ու Զաքար Սպլաս իրար սըպանեցին...

Աղաջանն ու Գարէլը կրակի պէս վրայ հասան: Ղարագէօղն Աղաջանին տեսնելու պէս վրփութը բերանին նրա գիրկն ընկաւ ու ճշաց.

— Սըպանէ ինձ, սէլը Քրիստոսին—, զի, սըպանէ, մեսնիմ, պրծիմ, քանց սաղ մնամ ու «ղահրա» խօսքն իմանամ...

— Ո՞վ, ո՞վ—, զահրա բառից զրեթէ կայծակահար ճչաց Աղաջանը:

— Այլի չոռլին, չոռլին, ախակէրդ:

— Թիւրիւ, անամօթ. գետինը մանիս...

— Գետինը դռն մանիս, որ էդ տեսակ տատապ-սըզ կնիկ կպահես...

Խնդիրը նամուսին գալով այլիս ոչինչ չերեաց Աղաջանի աշքին, աչ գիրք, աչ մեծութիւն, աչ խորհրդածութիւն, աչ օջախ, աչ անուն, աչ ապագայ, աչ խեղճ, ոչինչ, ոչինչ. նա վրայ պրծաւ եղբօրը, և սրբան ոյժ ունէր բռունցքը հարուածեց գէմքին:

— Ճերիք եղաւ է, հերիք եղաւ ինչքան որ մինչկ օրս մենծ ախակը դէի (իրրե) պատիւդ պահեցինք, ձէն չհանեցինք. հերիք եղաւ, գա՞—, և մահակն ուսափառն իջցրեց Աղաջանի անկջքոքին:

Ղարագէօղն այդ տեսնելով այս անզամ առանց կանացի արտասուրի վրայ պրծաւ ու սկսեց Դիւնին աքացիով հարուածել:

Գարէլը մէջ ընկաւ, սկսեց մեծ եղբօրը Աղաջանին աղաշել, բաժանել:

Սակայն իզնւր. այդ լոռիկ Եազդիւրն ու Ղարագէօղը միւս կողմում մի այնպիսի ճանկուամարտ էին սկսել, որ իրարից ետ չէին մնում թէ անամօթու-

թեան և թէ կանացի կանչով ու ճիշով համեմուտածքաջութեան կողմից:

Հաղիտան էլ սրանց մէջ ընկառ, և չէր իմանում ինչ անէր. չժողնէր՝ բաժանէր, թէ ինքն էլ խփէր, քաշէր. բայց թէ որին, ինքն էլ շփոթուել էր...

Երեխաների լացը, դրա հետ միացած անլսելի հայհոյանիք կանչ ու ճիշը ներս խուժել տուին զրացիներին, որ հաւաքուած դռանը քաղաքավարութիւնից առժամանակ ներս չէին մտնում: Եւ երբ վերջններս ներս մտան, տեսան վարդ ու լաչակ գետին ընկած, հայ կնոջ գլուխին ու երեսը բաց՝ մերկացած, մազերը զվաներին բգիկ-բգիկ, խօսերի մէջ «ք» տառը թագաւորող, Դիւինի երեսն արինլուիկ, Աղաջանի զլիի սպիից արինը հոսելիս, Գարէն աղաշող, նախատող, խնդրող, հայհոյող, ինքն էլ չիմացող ինչ անող, պատի հարմն անհափուղ, երեսը պատաշած... այդ բոլորը հաւաքուած՝ մի կինդանի դժոխք, մի կատարեալ փողոց...

Դրացիները մէջ մտան, մի կերպ կրակը հանդցըին:

X

Անցել էր հինդ, վեց... տառը տարի: Զատ բան էր փոխուել աշխարհիս երեսին, շատերին էր կուլ տուել սկ հողը, շատերին էր ծնել մայր երկիր... Զատ բան էր փոխուել և լ... զիւզում: Այն շարդարիը, ուր նստած կալեան էր քաշում

Նահապետ Ատան և զիւզական տմբոխի հետ խօսում, այժմ՝ քանդուած էր, նրա մի մասը հաւաքուն էր դարձած միւս մասը չէփլիւկ (աղբանոց). այն զոմի օղէն, ուր ձմեռը հաւաքում նստում էր Գարուննենց բազմանդամ ընտանիքը, և ուր հոգին աւանդեց ծերունին՝ քանդուել, փուլ էր եկել, որի փոս ընկած հողերի մէջ կեզա էր հաւաքուել և երեսանց եղինջ բահել. փողոցի հետ եղած օդայի պատը հմֆից փուլ զարով իսպառ կորցրել էր Գարուննենց տան նմանութիւնն ու տեսքը: Օդայի մօտի եղիների մեծ գոմի կառւրը քանդուել էր և նրա վրայից թափուել էին հողի ու մտներ մարգալիները, խոկ զուրս ցցուած գերանները կատես նրա մերկացած կմաղքը լինէին, որ օտայի միւս պատի զլիին մնացած ծինելոյդի հիտ վեր էին նայում և չորս բոլորը յայտարարում նահապետ Ատայի աւերուած օջախի մնացորդները: Անցեալից միան Կապուտ շունն էր, որ ծերացել, բրդուել, հին վկայ էր մնացել այդ շնորհին ու աւերակներին, որ պատկում էր չէփլիւկի աղքերի մէջ, չորս սաքը պարզած ձգումն արեի զիմաց՝ սառած ոսկորները տաքացնում:

Մի ամառային երեկոյ երկու ձիաւոր զիւզի վերին մասում գէսուղէն էին ման զալիս. նրանք կտուես մի բան էին կորցրել. սակայն Կապուտի խուզու հաջոցից նշանը չէին կորցնում:

— Բարեկամ, մուկիփնտուէր —, մօտենալով նրանց հարցրեց մի տարիքաւոր զիւզացի:

— Օտարականներ ենք, շփոթուել ենք. ուր է Գարուննենց նահապետ Ատայի տունը:

— Նահապետ Ատայի —, ախրավթեամբ հարցը եց
գիւղացին:

— Հրամանիք ես:

— Նահապետ Ատան մեռել է:

— Մեռել է. ափսոս. ապա տունը. դուռը որ
կոզմն է:

— Քուռը փոխած է ուրիշ կողմ:

— Բա նրա որդիքը:

— Որին կկամենաք. նբանիք բաժնուել են:

— Բաժնուել են... մեծին:

— Աղաջանին. Էն էլ մեռաւ. էս երկու-երեք

տասի կինի ինդը գարդից մեռաւ:

— Իսկ միւս եղբայրները:

Կան, համա մէկը մէկն տուփատ (թոյլ) է. էլ
չկայ էն օջախը. մաքաւ... հասաշելով զլովսը կա-
խեց գիւղացին:

— Մարտամաւ... Ափսոս Նահապետ Ատայի օջախ,
հաղար ափսոս —, խուլ հասաշ արձակեցին օտարա-
կաններն ու ձիերի գլուխները դարձրին դէպի խօ-
սող զիւղացու դուռը:



ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽԱԶԵՐ

I

Տմեռուայ կարճ շրջան կազմող արևն արդէն
դէնիթից թէքուել էր դէպի արևմուաք, որ քնից
զարթնեց Արաջոնց Սնեղսուը, թմբած դէմքն ու ուռած
աշքերը երկու ձեռքով պինդ-պինդ շփեց ու ձայնեց.
— Աղջի՞:

Պատասխան շկար:

— Աղջի, ո՞վ կայ էդահի:

Պարձեալ պատասխան շկար:

— Աղջի ձեզի հետ եմ, չէք իմանայ:

— Ի՞նչ է —, վերջապէս միւս սենեակից լսուեց
նրա կնոջ չեղնարի ձայնը, որ օրօրոցի կամարի հետ
կուշ եկած տիրամած մտածում՝ էր այդ օրուայ
դարձեալ ուտելիք շունենալու մասին և ինչոր անո-
րոշ կերպով աղմկի երկիւղ նախազգում:

— Ի՞նչ կայ ուտելու:

— Ոչինչ:

— Ի՞նչպէս թէ «ոչինչ»:

— Ի՞նչ կայ որ ինչ եփեմ:

— Ի՞նչպէս թէ «ինչ եփեմ». ապա քաղցած ենք

մնալու—, վարժուած եղանակով խօսեց Սեղբոսը,
որ սովոր էր տանը ոչինչ չեղած ժամանակ կնոջն
ուղարկել զբացիների մօտ փոխառութեան:

—Խի՞ զ՞ ունեցիր, անսատուած, եղած տեղից
կեփեն, որ չկայ՝ ինչ էնեն... ահօթին խոյ մնակ
դու չես. մենք մարդ չենք... ըսա, ո՞րտեղից եփեմ:

Սեղբոսը կնոջ այդ պատասխանի վրայ փոքը
ինչ մերմայաւ:

—Քսա էլի զբկցներին ուղէ, միքանի հաւիկթ-
փոխ քեր, միլու եփէ, ուտենք, մինչի վաղը կտաս:

—Ուղէ՛՛—, զող-դող ձայնեց Հեղնարը, —կոսս
հեշտ ըլլի ուղելը... էլ երես մնացել է ուղելու.
ամեն անգամ եփ (երր) կումես զբկցիդ չէ թէ հա-
ցի, հապա մէկ հատիկ ասեղի, եփ չի ուղէ տայ,
կտատասխանէ «չունիմ», տես թէ մարդ ինչ կըլլի,
ինչ կըգայ. մարդ տեղի լաւ է էդ սահաթին խլա-
նայ, քարանայ բան չիմանայ, քանց խմանայ ու ա-
մօթուն գետինը մանի, «ուղէ՛՛...

—Ե՞՞ հիմի ինչ էնենք —, կնոջ մենախօսու-
թիւնը յանկարծ ընդհատեց Սեղբոսը—սազ աշխար-
քը ուղելով փոխ առնելով հօլա կերթայ, հիմի
մենք որ ուղենք ինչ կըլլի, ինչ ամօթ բան է. ըսել
ին «ուղողի մի երեսն է սի, շառողի՝ երկու»:

—Մ'ի, զիտնամ թէ էսօր որ երթամ ուղեմ
բերեմ, էգուց կոտնիս, որ տանիմ տամ կերթամ
կուղեմ. համա ինչ էնեմ որ...

—Ճա, ճա, վաղը կըլլի, կլմանաս, վաղը...

—Էդպէս «վաղեր» շատ եմ իմացէ...

—Էշտը կոեմ վաղն անպատճառ—, այս ան-

գամ արդէն կնոջ վրայ ճշաց Սեղբոսը.—էլ մի եր-
կընցնէ...

Հեղնարը լացը կոկորդում իւեղդեց, քթի տակ
անէծք կարդաց, շալը ցցեց ուսին և յամբ, ակամայ
շարժուող քայլերով ելաւ գուրա: Նա կանգնեց փո-
ղոցի մէջ տեղուումը, միքանի բոպէ նայեց վերե, ներ-
քի և երկար խորհելուց ու շափելուց ետոյ մօտեցաւ
մի գուայ և անհամարձակ բաղիւեց:

Ներսից ոտքի ձայն չէլ լսում: Ուշացող գրու-
թիւնը կասեսնրան ուրախացնում լինէր. որ դէմառդէմ
կանգնելուց, ամաշելուց զեռ աղատ էր: Սակայն մի-
նոյն էր, նա զզաց, որ այդ գրութիւնը ներկայա-
նալու էր. միքանի բոպէ սպասելուց ետոյ նորից
թոյլ կերպով բաղիւեց, հեան էլ ցածր ձայնով կանչեց.

—Ճաջի Ապլա, Ճաջի Ապլա, գուուը բաց:

—Ո՞վ է—, վիրջապէս ներսից լսուեց կնոջ մի
հաստ ձայն, որը ցաց էր տալիս նրա ակրոջ հասա-
կաւոր, նոյն իսկ պառաւած լինելը:

—Ե՞ս եմ:

—Դու ո՞վ ես—, նորից խօսեց հաստ ձայնի
տէրն և գուուը բացեց:

Հեղնարն եմ—, արտասանեց վիրջինս և զբա-
ցուհու լիքը և պատկառելի, բայց բարի զէմքը տես-
նելով առաջին անգամ ուղեց ամօթից երեսը շալով
ծածկել:

—Հեղնար Ճան, գո՞ւ ես. շատո՞ւնց է գուուը
կծեծես:

—2է... և սկսեց հեկեկալ:

—Մի լայ, գնոս, մի լայ, արի, արի նես. մի
լայ. էլլի ինչ է եղէ. չըլլի էլլի կուռել էր—, յորդո-

Երեց նրան Հաջի Ապլան և դուռը փակից.—արի նճու,
արի էսպէս փեշի քով, ձեռներդ-ուսներդ տաքցու,
յուրաք է, մսած կըլլիս:

Հեղնաբը նստեց վառարանի մօտ, շալը ետ
արեց զլխից, արտասուքը սրբեց, նորից սկսեց հե-
կեկալ:

—Քա զը մէկ ըստ տեսնիմ էլի ի՞նչ է եղէ:

—Ա՛խ, Հաջի Ապլա ջան, ի՞նչ ըսեմ իմ քրիու
(վասթար) բաղդիս—, հազիւ արտասանեց Հեղնաբն
և ամբողջ մարմնով սկսեց ցնցուել. Նրա ներսը կա-
սե՞ն փուլ եկաւ, մի ինչոր բան քայլայուեց, և ար-
տասուքն անասելի առատութեամբ սկսեց թափուել:

—Քը մի լայ, գառս, մի լայ—, մայրական
գորովով փարուեց նրա զգով Հաջի Ապլան, աշխա-
տելով նրան հանգստացնել:

—Ա՛խ, Հաջի Ապլա, իմ քաշածու Աստուած-
դիւշմնիս էլ ցոյց չտայ. Յոր Երանելու քաշածից էլ
աւելի է. ամեն օր ծեծ, քաշ, կոււ, դալմալալ, աղ-
քատութիւն, ցարտ .. էդ հերիք չէ օրը մէկ էլ
գոնէդուռ ընկնիլ, մուրալ...

Եյդ վերջին խօսքից Հաջի Ապլան հասկացաւ
նրա գալու պատճառը. Նրա զիմացը քիվ (խստ
մօտ) նստելով մի խօսուն հայեացը ձգեց երեսին,
ուսերից ներքն ընկած լաշակի ծայրերը նորից վեր-
գցեց ու դառաւ.

—Ամենքս էլ լաւ գիտենք, Հեղնաբ ջան, որ
զբութիւնդ անտանելի է. համա չնեղանաս ըսածիս,
էսօր-էսօր էս հասակիս քեզի մօր տեղ կուզամ, թող-
նինք որ մօրդ հետ իրար մուրքուրի աղջիկ ենք,
պատճառը ինքդ ես. էլ հիմի ի՞նչ կարաս էնէ. մար-

դը դ է՝ ոկիտի տանիս, ի՞նչ ճար ունիս. Հըպիտի
ըլլիր, որ եղել է. որ «Ճեռովդ էրել ես, հոգովդ էլ
պիտի քաշես», էդ էնպիսի մի բան է, որ փոխել չի-
լի, ծախել չիլլի. պանկդ է, խաչդ է... մինչի գերեզ-
ման մանիլդ պիտի տանիս...

Հեղնաբը հասկացաւ Հաջի Ապլայի ակնարկը.
արտասուքը սրբեց և զլուխը լուռ կախեց: Նա այդ
զբութեամբ կասես արդարացնում լինէր գրացուհու
զիտողութիւնը:

—Մենք էն զիսէն քեզի ըսինք, թէ «Հեղնած»,
մի սխալի. Ապաջոնց Սեղբոսի տակը դարդակ է,
առաջուայ կարողութենէն բան չէ մնացէ. Սեղբոսն
ինքը տարին առած մարդ է, քեզի հօր տեղ կուզայ,
աչքերը կուրացել են, չեն տեսնի. Ապաջոնց ազգի
մէջ ծերութեան հասակին խելքի խառնուիլ կայ»,
չլսեցիր, միտքդ է:

Հեղնաբն աչքերը քաշ արեց վառարանին և
լուռթեամբ նայեց վառուող կրակին:

—«Աւելի լաւ է, ըսինք, մի Հահէլ արհեստա-
տորի առնիս, քանց թէ էդ հալիւրին», միտքդ է.
վերջը խեղճ մէրդ ներմակ մագերն առաւ ոտքդ ըն-
կաւ, թէ «ի՞նչ էնսնք, թէ խօսք ես տուէ, վնասի
կէսէն ետ գառնալը խէր է, մի էնէ», չլսեցիր. հիմէ
տեսանը մեր ըսածի ճշմարտութիւնը. մօրդ արտա-
սուքն ու գութը...

Հեղնաբի փոխառութեան ամօթի ճնշումը կա-
մաց-կամաց փոխուեց եսակեմ ճնշման, որ լոկ նրա
ինքնասէր հալարտութեանն էր վերաբերում. նրա
մէջ դարձեալ խօսեց այն հպարտ ինքնասիրութիւնը,
որ խօսել էր գրանից վեց-եօթը տարի տուած, երբ

Նա դեռ ապապ աղջիկ էր, չքաւոր ծնողների դաւակ, երբ մեռել էր Արաջոնց Սեղբռսի կինը և նրա մէջ խիստ ցանկութիւն էր առաջացել մեռնողի տեղը բռնելու, Արաջոնց հարս կոչուելու:

— Համա չուզեցիր հասարակ արհեստաւորի կին դառնալ, թէ ինչ է Արաջոնց օջխի կինի ըստն:

Հաջի Ապլայի ասածի դառն ճշմարտութեան մէջ չեղնարը կասես քիշքիշ վնտուում—գտնուում լինէր մի տեսակ կանացի անկամորդ նախանձ. դա համակեց նրա վիրաւոր սիրտը. նա մի տեսակ ճնշում զգաց և խօսք չգտնելով արտայացաելու հոգեկան զայրոյթը, մատերն իրար մէջ հիւսեց և ճկրտացրեց:

Հաջի Ապլան հասկացաւ նրա սրտի մէջ առաջած անհաճութիւնը, երեսը շրջեց մի կողմ և հարսին կանչեց.

— Յարէդ ջան, աես էդտեղ հաւկիթ կայ. մի տասը հատ պատրաստէ, հետեւ էլ մէրիշ եղ ու պանիր դիր, հացի մէջ փաթթէ, բեր չեղնարիս:

Մինչ օրս եղած շատ փոխառութիւնների մէջ ամենից ծանրը այդ օրուանն էր չեղնարի համար: Նա աւելի ուրախ կլինէր, որ այդ ըստէ իրեն ասէին «շկայ», մերժէին, քան ատյին ու այդ տեսակ դառն ճնշում պատճառէին: Նա պատրաստ էր այդ ըստէ հրաժարուել ստացած ձուերից, իւղից, պամրից, հացից, եթէ չլինէր այն սպանիչ գրութիւնը, որ տանը ոչինչ չկայ ուտելու, երեխանները քաղցած իրեն են սպասում, մի ուրիշ տեղից էլ յոյս չկար, քան թէ ստանար և տանէր այդ քողարկուած վիրաւորանքը: Նա շալը քաշեց պիկին, չնորհակալութիւն յայտնեց և ելաւ դուրս:

II

Որքան էլ Հաջի Ապլայի ասածները ճշմարտութիւն լինէին, սակայն նրանք իրենց մէջ պարունակում էին մի այնպիսի գառնութիւն, որ թոյնի նման չէին կարող չեղնարի սրտից ու մոքից հեշտութեամբ անցնել: Նրա մէջ հպարտութիւնը թերես այնքան գորեզ չէր իսուի, ինչպէս այդ ըստէ, երբ նա շալը զլովին քաշած, մի ձեռով փեշերը վեր քաշած փողոցի ցեփերից զգուշութեամբ անցնելով զագացագողի, որ ոչ մի դրացի շահսնէր, Հաջի Ապլայի տուածը թէի տակ դրած զալիս էր տան: Նա քանի հետանում էր Հաջի Ապլայից և մօտենում, իրեն ասածով, իրենց «բրիշակին», այնքան նրա ինքնասիրութիւնը մեծանում էր սրտում, կրքելն ուռնացնում, վնիթ վնիթ ացնել տալիս. «Ես ինչ լայեկ բան է, հա, ինչ լայեկ բան է, որ էրիկ ունեցող կնիկ ըլլիմ, զոնէցուռ ընկնիմ հաց մուրալու, էրիկ ու տպայ կշատացնելու... էս ինչ կնիկմարդու պարտականութիւն է»...

Այդ վիրաւոր—բարկացած գրութեամբ նա հասաւ տուն, իւղն ածեց թաւան, ձուերը ջարդեց ամանի մէջ, զգալով զարկեց—խառնեց, աղ արեց, աւագ քուրայում կրակ չափացնելով վրան զրեց, արժաժագրեց, պատրաստեց, տարաւ սեղան:

Կուշ բերած ուսերին մազագուրկ շալը զցած սեղանի մօտ սովալսուկ աշեքերով սուսուփուս իւր մեծ որդու հետ նստել էր Սեղրոսն, և ակամայ հանգատութեամբ սպասում էր միլուին:

— Գէ, զիստեցէք—, իրբ թէ որդիներին է

ասում, քար գլորեց չեղնարը, և թաւայով միւլուն
հրեց սեղանի մէջ տեղը:

Մեղբան հասկացաւ, որ քարն իրեն էր շըպր-
տում կինը, զլուխը աղուէսի նման թեք վեր ծռեց,
խաւարած—կարճատես աշքերով կարողացաւ դիտել
կնոջ կապուտկած՝ այլակերպ գէմքը, որից կիբը,
բարկութիւնը, ցասումը, վիքէը, զայրոյթը, ստրչան-
քը, մի խօսքով կուիւը կաթում լինէր. նա լռեց,
ամօթ է գրականութեան մէջ գործածելը՝ «սուտ էշ
ձեւացաւ», ու լաւաշ հացի փափուկ բրդուճը պտաաց-
րեց լայն թաւայում:

Միջակ որդին, որ չեղնարի զրկումն էր և
խաղալիքը խլելու պատճառով մեծ եղբօրից նեղա-
ցած, երբ յիշեց այդ՝ մօրից սիրտ առած մի պինդ
հասցրեց իրենից մեծի ճակատին, որ հօր զրկումն
էր. մեծ որդին անմիջապէս վայր թռաւ հօր զրկից
և իւզատ ձեռներով հասցրեց միջակ եղբօրը, միքիշ
էր մօրը:

Չեղնարը, որ պատրաստ էր ամեն մի մահա-
նա բանից լցուած սիրտ թափելու՝ մեծ որդուն
մի—երկու ուժեղ ապտակ տուեց ու գոռաց.

—Դէ հերիք եղաւ, է, հերիք եղաւ. գնացել
մուրալով—կուրալով, ամօթուս զետինը մանելով մի
կտոր հաց եմ բերէ էսքան անօթեստանցդ կշաաց-
նելու՝ գուք էլ տեղերդ հանդիստ խչկէք, կերէք, էլ
քթիցս միք բերէ... հերիք եղաւ. օ՛ֆ Աստուած,
մարդ ո՞ւ մի կրակին դիմանայ:

Մեղբան որ թաւէն մաքսապարդելու հետ էր,
դարձեալ զսպեց իրեն, լուութիւն պահպանեց և շա-

լունակից վորի զումարման գործողութիւնը կատա-
րել:

Մեծ որդին այս անդամ ձեռքը չանչեց և մօ
րը քթին—բերնին հասցրեց:

—Դէ, անաստուած, անկշառում, լակոտիդ մի
թողնի, է, վրէս—զլուխս իւզատեց մունառեց. ինչ
մինակ ուտելուզ ետեն ես ընկէ. ես էլ մարդ եմ, է,
էս մէկը զիրկս է, մէկն էլ փոքս հերիք չէ էն մէկն
էլ ուզով կօրըքեմ... ես էլ մարդ եմ, խոյ շուն չեմ.
ինչ ես անօթի... պէս...

—Կաղին արի, շան լակոտ, ինչ ես հըռակէ.
չես տեսնի, կատղել՝ շուն է կարէ...

—Ո՞ւնհ, ես էլ բան չեմ ըսէ. բիլաքիմ վերջին
կեշածդ ըլլի... այս անդամ ճշաց չեղնարն, և այլ-
նս չկարողանալով իրեն պահել, ոկսեց բարձր—
բարձր հերկեկալ, որից նրա ուտելը սաստիկ բարձ-
րանում էին ու իշնում և արտասուքը հեղեղի պէս
հոսում էր այտերից ներքիւ:

Երբէք—երբէք նա այնպէս չէր լցուել ու դա-
տարկուել, ինչպէս այդ օրը, այդ ժամին, անհամա-
պատասխան ամուսնութեան բոլոր ծանրութիւնը
կարծես մարմնացած՝ իւր բոլոր մեծութեամբ երե-
ւան եկաւ նրա կրծքում, ուսանցաւ, մեծացաւ և
հզօրութիւնից չկտուելուելով նրա լանջի ներքիւ՝
գուրս ժայթքեց նրա շրթունքներից ու աչքերից.
գուրս ժայթքեց նրա զրթունքներից զարուած մրմռացող ըն-
վիշաը հալուած արտասուք դառած մրմռացող ըն-
շացքի և պլառած աչքերի միջով կասես նեղուելով
դուրս էր վիժուում, ճնշելով նրա զսպողացող կոկոր-
դուրս էր վիժուում, ճնշելով նրա ամբողջ զգայնութիւնը:
—Եօթը տարի է, ուզիղ եօթը տարի, ինչ ոտք

եմ կոխէ էս «բրիշակը». մի օր, մի սահաթ, մի դախիսա (վայրիկեան) հանգիստ չեմ տեսէ, սէր չեմ վայրիէ. ամեն օր ծհծ, ամեն օր կախւ, ամեն օր հայնոյեանք, ամեն օր հոգս, ամեն օր նեղութիւն, ամեն օր մուրալ... էլ ո՞ր մէկն ըսեմ... ախ—ախ—ախ, մարիկ ջան, ինչ ըսեմ, ինչ ըսեմ ինձի, ո՞ր մազերդ առար առաջս չոքար, ազաշեցիր, թէ «մի էնէ, մի ըլլի» խօսքդ չուեցիր. ախ—ախ—ախ... ու երեսը թաղելով երկու ափի մէջ, ընկաւ սեղանին և սաստիկ հեծկլաց:

Մինչ այդ Սեղոսն արդէն իւր բաժինը, գեռ մի փոքր էլ աւել կերել պլծել էր, չըթունքներն էլ սրբէ: Նա դանդաղ վեր կացաւ տեղից, զոգի փըշընքը թափ տուեց սեղանին ու ուղղուեց գէպի ննջարան, մտքում խօսելով.

«Էն որ կերայ—կշտացայ, օրս անցուցի. հիմի ինչքան կուգէ թող զոայ ու... հաջէ»...

Նա տեղաւորուեց մահճակալի վրայ, հանեց ժխտառիւ, պապիրսս շինեց և ուզեց ծխել. նայեց լուցին տեղումը չէր. շուռ եկաւ միւս կողքին, լուսամուտում նայեց, այնտեղ էլ չկար. բայց սաստիկ փափառ ունէր ծխելու դիմէր, որ լուցին կինը տարած կինէր խոհանոց. սակայն տեղից իջնել գնալ բերելը նրա համար այդ տուղած փորին կատարեալ տանջանք էր. կնոջն էլ բան ասել՝ փախենում էր. բայց անտանելի կերպով ծխել էր ուզամ... ինչ անէր...

—Աղջի, էս էլի ով է սպիշկան տեղէն վերուցէ:

Կինն ուշադրութիւն չդարձրեց:

«Թող հաջէ—հաջէ կինայ. ես էնոր սպիշկա տուողը չեմ», քթի տակ մըմուաց չեղնարը:

—Աղջի, լսու ես, ինչ է. սպիշկա կսեմ, չես իմանայ:

—Խլանաս ու քարանաս. էլի ինչ զրողի է պակաս...

—Զահըռումար ու զահըռուղիլատի, ինչ էս էլի սպիշկան տեղէն վերուցէ, բե՛:

—Ել տար, ոտներդ խոյ չեն չոլիէ. բկի բան ըլլի ինչպէս կվաղես...

Հեղնարի այդ վարմունքը սաստիկ ծանը թուաց Սեղոսին:

—Ի՞նչ... ոտներս չոլիսին... հայ դու անօթու լակոտ—, ճշաց նրա վրայ Սեղոսն, ու ձեռի մուշտուկը շպրտեց կնոջ երեսին:

Հեղնարը, որ գեռ նոյն բռնկման մէջ էր, մուշտուկը օդի միջից խեց, լուսամուտից դուրս շպրտեց ու աղաղակեց.

—Է՞ս սահաթիս ահօթի շունը դնւ ես, որ մուշտուկութիւնով կապրիս. ահօթի, ահօթի... թէ չէիր կարայ կնիկ ու աղայ պահէ, էլ ինչի՞ էսքանիս մեղի տակին ընկար, հա, ինչի... ինչի քու, ծերացած ու աղքատ հալովդ հաճոցիդ համար պատկուար, էսքան տղայ վաստիցիր... դեռ հալա կգուառ էլ, հա. լիրը, լի՛րը, լի՛րը—, երեքնեց նա և բուռնցը օդում շաղժնց:

—Ոտքդ կոտրեմ, նտքդ, որ էս տանը ոտք չըկիսէիր, որ եկար—չեկար՝ «չիքը» հետդ բերիր. թէ չէ իմ տունս էսպէս էր. ինչքան որ չըլլիր՝ քեզի պէս հազար ահօթի շուն կըկշտացնէր: Աբաջոնց Սեղուէս հազար ահօթի շուն կըկշտացնէր:

բոսի առնը, Աբաջոնց Սեղբոսի ահնենը, Աբաջոնց
Սեղբոսի օջախը սաղ Ախալքալակի սանջին էր
յայտնի... չայ վախ հայ—, յանկարծ տիրամած հա-
ռաշեց նա և արտասուքն առաւ աչքերը, երբ յիշեց
իւր մօտիկ անյեալը, որ տունը լիքն էր ու չին Աստ-
ծու տուած ամեն բարիքով, ծառաները զոյգ-զոյգ,
խանութն ու առետուը սաղ քաղաքում նախանձ
շարժող, փողն տուատ ջրի պէս, միւլքերն իրենց
տեղը՝ անունը՝ խօսուող, զիլքը՝ բարձր, խօսքը՝
կտրուկ, ինքը՝ առողջ...—ի՞նչ օրէն ի՞նչ օրն ընկայ,
որ էպիս անօթու լակոաներն էլ վրէս խօսին—, ու
աչքերն առաւ արտասուքն, և երկու ձեռով պինդ
խփեց ծնկներին:

—Ես էլ բան չեմ լսէ. վերջին ծխելու ըլլի...

Կնոջ այդ խօսքերի վրան Սեղբոսի արտասու-
քը յանկարծ փոխուեց բարկութեան: Այդ երկորող
անգամն էր, չեղնարն այդ օրը ցանկանում էր նրա
ոչընշանալը, մահը, որ ետոյ ինքը սկ փուշին բուկը
կապէր, այդ սուտ սկի տակ նստէր, սիրան ուրա-
խացնէր. նա զգաց այն ամենածայրայեղ, անպատճէ
վիրաւորանքը, որ իւր կինն իրեն մի աւելորդ բան
համարէիլով, անէծքի բերան էր տալիս, իր մահն էր
ցանկանում...

—Ես քեղի տնեն տամ, տեղ տամ, հաց տամ,
անեն տամ, որ գնէ, գնէ, զու աղքափ լակոտ, շնոր-
հակալ ըլլելու տեղակ իմ մահս ուղենաս, համ. իմ
մահը, որ, որ, որ... ետոյ... ու վրայ վաղելով մի-
քանի բոռնցք իջցրեց նրա թիկունքին ու զիլին:

չեղնարը կանացի մի սուր ճիշ արձակեց և
հոգու կոկծեց զէն հրեց նրան:

Սեղբոսը վեր թռաւ ընկած տեղից, խլեց ձեռ-
նափայտն ու վաղեց կնոջ վրայ:

Չեղնարն աշխատելով նրան մօտ չթողնել՝
գետնից վերցնեց ջարդած վայտերից մէկ փոքր կը-
տոր, չարակց ամսանու երեսին:

Փայտը սուր ծայրով դիպաւ նրա աչքի տակը,
և արխւն սկսեց զուրս հոսել:

Սեղբոսը կրակ կտրած ուղեց բռնել, ջախջա-
խել նրան, սակայն չեղնարը բակի դռնով վախաւ
դուրս:

Սեղբոսը զուրս վաղեց նրա ետեկց և անլսե-
լի հայհանքով փողոցը ներկեց:

Երեխաները տեսնելով ծնողների ծեծն ու քա-
շը, դարձեալ բարձրացըն իրենց սովորական կա-
կանը:

Դրացիներն այդ աղմուկի վրայ զուրս թա-
փուան աներից:

Սեղբոսը նկատելով նրանց՝ ևս առաւել մեծ
կատաղութեամբ սկսեց ուշունց տալ, արնոտ աչքը
ցցնել ու զուռալ.

—Ես կնկայ շնորհք է, հա, զուռ ու դրկից, դնէք
լսէք, էս կնկայ շնորհք է, որ ամեն անգամ ինձի կր-
մեղղըըք. հիմի ինքերդ գատաստան էրէք. էս կըն-
կայ արանք է, որ մարդուն փէտով ծէծէ, աչք-երես
արխւնուիկ էնէ...

Դրացուհիները նկատելով պատի անկիմում
կուչ եկած, թագ կացած չեղնարին, աշքով նշան
արին ծածուկ կինալու, լուռ մնալու, ու կանչեցին.

—Վայ քսուանաս չեղնար, վայ աչքիդ լու-
որ գնւս զայ կնիկ, վայ գետինը մոնիս հարս, էդ

ինչ ես էրէ Աղա-Ախալօբու աչք ու երեսը, վո՞յ փր-
շանաս աղջիկ, վո՞յ Աղա-Ախալար, մեր աչքի լն-
ուս դուս գայ, էդ ինչ է աչք ու երեսդ, վո՞յ մի նե-
ղանայ էն անզգամէն, պահպանէ քեղի, եարեկ ցըր-
տին մի տայ, նես գնա—, համոզելով մեղմացըին
նրան կանալը և իրենց քմծիծաղ, կեղծ ճշմարտա-
խօսութեամբ փողոց ընկած խայտառակութիւնը զը-
ցին ներս:



ԿՐԱԿԵ...

I

Պատառոտած հաստ ու բարակ ամուերը հա-
րաւային քամու առջի երկնքի երեսին իրար ետեկց
վազ տալով՝ մզւում հեռանում էին դէսի հիւսիս,
երկը երեսին մերժ՝ անօռը ստուեր, մերժ՝ արեի
ճառագայթներ թողնելով: Դիանց ներքի նորեկ գա-
րունը լայն բայ արած իւր թեսերը՝ ընդգրկում էր
համայն աշխարհը, ամեն տեղ շոնչ ու կենդանու-
թիւն տարածելով: հալում էր ձիւնը, կարկաչում
էր առուակը, դալարում էր երկիրը, երգում էր թըռ-
չունը, մայում է զառը, և զարնան այդ բոլոր զա-
ւակները զարունն երգելով՝ գուրգուրում էին մարդ
արարածի աշքն ու լսելիքը, նրա ինքնածին ուրա-
խութեան հետ իրենց ուրախութիւնը միացնելով:

Սակայն այդ ինքնածին ուրախութիւնը չէր
փալում այն մի խումբ մարդկանց երեսին, որ նըս-
տած էին Յ... գիւղի իւղբաշու տան կարում: Նրանց
շրթումիները լուռ էին, ճականները կիճուտ, աշ-
քերը մտախոն և յառած հեռուն, դէսի քաղաքի ճա-
նապարհը:

Ինքը, Յ... գիւղի իւղբաշին նրանց մէջ տե-
ղումն էր նոտած: Նա ձեռը տարած ճակատին եր-

կար դիտում էր հեռուն, քաղաքի ճանապարհը, որ
յանկարծ դասաւ.

—Հիշն, այ, այ, սարի ետեխն իրեք ձիտոր
դուս եկան:

—Ո՞ւր է—, անմիջապէս վրայ բերեց նրա մօ-
տինը, և սկսեց ուշի-ուշով դիտել հեռուն:

—Այ, այ, էսպէս մատիս դիւչով (ուզու-
թեամբ) աշէ:

Այդ խօսակցութեան վրայ մնացածներն ևս
ձեռքերը տարան իրենց ճակատներին և խօսեցին.

—Հա, զորթ որ, երկուսը առջնէն կուզան, էն
մէկն էլ ետեխն:

—Էնմիք են:

—Զէ է, էնոնք շնն, միք սխալի:

—«Զէ» կսես հըմը՝ էնոնք են:

—Ո՞ւր է, թէ էնոնք են:

—Բա՛ շնս տեսնի ետեի ձիտորի ճերմակ ձին.
Էդ ճերմակը չափառի ձին է:

—Էն տեսնյ:

—Մէկի վրէն-զլուսը որ կպլալայ՝ էնիկ խե-
լառ պրիստաւն է:

—Բա էն ճերմակ հալաւ հազածը:

—Էն էլ գոխսուր կըլլի:

—Ճանը՛մ, միք սխալի. չափառն եփ գնաց,
եփ իմաց տուեց, եփ եկան:

—Է՛է, Մուքայիլ ջան. «Գէշ խարարը թէզ
տեղ կհասնի»:

—Հըլը տեսէք, հըլը տեսէք թէ ձիանն ինչպէս
կըշեն, կսես կրակ փախցնելու կերթան:

Խոզաշին, որ մինչ այդ գեռ ուշի-ուշով դի-

տում էր եկողներին, երբ համոզուեց նրանց ով լի-
նելը, և տեսաւ նրանց մօտենալը՝ դառաւ.

—Դէհ, էլ զալմաղալ միք էնէ, էնոնք են. էդ է
հասան. իջէք ցած՝ սրճվ կայնեցէք:

—Աչքերս լուրտս... տիրամած վրայ բերեց մի
սուսլիկ գիւղացի և իւր գրացիների ետեկց կտու-
րից ցած իջնելով կանգնեց պատի հետ:

Զիաւորներն արագ երիշով հասան գիւղ և
կանգնեցին իւղբաշու գռան առջև:

Դիւղացիները վայր տուան փափաղները, ձեռ-
քերը ծալեցին կրծքերին և երկուտակ խոնարհու-
թիւն տուին:

Եկուորները վայր լուրտն ձիերից: Միքանի
ջանէլ գիւղացի վաղ տուին դէպի նրանց և բանե-
ցին ձիերի սանձերը:

—Նու, իւղբաշի—, բարեկուց ետոյ դառաւ
պրիստաւը—, որտեղ են հիւանդ անասունները,

—Եղոյենց Մկրտիչ կոնն, աղա ջան, էնոր
մալն է:

—Ո՞ւն է Եղոյենց Մկրտիչը:

—Է՞ն է, աղա պրիստաւ, այ էնէ—, ձեսի
մարտկով Եղոյենց Մկրտիչն ցոյց տուեց իւղբաշին:

Մկրտիչը հեռում կանգնած՝ կասես գամուել
էր. նա այնպիսի մի լքեալ աշքերով էր նայում պը-
րիստաւին և անասնալոյժին, որ կասես նրանց ձե-
սից աղատութիւն խնդրում լինէր, որ իրեն ձես
չտալին, թողնէին հանդիսա...

—Տօ Մկրտիչ, առաջ արի, ինչ ևս ձեռներդ
չերդ դրէ, կայնէ:

—Մարդու ձենը կենի, որ ձէն հանէ. հեշտ

Է... յածը ձայնով խօսեցին ամբոխից մի երկուար: —Գամ, խղբաշի ջան, գամ, ինչ կարամ ըսէ, դամ—, հաղիւ լսելի ձայնով թոթովեց Մկրտչը: —Էս է, աղա ջան, այ էս է—, նորից Մկրտչին մտրակով ցոյց տուեց իւղբաշին:

—Օ՛խի, եարազն Աստուած, էս կրակը ուաջուց հըմը իմ պիխուս պիտի թափէիր—, մրմռաց Մկրտիչը, և աշքերը քամելով առաջ շարժուեց: Խելառ կոչուած պլիստաւն այդ օրն այնպէս խիստ ահարկու չէր, ինչպէս ուրիշ անզամները, երբ պաշտօնական գործով գիւղ գալով՝ բարձրացնում էր աղմուկ, գործագրում էր խստութիւն, անգամ ծհծ, երբ իրեն չէին հասկանում, չէին լսում. իսկ այժմ տեսնելով գիւղացիների վշտալի հայեացքը՝ նրա սիրտը բարախեց ցաւակցական խորին կըսկիծով, զգաց մի ջերմ կարեկցութիւն և մեղմօրէն դառաւ Մկրտչն.

—Նու, եղբայր Մկրտիչ, երթանք անստուններդ ցնյց տուր:

—Ցնյց տամ, աղա պրիստաւ, ցնյց տամ, ինչ կարամ ըսէ, ցոյց տամ—, և յամբ, կասես իրեն չհնազանդուող քայլերով ընկաւ առաջ:

Մկրտչի կինն ու որդիքը, որ գուան ետեր կանդնած ինչոր անբացատըելի երկիւղով նայում էին դուրս, երբ տեսան խելառ պլիստաւին մտրակն էլ ձեռումը, հետը սպիտակ շոր հագած՝ քթին պինսէ հազցրած անասնաբոյթին, իսկ դրանց առջեն ընկած, ճիշը ծուած իրենց տան մեծին՝ Մըկրտչին՝ սարսափով պաշարուեցին. «Վու, Աստուած ջան, էս ինչի՞ համար կուզան», ու շտապ

քայլերով հեռացան թոնրատուն, և այնտեղից, վըշտից արձան դարձած, երկիւղը սրտերում սկսեցին դիտել, թէ ինչ էին անելու նրանք:

Գոմի գուռը բացուեց և ներս մտան պրիստաւը, անսամնաբոյթը, իւղբաշին, նրանց հետ և երկու կիւղայի:

Գոմում կապած, կանգնած էին մի կով, մի արջառ, մի գետատակ և մի մողի, որոնք ականչները թափած՝ կախ դցած, կիսափակ աչքերով նայում էին գետնին, և կասես մարած դրութեամբ մի յաւիտնական քնի—հանգստի սպասում: Նրանք ոչ յարուճում էին, ոչ շարժւում. միայն փոս ընկած փորոճում էին, որ արագ չնշառութիւնից շուտ կրեն էին նրանց, որ արագ չնշառութիւնից շուտ ենաւմ-իշնում էին. նրանք դողում էին. կորացրած մէջքերը վեր ուղղած՝ հաղիւ կարստանում էին իրենց պահել չորս ոտքի վրայ և յաճախակի ատամները կրծտացնում. լսլիւն լորձունքը սարդոստի թելերի նման միքանի տեղերից կախ էին ընկել նրանց հուալ տուած դոժոտ բերաններից. ընկել նրանց պահել չորս ոտքի մինչեւ անգամ չկարողանալով գեաղակն ու արջառը մինչեւ անգամ չկարողանալով իրենց տեղերում կանգնած պահել՝ թեք էին ընկել պատի հետ. նրանք սոպէառոպէ լուծում էին:

Անաստնների այդ գրութիւնը տեսնելուն պէս անսամնաբոյթի դէմքի արտայատութիւնը փոխուեց. նա խուլ արտասանեց.

—Լաւ նշաննել չե՞ն...

Ու հրամայեց ջերմաշափերը դնել նրանց պոշերի տակ:

Միքանի ըոսէ սպասելուց յետոյ երբ ջերմաշափերը հանեցին, նայեց՝ համարեա ճշաց.

— 2 ումա:

— 2 ումա —, շփոթուած այդ խօսքերից կըրկնեց պլիստաւը:

— 2 ումա, այն, և այն էլ բաւականին ժամանակ է —, պատասխանեց անասնարոյժն և յանկարծակի երևան եկող բարկութիւնից միքանի անհանգիստ շարժում գործեց կանգնած տեղում, և ապա դուրս զարով պլիստաւի և միւսների հետ՝ պատշաճաւոր տեղեկութիւն գըեց իշխանութեան հարկաւոր անօրէնութիւն խնդրելով:

2 ափառը թուղթը ծալեց, զրեց փափաղի ծալքը, նստաւ ձին և թոցքեց քաղաք գտաւապետին:

— «2 ումա» ըլթօ, աղա ջան —, պլիստաւին մօտենալով վախիկուով հարցյըց իւղաչին:

— 2 ումա —, տռաջ անցաւ անասնաբոյժը, կարծելով, թէ զիւղացիք տեսած չկան այդ հիւանդութիւնը, — չումա՝ զա մի տեսակ վատ հիւանդութիւն է, որ ընկնելով անասունների մէջ՝ մնե վնաս է հասցնում նրանց:

— չամա —, երկարացըց իւղաչին, որ լաւ զիտէք հիւանդութեան ինչ լինելը, բայց չհասկանալով, թէ ինչ թարգմանի «չումա»:

II

Անասնաբոյժը դեռահաս ոռւս երիտասարդ էր, զիւղագիւաց, շուտ տպաւորութիւններ ընդունող, որն արտափայլում էր նրա մանկութեան կնիք կըող աղուամաղ դալուկ գէմքին, որպիսին բոլորուած էր մինչեւ ականջների իշնող գանգուր, շէկ մաղերով:

Կառավարութեան կողմից նրան օգնական նըշանակուեց կարճահասակ, ճաղատ զիսով, մնծուուծ անհամաշափ գէմքով մի լեհ, որի փոքր աչքերի արտայայտութիւնն նոյնիքան անդիւր էր, որդքան զիւրական առաջինի պլարզ — կապոյտ աչքերը:

Ոստիկանութեան կողմից նշոնակուեց մի ներկայացոցիչ, դա աղգավ թուրք էր, ծագումով բէզ, ինքն արիստոկրատ ընտանիքից, իմօտոյ ծանօթզիւղական կւանքին, զիւղացու նիստ ու կացին, ցաւին ու ուրախութեան և անտեսական բոլոր խնդիրներին. Այն ընդհանուր համակրանքը, որ նա ձեռ էր բերել Զաւախիթում, կարծես պատկերանում էր նրա պատկառելի և զրաւիչ գէմքի վրայ, որը միշտ ուրսախ էր, միշտ սիլուն:

Այդ պաշտօնական երեք հոգուց բազկացած մարմինը Յ... զիւղի միջից հասարակութեան համաձայնութեամբ ընտրեց երկու ներկայացուցիչ իրենց հետ հաւասար ձայներով, հաւասար իրաւունքներով: Այդ հինգ հոգուց կազմուած մասնախմբի նախագահի պաշտօնը վերապահուեց Ախալքալաք գաւառի անասնաբոյժին իրեն:

Մասնախումբն այնուհետև գնաց առաջուց ստակած երկու անասունի ընկած տեղը ախտահանութիւն կատարեց, չորս բոլորը պատնէց քաշեց, արգելեց նրա մօտով երթեկութիւն կատարել, հրամայեց զիւղի արկերեան մասում, բարձրավանդակի վրայ մեծ-մեծ փոսեր փորել՝ զերեղմաններ պատրաստել սատակող և մորթուելիք անասունների համար. հրամայեց Եղոյենց Մկրտչի բոլոր անասունները գոմում կապած պահել, նրա տան բոլորքը գե-

բաններով շըջապատել, այն տեղով անցուղարձը
փակել: Խսկ ուրիշ միջնց, դեղ, դարման... Ոչինչ...

III

— Մկրտիչ, ինչպէս են մալերդ (անասուններ):

— Տունդքանդուի Մոսէէէս, բան չեմ ըսէ, հա,
որ էս դուլումը զիմուս չըերէիր,— վոխանակ պատաս-
խանի, այրուած սրաով անիծեց Մկրտիչը, և կէս
խելագար, կէս ապօւշ աչքերով նայեց իւր տունը
պարփակող—գերող հասա գերաններին:

— Դու ինչի՞ էդ տեսակ կխօսիս, չիմ հասկը-
նայ. Մոսէսն ինչ էրաւ. էս ցաւը որ կայ՝ Աստուծ-
մէն եկած դուլում է—, Մկրտչին պատասխանեց ոչ
այնքան բարձրահասակ մի չափահաս զիւղացի, և
նայեց միւս նստողների երեսին, թէ ինչ արձագանդ
կտային նրանք իւր ասածին:

Մկրտիչը, որ իրեն անձն ուտող վշտից հա-
ւել ու մաշուել էր, որ անասնարոյժը գալուց, միւս
առողջ անասուններին էլ զոմում հաւաքերուց ետոյ
մի օր չէր անցել, որ երեք անասուն էլ նոր էին
վարակուել՝ կասես կախ, ծեծ, լաց, աղմուկ, ար-
տասուր, անկարգութիւն, մի այդ տեսակ բան էր
վնատում, որ վրդովուէր-բորբոքուէր, սրտինը-հո-
գունը թափէր՝ գոռաց.

— Ի՞նչպէս, թէ կխօսիմ. մէկ մտիկ էրէք, իսէր
Աստծու, մտիկ էրէք, է... երթայ հիւանդ մալլ թուր-
քերէն րերէ, զիւղի մէջը հիւանդութիւն ձգէ, ետե
էլ կայնի գոռայ, թէ «ինչի՞ չխօսի՞ս...»:
չաւագուած, պատի տակ կուչ եկած ամրոխը,

որին հայելու պէս յայտնի էր ապագայ գալիքը,
որովհետեւ այդ առաջին անգամը չէր, որ այդ տեսակ
հիւանդութիւն զիւղն ընկնելով հեշտութեամբ չէր
դուրս զալիու աւելի իւր մտքի, իւր սրափ հետ
էր խօսում, քան Մկրտչի ու նրա խօսակցի կուրը
լսում՝ մի երկիւղալի, բայց բարկացկոտ հայեացք
ձգեց Եղոյենց տան վրայ և սարսափեց, երբ նրա
ուղեղով անցկացաւ այն սովանիչ զիտակցութիւնը,
թէ այդ միւնոյն դարզը իրեն էլ էր մէկ օր սովա-
նում՝ մանաւանդ, որ նշաններից ճանաչում էր ա-
նասունների այդ հիւանդութիւնը, որ նրանք կուչ
են գալիս, գողգողում, բերաններեց թանձը դոժ է
վագում, մարած աշքերը բների մէջ հազիւ են շարժ-
ում, մազերը վերաները բիգ-սիլ են կանգնում, վո-
րերը գնում է... կանաչագոյն լուրձիւնախառն հեղուկ,
որ մալի մայխսի. (Ծրալի քակոր). Նման չէ, այլ
ինչոր մի ուրիշ բանի, որի անունը մարազ է:

Քանի-քանի անգամ այդ միւնոյն ցաւը գեղ-
ջուկի գոմերն էր գատարկել, այդ գատարկութիւնը
նրանց աղի արտասուրով լցըել-թացացըել՝ խլել-տա-
րել մարալ եղներ, շլըին արջառներ, նախշուն կո-
վեր, սար գոմէչներ, ջէյրան հորթեր, եղնիկ երինջ-
ներ, ժիր մողիններ, խլել-տարել, նրանց զիտակնե-
րով ծածկել զիւղի չորս բոլողը, ու անցեալի դառն
յիշտակ թողել նրանց սրտերում կոկիծ, արտերի
թմբերում՝ ճիւաղ կմախքներ...

— Ի՞նչ, իրեն մալլ կսատկի հերիք չէ զիշերը
ծածուկ կաշին կքերթէ, ջանդակը մաս-մաս կէնէ տա-
նի առուն կցըէ, որ մեր մալն էդ ջուրը խմէ, հի-
ւանդութիւնը մեր մալի մէջ էլ տարածուի...

—Գլուխն էլ տանի Մկոյենց լսոտի գէզի մէջ կըդնէ—, յարեց Մկոյան մի ուրիշ գիւղացի,—ու խոսն ուտեն, էնոնց էլ մալլ հիւնդնայ:

—Հը՛ք... գիտէք ինչ ուե օձն է էդ Մոսէս լսածներդ, ինչ անկամորդ դեք. իրեն մի ջուխա եղը սատկելու համար կուրէ, որ սաղ գիւղի մալլ ջարդի... Միտեղ էլ ըսել է, չէ, թէ «իմ եղներս սատկելին ետև, կուրէ սաղ գեղը վէր անցնի»... ետև էլ մենք դեռ վեր կիենանք, կսենք, թէ «Աստուած, վրէներն բարկացիլ է»։ ինչ ձիւն տայ զլխուն Աստուած, ինչ էնէ, եփ որ էդպէս արարմունք տեսնի՞ք բա չի՞ բարկանայ:

Մովսէսի պաշտպան գիւղացին լսեց, մանաւանդ երբ յիշեց այն տեսաբանը, թէ ինչպէս Մովսէսը վիզը կտբած հաւի պէս իւր ստատկած եղների շուրջը գետինները պոճկուելով աղլողում լայ էր լինում, անիծում էր իւր կեանքը և իւր բաղդը, որ երկար, շատ երկար տարիներ ուրիշների գուանը ծառայելով հաղիւ էր իրեն համար մի տուն շինել, մի բոյն հիւսել, պսակուել, օջախ սարքել, մի կով ու մի զոյգ եղ ձեռք բերել, մինչեւ գարնան դոնինքի բացուիլը սրտատրով ստասել, որ իրեն բաժին հասած միակ արտը վարէ, ցանէ, ինքն էլ օրինաւոր ծուփ հաշուի, կտուրից մուխ զուրս հանէ, խառնուի դուռ ու զվկցի հետ, մի աղատ շունչ քաշէ, մոռանայ այնքան տարուայ տանջանքն ու զրկանքը, որ կրել էր օտարի գուանը մշակութիւն անելիս-ծառայելիս, յաղթէ ձախորդ հանդամանքներին, թշնամու աշքը հանէ, անուն բարձրացնէ, մարդու շաբը մտնի... բայց անսպոք արհաւիրքը սպանել էր այդ

բոսէ նրա համար ամեն ինչ, և յոյս և հաւատ, և ծիլ և ծաղիկ... Յիշեց նրա այն խօսքերը, որ նա վիրաւոր որսի պէս մռնչում էր, «կորաւ, կորաւ, ամեն ինչ կորաւ, էլի աղքատ, էլի քեսովալ, էլի ուրիշի գուանը զնւմշանկ...» որ ծեծում էր կուրծքը, քաշում էր մազերը... Յիշեց, թէ ինչպէս իւր մօտիկ արնակիցը հօրից ու մօրից որք մընացած, անտէլ-անտիրական իւր մանկութիւնից իսկ անդագար զրկանքների էր հանդիպել նախ իւր խընամատարների կողմից, ապա զրացիներից, իւղբաշուց հարուստ և ուժեղ բռունցքներից, որոնք իրեն մի մեքենայ էին բանեցըել նրան իրենց գործերում, մահապուծել հաղիւ նրա նոր կաղմակերպուող ոյժերը... Եւ շատ անդամ էլ տմենափոքը առիթից զայրանալով ու անէծքով ներկել էին նրա օխտը պորտը:

Եւ յիբաւի այդ բոլորը զուր չէր հաւաքուել նրա հոգու խորըում զիղուել, մեծացել և մի դառն թոյն պատլաստել երբեկցէ թափուելու համար. և այդ թափուելու էր ետոյ, իրեն ժամանակին. բայց ձախորդ հանդամանքների շնորհիւ առիթն այժմ այդ ճանապարհով էր ներկայացել:

Յիշեց, թէ ինչպէս Մոսէսն իւր անվերագառնակի կորստի պատճառով սիրաը զժովք դարձրած, միաքը թոյն՝ զիշել ժամանակ, մի այլանդակ զէմքի արտայատութեամբ, որ զեռ մինչ այդ նրան պարզ չէր, վշտից էր, թէ նախանձից, արեց այդ չարաշէր, վշտից էր, թէ նախանձից, արեց այդ չարաշէր, վրէժինդիք քայլը... յիշեց և մի երկդիմի թակամ, վրէժինդիք քայլը... յիշեց և մի երկդիմի թառանչ քաշելով լսեց:

Սակայն ամբոխը դեռ լուռ էր. նա շուարած

նայում էր շաբունակ Մկրտչի դռանը և մաքում խոսրակում, «ուշ թէ շուտ այդ գոնից, ահա այդ պարփակուած տեղից դուրս է զալու ցաւը և համակելու ողջ գիւղը». և այդ գիտակցութիւնը թունառում էր նրան ինչպէս օձ, և ծակում ինչպէս նետ:

— Օքէնքի որ ընկնի, գիտես Մոսէսին ինչ կէնն: Սիրիական, ես եմ Քրիստոսս, սիրիական—, ինքն իրեն հարց ու պատասխան տալով առաջ տարաւ Մկրտիչը:

— Ե՞ն, Մկրտիչ ջան, էդ էնելէն ինչ դուս կուգայ, մի բան չպիտի ըլլիք, ըլլելէն ետև անօգուտ է—, մեղմ ու հեղ ձայնով Մկրտչին հանգըստացրեց մի տարիքաւոր գիւղացի և մի բարի խոսուն նայուածք ձգեց նախ նրա և ապա բոլորի երեսին:

Տարիքաւոր գիւղացու խօսքը կուտակուած կըրքերը ցրեց, սրտերը մեղմացրեց:

— Լաւ կսէ Պուլպուշ-Ամին, հապա ինչ է. գիշութիւնն ինչ գուտ կուգայ. ըսել են «արիւնը ջըրով կուտան, արիւնը արնով չեն լուայ». էրաւ Մոսէսը, թող ինքը գանի Աստուծմէն:

— Ո՞էկ էլ, որ էն մարդը զիանար, թէ թուրքերէն առած եղը հիւանդ է, խոյ չ՞ը խելլուէ, որ առնէր, զեղ բերէր, սատկիր, որ ընկերն էլ հետք սատկեցնէր—, Պուլպուշ-Ամու խօսքերից սիրտ առած նորից ասաց չափահաս գիւղացին, որ մինչ այդ չատ անհամ դրսւթեան մէջ էր զգում իրեն:

Բայց Մկրտիչը տակաւին իւր սրտի մորմոք-ման հետ էր:

Այդ ժամանակ անսպասելի կերպով, արագքայլերով նրանց մօտեցան անամնաբոյժնէրն ու բէզը,

և հարցը ին Մկրտչին ու զիւղի կողմից ընարուած երկու ներկայացուցիշ-վկաներին:

Տիրացու Անտիկն ու Նին, որ ընտրուածներն էին, Մկրտչի հետ առաջացան զէպի նրանց:

— Արշուած է Մկրտչի անասունները կոտորել, զնանք—, կասես Մկրտչին գուժեցին անաստարույժնէրն, ու մեծ-մեծ քայլերով շտապեցին առաջ:

IV

Կոտորել Մկրտչի անասունները, որոնց ճիպուտով անդամ նա պինդ չէ խփել, որոնք նրա անբաժան ընկերներն են եղել, աջ կուռը, միւնոյնն է, թէ կոտորէին նրա աչքի առաջ իր հարազատ զաւակինըին. չէ որ Մկրտիչը նրանց հետ է տեսել ուրախութիւն, կրել ընութեան արհաւելքներ, երգել իւր զեղչնական «անուշ հովին» ու «լուսնեակ գիշելը», թափել արեի և անձրեկի տակ քրտինք, անցել սարեր, ձօրեր, զաշտեր և հովիտներ, նրանց ուսին քարձած ըերել իր տան քարիքը, ապրել նրանց հետ, չնչել նրանց հետ, մեծացել նրանց հետ, իր կեանքի ամենամօտիկ և անդաւաճան բարեկամ է գտել յանձին իւր այդ անասունների... եւ այսօր, այս սեռմութ օրը նրանք, հոգու այդ անբաժան ընկերները, օջախի յոյս ու ներյուկը զանակի տակ էին զնալու. և որն էր այն չար ու ձեռքը, որ դանակ էր բարձրացնելու նրանց վրայ... «ինչի, ինչի, նրանց մերքն ինչ է. ինչ են արել իմ խեղճ-ողոքմելի տնասուններս», անցնում էր Մկրտչի գրգռուած ուղեղով և կորցնելով նրա զիտակցութիւնը, մի խելառ

հաւ դարձնում, որից նրա գէմքի արտայալտութիւնը փոխում էր, ապկի լոյսը խաւար, աղջամուղջ թուացնում, իրերը, պատահած առարկաները ուրիշ գոյներով երկացնում աչքերին, մարդկանց ուրիշ կերպ պատկերացնում... Ու նա մի տեսակ անսովոր վերացական զրութեան մէջ ընկնելով՝ այլ ևս չէր իմանում իւր անելքը, ասելիքը, իւր գոյութիւնը, ոչչութիւնը... Զգում էր, որ ոտքերը կասես փայտի երկու կառը լինէին, որ անդպայտարար շարժում էին նրա իրանի տակ:

Մասնախումքը Մկրտչի, իւզբաշու, չափառի ու գղիքի հետ մտաւ գոմ:

— Նու, եղբայր Մկրտչի, առաջ գնահատելու նոք քո եղները:

Մկրտչին ապակիացած աչքերով, որոնք կասես մի զօրեղ երեսոյթից փշացել ու կենսունակութիւնը կրցընել էին, նայեց նախապահի երեսին, առանց հասկանալու նրա ասածը:

— Կըսին, թէ եղներուդ զին ենք դնելու, բարձր խօսեց բէզը:

— Ի՞նչ—, հաղիւ աբտասանեց նա և էլի առաջ պէս ապակիացած աչքերը զցեց անսունների կողմը:

Նախապահ անասնաբոյթը տեսնելով, որ առանձին պատասխան չունի սպասելու Մկրտչից՝ դառաւ.

— Ասացէք վկաներ, ի՞նչ արժէ այդ մի զոյգ եղը: Քա մի գժուարին հարց էր վկաների համար. նրանք դիտէին, որ օրէնքով որոշուած է սար տեղերի մի զոյգ եղը գնահատել առ առաւելլ 70 ր., բայց այդ հաստաբան, կաս-կարմիր, պողերը մինչեւ

առաստաղն հասցրած հաստավիղ, երկար ու քաշ բուխախներով եղներն այդ ըովէին կպէին 200 ըուբ-լիով. ի՞նչ ասէին:

— Անտիկ—, հաղիւ աբտասանեց Ափօն:

— Բսա:

— Ի՞նչ էնենք հիմի, հա, ի՞նչ ըսկնք:

Անտիկը փոխանակ պատասխանի ձախ ձեռի դաստակը զրեց աջ բոի մէջ և անել զրութիւնից մատերը պինդ-պինդ ճկրտացըրեց:

Ըփօն մի խղճացող հայեացըրով նայեց զոյգ կարմիր եղան, որ իրար կողքի հազիւ էին զեսե-ղուել գոմում. նայեց նրանց հաստ ու ջլոտ ոտքե-րին, մսալի ուսերին, որոնց վրայ լուծն էր հանգչե-լու, սարի նման բարձր բոյ ու բռուբրին և ալս քա-չեց. «Հայ վախ հայ, ֆալակ տունդ ու գուռդ փա-կուի, էս տեսակ մարալ եղները գանկի տակ են գը-նալու...»

Բէզը հասկանալով նրանց լուսութեան պատճա-ռը, հայերէն առանձին դառաւ.

— Բարեկամներս, ուրիշ հնար չկայ. Եղները գնահատեցէք որոշուած գնով, իսկ միւս անսուն-ների արժէքի մէջ աւել ասէք:

— Եօթանասուն ըուբլի—, հաղիւ թողթովից տիրացու Անտիկը:

Նախապահ բժիշկը, որ սկզբից գիտում էր մինչև այդ իրեն անհասկանալի շուարած խօսակցութիւնը՝ դառաւ.

— Ես տասը ըուբլի աւել եմ ասում, ութսուն ըուբլի. ոչինչ. այդ մասին մենք մեր բացատ-րութիւնը կղըենք իշխանութեան. համաձայն էք:

Աեհի ճակատի մսաններն իրար վրայ դիդուեցին, որ օրէնքին ու իւր սկզբունքին հակառակ բան էր կատարւում. սակայն լսելով թէգի «համաձայն եմ» խօսքը, լոեց, բայց իրեն «այոն» չասեց:

Այսուհետեւ նշանակեցին արջառների գինը 70 լ., 4 կովի գինը՝ 100 լ., 4 հորթի գինը՝ 12 լ., երնջի գինը՝ 18 լ. գետառակի գինը՝ 22 լ., մողու գինը 12 լ., ընդամենը հաշուեցին 314 լ., յայտնեցին Մկրտչին:

— Զեմ ուղէ, չեմ ուղէ. թէ էդ փողը կուտան էնո՞ր համար, որ մալս տանին մորթեն՝ չեմ ուղէ, լաւ է մալս թողնեն, չեմ ուղէ...

Թուրք թէգը հասկանալով Մկրտչի հոգու կըսկիծը՝ ուղեց նրան հասկացնել.

— Եղբայր Մկրտիչ, աւելի լաւ է, որ փող կուտան, էդով դու ետև էլի մալ կառնիս. համա որ չըթողիս տանելու մորթելու՝ մալդ դոմի մէջ կըսատկի, ինքդ էլ փողէն կզրկուիս.

— Թա՞ղ, թա՞ղ իրենց մահով սատկին, թաքդանկի տակ չպատկին... Ա՞խ, քոռանամ ես, իմ խեղան անլեզու-անբերան անսասուններս...

Նախազա՞ղ զգացուած նայում էր նրա արտասուլներին:

Թուրք թէգը հասկացրեց նրանց Մկրտչի աղաչանքի բավանդակութիւնը, որից նախազա՞հ անսանարոյժն աւելի զգացուեց և չղիմանալով այդ աեսարանին ելաւ գուլս:

Լեհը հրամայեց կենդանիներին արձակել, ու ինքն ևս միւսների հետ ելաւ գուլս:

Զափալն ու դղիբը մօտեցան անսասուններն

արձակելու. նրանց ձեռքերն սկսեցին գողլողալ. այդ գալիք պատուհասը կասես նրանց ձեռով կատարւում լինէր. նրանց սրտի վրայ կասես մի քար ծանրացաւ. նրանք կասես զգում լինէին մի սոսկալի ոճիրի կատարումը:

Մկրտիչը մինչ այդ տնեցոց ոչինչ չէր ասել: Երբ կենդանիների զուրս գալը տեսաւ նրա կինը նարընը, մի անբացարելի դառն բան նախազգաց, առաջ վաղեց պատճառն իմանալու, բայց այդ վայրկինին տեսաւ իր ամուսնու այլակերպուած կերպարնքը, չփոխուեց և խելքը կորցրած հարցրեց.

— Ի՞նչ կայ, ի՞նչ է եղէ, չըլի՞ մալ է սատկէ...

— Մորթելու կտանին, մորթելու, — վիրատոր առկտծի նման մոնչաց Մկրտիչը, և երկու ձեռով պինդ խիեց ծնկներին:

— Մորթելու, — կայծակնահար ճշաց նարընը, և թևերը տարածեց բակում:

Երեխաներն իրենց ծնողների աղեխարշ լաց ու կոծը տեսնելով այնպիսի մի սուր ու շիւան բարձրացրին, որ քարերն անզամ սիրտ կդառնալին, կը կտրատուէին:

— Ա՞խ նարինջ ջան, ախ Մարջան ջան, ախ, իմ թուլբուլ-թուլմուլ կովերս, ձեղի ուր կտանին, ձեր արդար-դալար պակին մեռնիմ, էդ ուր կերթաք, էլ ով է իմ բալիկներիս կաթ ու մածուն տառը, եղ ով պանիր հասցնելու... Ա՞խ, Արարիչ Աստուած, էս ի՞նչ զուլում օր է... ողբաց նա և փարուելով նրանց զիին մէկիկ-մէկիկ համբուրեց. — հալահ էրէք տուածներդ —, ապա զրկելով մատաղ հորթերին աղաչել սկսեց. — մեծերուն կտանիք,

գոնէ էսոնց միք տանի. տեսէք, դեռ մատղաշ անասուն են, մեղք են, դեռ կեանք ու արև չեն վայելէ. զոնէ էսոնց խղճացէք...

Մյդ տեսարանը նետի պէս ծակեց Մկրտչի սիրտը, նրա մէջքին կասես կացնի հարուած հասցըն. և նա անկարող լինելով իրեն այլևս պահել վաղ տուեց եղների ետեից, ընկաւ նրանց ուգերե առաջ ու կանչեց.

—Իմ աղի՛ղ ախալբներս, ձեր ուսին մատաղ, էդ ուր կտանին ձեզի, մորթելու, համ, մորթելու... ես էլ ձեզի տեսնելու չեմ, լուծը ձեր ճտին դնելու չեմ, էլ մէտեղ արար չենք երթարու, էլ վարուցանք չենք էնելու... Մկրտչը քոռանար, Մկրտչը կուրանար, ձեր ու օրը չտեսնիր, ախ, ախ, ախ...

Երկու զիւղացի մօտեցան նրան, բռնեցին կըռների տակից և հեռացըին:

—Իմ բալտներս լաւ բալաներ են...

Բէկն այդ տեսնելով զգիրին ու չափառին հըրամայեց արագ-արագ քշել հեռացնել անասուններին:

Առողջ անասունները գնում էին առաջուց ժիր, գլուխները վեր բռնած, գարնան հոտը քաշելով ու քթածակերը մեծացնելով, ֆշացնելով, իսկ հիւանդները հաղիւ քարշ էին տալիս իրենց ուսները և շարժում միւսների ետեից:

Ամբոխը, որին մինչե այդ օրն անծանօթ, անսովոր էր կոտորելը՝ քարացած մնաց կանգնած տեղում, լալով իւր զվարին գալիք ապագայ թըշտառութիւնն ու կսկիծը:

Գերեզմանափոսը մեծ էր, մեծ քան տասն և հինգ անասունի համաթ. նրա ու և խոր բացուած-

քը կասես գժոլիքի բերան պատկերացնում լինէր, որ կեանք էր վնատուում մահացնելու, զոհ էր որոնում լլանելու...

Նրա շուրջը առողջ և հաստաբան եղջիւբներով եղջ հողն էր քանդում, ուսը թմբին ու քարերին քսում՝ կասես լուծ վնատում, աշխատանք խնդրում, ու առաջին ոտներով անդադար գետնին արսում, ու առաջին ոտներով անդադար գետնին արսում. նրանից քիչ հեռու կովերը նոր ծլած խտան էին պոճկոտում-արածում, իսկ զբանց տակն ընկած հորթերը պոչերը վեր տնկած երբեմնակի ուժգին խիելով մայրերի ուրերին ճըպճըպացնելով կաթն էին ծծում:

—Նայիր, ընկեր—, զառաւ լեհին նախագահը, —նայիր թէ ինչպէս մայրը հանգիստ-խաղաղ արածում է, իսկ զաւակը նրա տակն ընկած անփոյթ ծծում, մինչդեռ՝ միերկու ըսպէից նրանք երկուքն էլ զանակին են զոհ գնալու, ու հողին միասին բաժին են գառնալու. ոս մի ամբողջացած պատկեր է, որ նկարես և մատուցանես քաղաքի վավկակեաց գշխոներին և, տակը զրես. «Սա ձեր գեղջկուհի քրոջ սիրտն է, նրա կեանքն ու արել, շուտով ու հողում է թաղուալու. նայեցէք և տեսէք, թէ բացի ձեր հաճոյացնելու. նայեցէք և տեսէք, թէ բացի զարդար կայ գեղջնական աշխարհում»:

—Նուու, զեռ ջահէլ ես—, զրեթէ անփոյթ պատասխանից լեհ ընկերն և էլի դ տաւաւ մորթսպին, որ տաջ հիւանդ անասուններին էր պառկեցնում:

Սպանգար խորէնը թերերը վեր ստաթած, սուր զանակը ձեռին տուած մորթեց երինջը, գետակը և մողին, որոնք կասես ոչ մի գիմազգութիւն,

ոչ մի կեանքի կռիւ ցոյց չէին տալիս, այլ զլուխ-
ները հեղ խոնարհած դիմում էին դէպի յաւիտենա-
կան հանգիստ քուն: Յետոյ նա գառաւ կովերին ու
հորթերին. առաջ նա մայրերին էր մորթում, առա
զաւակների վիզը կարելով ոտքերից օդի միջով ծը-
նողների գիրկը շպրտում: Բայց եղբ հերթն հասաւ
եղներին, այդանդ արդէն նրա ոյժերը թուլացան.
իր երկու ընկերներով պարանի օգնութեամբ հա-
զիւ կարողացաւ (վայր) տապալել նրանց, և ապա
երբ դանակը վերցեց կոկորդներին քաշելու՝ նրա
ձեռքերը դողդողացին, նա կոկիծի հառաջով ան-
խոս վեր կացաւ տեղից և շպրտեց դանակը շափա-
ռի կողմը, ու երեսը շըջելով դէնը՝ դէպի արևելք
քթի տակ երկանք մրցուց...

Տափառը շարունակեց նրա կիսատ թողածը. կար-
միր արինը յորդ ազբիւրի պէս դուրս հոսեց եղնե-
րի կոկորդից և նոր առուակներ բանալով վաղեց
մահու գերեզմանը... Ու դեռ կոկորդները բոլորովին
կանոնաւոր չկարած՝ վայր գլորեցին նրանց դիակ-
ները կովերի ու հորթերի վրայ, ուր երկար, շատ
երկար դեռ կեանքը խաղում էր նրանց ջղոտ ջլե-
րում.—շարժում էին ոտքերը, դուրս էին սողում
լեզուները, իսկ աշքերը հետագհետէ կորցնելով կեն-
սունակ լոյս ու տեսողութիւնը՝ ապակիանում էին,
հետզհետէ մթնանում և մահուան խաւարով վակ-
ում:

Մորթը վերջացաւ, դիակների վրայ մի մեծ
աման նաւթ ածեցին, միքանի խուրձ չոր խոտ
շպրտեցին ու կրակ տուին. վայրենապէս բարձրա-
ցաւ բոցը, որ հրեղէն լեզուներով օդում գալարուե-

լով վերեսում ոլորտում և պառյաներ էր կազմում,
աշխատելով լափել-կլանել ամեն ինչ, և տակը և
վերեր, և շնորհը և բոլմզքը. Քիչ ետոյ ճարճաթոցի
հետ ապրածուեց ճենճերային հոտ, որի ժամանակ
կրակն համերավ պարարտ եղների ճարպին՝ ծուխի
գոյնը ներկեց սեռվ ու մթով ..

Մասնախումբն ու մորթողներն երբ երեսները
շուռ տուին դէպի գիրկ՝ ահսան կտուքների վրայ
կենդանի արձաններ.—գիրկի մարդիկ քարացած գլ-
րութեամբ նայում էին այդ այրող կրակին...

V

Եղոյենց Մկրտչի անասունները կոտորելով
մասնախումբը կարծում էր, թէ գրանով հիւանդու-
թիւնն իրեն սազմի մէջ խեղդած կլինի. սակայն,
աւազ, այդպէս չեղաւ. 3—4 օրից հիւանդութիւնը
գերաններով պինդ վակած տեղից գուրս եկաւ տա-
րածուեց, և այն էլ ոչ թէ գիրկի ծայրում, Մկրտչի
տան մօտերքը, այլ Յակ երևոյթը կատարելապէս սպա-
քանի տեղերում: Այդ երևոյթը կատարելապէս սպա-
քանց գիրզացիներին, իսկ անասնաբոյթերին կատա-
րելապէս յուսահասեցրեց:

Եթէ մինչ օրս կայ մի միջոց խոլերայի և
ժանտախտի դէմ, այդ ոչ գեղն է, ոչ դարմանը, այլ
այն, որ չժաղննեն ուրիշ տեղեր ապրածուելու, ու-
րիշներին վարակելու. իսկ վարակուածին ոչ մի բան
չի օգնի, եթէ ոչ ինքը բնութիւնը, վարակուածնի
կազմուածքը:

Այդ լու էին իմանում անասնաբոյթները, և գլ-

բա անյաջողութիւնն էր, որ նրանց շուամեցրեց:
—նու, կոլեզ. ինչ ենք անելու—, դառաւ
լեհն իւր պաշտօնակցին:

—Ի՞նչ պէտք է անենք. վարակումը մի տեղ չէ,
երկու տեղ չէ, որ կոտորենք, այլ եօթ-ութը տեղ
(տուն). Ինչ կարելի է անել. պէտք է սուժամա-
նակ անասունները գոմերում արգելենք, մինչև տես-
նենք ինչ կլինի:

—Այն կլինի, որ աւելի հսաստկանայ և վերջն
աւելի մեծ քանակութեամբ ենք կոտորելու—, սառ-
նութեամբ վրայ ըերեց լեհը, և պառկած տեղում
դանդաղ կերպով շաբժուելով դառաւ միւս կողքին:

—Պարմն—, տեղում ուղղուելով և պապիլոսը
ձիգ տալով խօսեց նախագահը,—զիտք ինչ կայ:
—Ի՞նչ:

—Այն, որ մենք կոտորելուց փոքր ինչ դդոյշ
պէտք է մնանք:
—Ի՞նչու:

—Որովհետեւ հանաք բան չէ գեղջուկի ձեռից
խլել եղը, գեղջկուհու ձեռից կովը, և տանել մոր-
թել. դու շահսմբ Եղանց տան այն սուր ու շի-
ւանը, այն լաց ու արտասուքը. դա միենոյնն էր,
թէ նրանց հարագատ զաւակներին տանէինք կեն-
դանի-կենդանի սպանէինք:

—Այդ մէէկ. երկըորդը—, քմծիծաղ հարց-
րեց լեհը:

—Երկրորդն էլ այն, որ մենք թացն էլ չորի
հետ խառնում ենք, հասկանում ես—, զրեթէ ճը-
շաց նախագահը,—շատերն այն առողջ կենդանինե-
րից, որ զնում են դանակի տակ՝ կարող էին երբէք

չհիւանդանալ. իսկ հիւանդացողներից շատերը կա-
րող էին առողջանալ, այդ էլ երկն:

—Էլ ետի՞—, ծաղրական փայլուն գէմքով նա-
խագահի երեսին ժպտաց լեհը, կասես մանուկի հետ
խօսելով:

—Ետոյ էլ այն, որ դու յիշում կլինիս Ռու-
սաստանի գիւղերում այն ռուս մուժիկներին, որոնց
երկու բոռնցը լիբենց մեծութեամբ մեր երկսի
գլխին հաւասար են... և նրանց հսատլիկ-բոյով կընկ-
տացը (բարաներին), որոնք լիբենց կթու կովերի շափ
են... յիշում ես, հմ, յիշում ես... Եթէ յիշում ես,
անշուշտ և յիշում կլինիս այն ամենը, ինչ որ անում
էր յուսահատուած, իրեն կոլցրած ժողովուրդը...

—Այդ բոլորն էլ զատարկ բաներ են. մենք
դրա համար ունենք ոստիկանական ներկայացուցիչ,
ոյժ:

—Այդ ոյժը շատ քիչ է գործ շինելու համար—,
քիչ ուրիշ մարզով արտասանեց նախագահը:

—Դու վախիկո՞տ...

—Իսկ դու անխիղդ և ամհասկացող...

—Ահ, քեզ հետ չարժէ... արհամարհանքով
այս անդամ ձայնեց լեհը և շուռ գալով միւս կողքի
վրայ, շուռ տուեց կարգացած զրքի թուղթը:

—Նուու, պարո՞ն, ինդրէմ... իմացէք ինչ էք
խօսում...

Բէքը տեսնելով այդ, անմիջապէս միջամտեց
և վերկենալով տեղից մօտեցաւ նախագահին ու
մեղմ ժպիտով նայելով նրա երեսին՝ աչքով արեց:

—Ա՞ս, պապամշա—, զգացուած սրտով գա-
ռաւ նրան նախագահը.—ինչո՞ւ կեանք այդպէս թու-

նաւոր է, համ, ինչու, ուր առանց արցունքի ժպիտ շը կայ, ուր մէկի վարդը հաղարի արտասուքով է ցողւմ... և ինչու ընութիւնն ինքն այդքան անողոք է խեղճ մարդ արարածի համար. կասես մարդս ստեղծուել է տանջուելու և միմիայն տանջուելու համար... օրինակ, ինչ է հէնց այս խեղճ ժողովրդի յանցանքը, որ...

— Տգիտութիւնը, թունաւոր տօնով դիտամբ ընդհատեց լեհը:

Նախագահն զառաւ դէպի նրա կողմը, մի-երկու վայրկեան չուծ աչքերով նայեց նրա մսալի վդակոթին ու անզուսպ կըքով ժայթքեց.

— Իսկ ինչով է մեղաւոր, որ նա տգէտ է, մեր փիլիսոփայ պարոն...

— Ելի իւր տգիտութեամբ...

Նախագահն այս անդամ զսպող հայեցքով նայեց նրա կիսածածկ իրանին ու վերարկուի տակեց երեացող ճառով կոչիներին, մի խորը արհամարհանք զգաց, երեսը թժուացըց, ու լոելեայն գլուխ պտացըց:

— Հա շարունակիր, Սերենօթա, ես քեզ լսում եմ, ժպտաց նրա երեսին թէզը:

Նախագահը մի ըսպէաչափ ծուխը կուլ տալով ու զուրս փշելով անցուդարձ արեց սենեակի երկարութեամբ, վարդագունած դէմքով շարունակեց.

— Եւ ինչ կեանք է նրա կեանքը. լացի-կոծի մի վայր, զառն արտասուքի մի ծով. նա չունի կանոնաւոր բնակարան, հազին զկեսա, օրուայ ապրուստ, մաքի սնունդ, սրակ հաճոյք, հոգու միսիթա-րանք... զիշեր-ցերեկ աշխատում է լոկ իւր զոյու-

թիւնը պահպանելու համար, ինչպէս որ աշխատել են պահպանել զրանց պապերը, պապերի պապերի, նըանց էլ պապերի պապերի պապերը և այլն, որոնցից սակայն սրանք, այսինքն այս օրուայ սերունդը ոչնչով առաւել չէ... հասցըել են—աւանդել սըրանց, որպէս զի սրանք էլ նոյն կերպ ապրին, այսինքն տանջուելն, և աւանդեն իրենց որդիներին ու թոռներին... և այսպէս անվերջ... որպէս զի ետնորդներն էլ զան սրանց պէս ապրին ու տանջուեն...

Նա կանգ առաւ սենեակի մէջ տեղում, մի քանի անդամ նորից ծխի քուլաները բարդ-բարդ թողեց օդի մէջ ու հատուորոշ խօսքերով դառաւ դէպի լեհը.

— Ես ասում եմ, որ գեռ միքանի օր էլ պէտք է սպասենք, տեսնենք ինչ հետևանք կունենայ:

— Իսկ ես ասում եմ «տգիտութիւն»ը...

VI

Սակայն սպասելը չօգնեց. հիւանդ անասունների մէջ շտառով ջարդն ընկաւ. սարսափահար այդ երեսութից՝ դարձեալ որոշուեց մորթել ու մորթել:

Եւ մորթում-կոտորում էին ոչ թէ մէկ-երկու տան, այլ բալոր այն բազմաթիւ տների անասունները, որոնց մէջ հիւանդացովներ էին լինում:

Այդքան կրկնուած ժանախատների ժամանակ զիւղացին տեսել էր ցաւ, կսկիծ, միմիայն կինդանու մահանալու առիթով, և այն վերագրելով Աստծու «մատին». իսկ այժմ տեսնում էր անխնայ և

անխիվճ կոտորած, այն էլ ոչ միայն հիւանդ անտ-
սունների, այլև առողջների, նա մի ինչոք ան-
ծանօթ յուսահատութեան էր հասնում, որ այն-
քան իրեն հասկանալի չէր. կիրք էր, թէ տան-
չանիք: Նրանք տեսնում էին, որ գարունը լայն բաց
է արել իւր թերը, փշում է հարաւի կենսունակ
հողմը, հալում է սարերի կատարի ձիւնը և քշք-
չալով արագ վաղում է մարմանդ զալարով ժած-
կուած արտ ու արօտի վրայով, գետինը փափկա-
ցել արօր ու սերմանող է կանչում, անասունները
գոմերում կապած առել են գարնան հուր, նոր
բած կանաչի համը, չեն ուտում առաջներն ածած-
չոր ու ցամաք յարգը, մի գլուխ բառաշում են և
կապերը ձգձգելով շարունակ ետ-ետ նայում՝ ար-
ձակուրդ-աղատութիւն խնդրում. կովերը տաշտանի
գրգռուած ժամանակ ցուլ են պարում և կանգնած
տեղերում շարունակ անհանգիստ շարժումներ կա-
տարում... Տեսնում էին, որ անցնում էին օրերը,
ունչալարի համար անփոխարիների, անդառնալի ոս-
կի օրերը, որ ոչ վարում են, ոչ ցանում, ոչ խապ-
ուխաս անում, իւր ու պանիր շինում, ոչ ձմեռուայ
համար պաշար պատրաստում՝ մնում էին մոլորուած,
մտորուած... Եւ այն գիտակցութիւնը, որ մի անե-
րեսյթ չար ձեռք, մի ու օձ իրենց ուրախութիւնը
փոխում է արտասուրի, ծաղիկը՝ փշի, հալում էին,
մաշւում, ու խօսք-բառ չգտնելով ոբուերի վիշան ու
կիբըն արտայայտելու, հնար չգտնելով այդ անտա-
ների գրութիւնից աղատուելու՝ ծուխն աղահութեամբ
ներս էին ծում և խորը հառաջներ քաշելով վշտի
հետ բարդ-բարդ թողնում օդի մէջ:

VII
— Աղջի մէմ դուս ել, տես, թէ էլի էդ ինչ
լաց ու կոծի ձէն է. տես էլի ում տունը քանդուաւ,
էլի ում օջախը մարաւ:

— Վու, քոռանամ ես, ձէնը քեռանցս կողմէն
կուգայ—, արտասանեց չանէի հարսը և ձեռի գոր-
ծը կիսատ թողնելով վագեց դուրս:

Յանձնաւիգողը մի խումբ անասուններ առաջ
խառնած քշել էր տալիս գէպի գերեզմանատուն:

Չանէի հարսը վազ տալով մօտեցաւ կտուրում
հաւաքուած մի խումբ կանանց և չնչասպառ հարց-
րեց.

— Աղջի, էլի էդ ում մալը տարան:

Կանայքը լոեցին, վասն զի գիտէին, որ կո-
տորուելու տարուողը չաշտոյենց մալն էր, չուցեցին
ասել:

Չանէի հարսը հասկացաւ նըանց լուսութեան
իմաստը և յանկարծ արտասունների մէջ խեղդուեց
ու կանչեց.

— Վու, քոռանայի ես, քեռանցս մալն է. ան-
տէր սիրս կսես վկայեց, տեսէք, տեսէք, թէ ան-
խիզ անաստուածներն ինչ տեսակ հաւարով կքշեն,
կսես թալան ըլլի:

— Թալլանն էսօրէն լաւ է. լաւ է էնոր հա-
մար, որ կղարկեն-կտանին ծախելու, չեն դարկէ-տա-
նի մորթելու:

— Վու անընիդ մեռնիմ Աստուած. հարաբ
քեզի ինչ էինք էրէ խեղճ հայ քրիստոնեաներս, ում
տղէն էինք զրկի մէջ մորթէ, ում տունն էինք քան-
դէ, որ էս կրակը վրէներս թափեցիր:

— ԱՌԻ-ԱԽ, անճախ (հազիւ) գոմելսս լցուել էր. էս իրեք տարի է ցաւ չկար. կեսս անտէրն օրերը համբեց ու էլի եկաւ, էլի աներս աւիրեց՝ վերանա դարձուց:

— Եփ որ ռանչպարի գոմը մալ չմհաց՝ վերանցէն էլ աւելի է:

— Տարան, տիա հասուցին մալի գերեզմների քով... Էմանն, իջէք ցած, իջէք գոնէ մեր աշքով էլ է շտեսնինք մեր մալի դանկի տակ պառկիւը. մեղք ու կրակ է:

Կանաչք, տաստանեհինդ հոգի սրտաբեկ ներք իջան կառւից և հաւաքուեցին չանէինց շարդախի տակ: Առժամանակ տիրող լոռոթիւնը կասես կապեց նրանց լեզուն. նրանցից ամեն մէկը լուս մաքի մէջ իւր սրտի, իւր վշտի հետ էր խօսում:

— ԱՌԻ, չանէ Ապլա, էրնակ էր էն օրը, որ մալերս սաղ էին, իրիկուն-առաւօտ տալիւրը կապը-դէինք թը-շ-թը-շ վէր կկթէինք, իրացու կաթ-փոխ կուտայինք, խարուխաս կէնէինք, եղ ու պանիր կշինէինք —, խօսեց նարընը (Մկրտչի կինը) և ջուլստ աչքերը քամեց:

— ԱՌԻ, քուրիկ ջան, էրնակ էր էն օրը, որ իրիկուները ժամի զանկերը կգարկէին մի քովին, նախիրը գեղ կթափիր մէկէլ քովին, գէր ու թումբուլ կովիրը, բուխախները կախ-կախ, զիխներն ու սախ թափ տալով, բոռալով՝ հորթերուն կանչելով տուն կմանէին, մենք էլ փեշերս վեր ջնջած (քաղած) քուղաները թեկերս գոմ կերթայինք լիքը-լիքը կաթ դուս կրերէինք... ալս-ալս-ախ. եալար էլի պիտի արժանանանք էղ օրուան —, մելամաղձոտ մրմնջաց

նարընի հարսանուհին, որի անառուները նոյնպէս ու հողին բաժին էին դարձել:

— Ել նոր, աներս ու տեղերս քանդուտ, պըրծաւ, էլ նոր... զայ անտէր մնալիր ցաւ. զայ, որ խոլերէն էլ գուլումաթ ես:

— Խոլերն էս օրէն էնքան լաւ է, որ էնիկ մարդու ջանին կուզայ, մալին չի դայ:

— Էս անտէր ցաւը կսեն թէ խոլերի տեսակ բան է, ինչպէս որ խոլերը, էնալէս էլ էս, տնէ տուն ման կուզայ:

— Որ խոլերն էլ էսոր պէս է, ըսել է, թէ թագաւորէն հրաման որ ըլլիր՝ մարդոց էլ մալի պէս պիտի դնէին ու մորթէին:

— Հապա ինչ է, նոր դիտես:

— Ե'յէ, եղաւ, «կդնէին կմորթէին». մարդն ու մալը մէկ են —, երկու խօսակցի կարծիքին չհաւա-նեց մէջանեղից մի հաստացած կին, որը սարերը իրարից հեռու զրած հազիւ էր կարողանում պահել իրեն հաւասարակշուութիւնը:

— Իմ հաշուխո՞ ունչպի մալը չպնէն վեր է. մալ չեղած տեղն ռանչպի օրն ինչ է:

— ԱՌԻ, մէր էր թէ մորթելով մի օգուտ ըլլիր՝ մորթէին, համա որ անօդուտ է...

— Լաւ կոէ Դիլապարը, հապա ինչ է. ուրիշ տարի որ ցաւը կնկնիր՝ սաղ գեղէն տանիր շատ-տարի սաղ կուզակը հարիւր մալ. հիմի մոր-շատ հարիւր, եա երկու հարիւր մալ. էլի հիւանդութիւնը հինդ հարիւրն էլ անցաւ, էլի հիւանդութիւնը չի վերնայ:

— Էմանն, էգոնք դարդակ բան են. վերնալն ու չվերնալն Աստծու ձեռքն է:

—Աղջի մէրս, աղջի քննւս, մորթելուն կմորթեն՝ թող հիւնդցածները մորթեն, էլ սաղերէն ինչ կուղեն. եփ որ սաղը հիւնդնայ՝ էն ժամանակ թող էնոր էլ մորթեն, հաղա լաւ չեմ ըսէ:

—Հաղա ինչ է, զորթ կսէ. մորթելով էլ ուր կհանի. ու հողին պիտի կշացնեն. ու հող է, ինչքան տաս՝ կպարտէ:

—Ե՞ն, ինչ կարանք էնէ, էլի մեր յոյսն ու ապաւէնը էն Աստուածն է, ուրիշ ճար ու ճամբայ ի՞նչ ունինք, ոչ բան կհասկեանք, ոչ դեղ ու դարման գիտենք:

—Ա՞խ, երկնքի-գետնի Թագաւոր, ինչ կըսի վերը դիէն՝ նստած թաղթիդ վրայէն մէկ միտքդ ցըքես միզի, մէկ ցած աշես, աշքդ մեղաւորներուս վըրայ քաղցրացնես—, այրուած սրտով կանչեց չանէ Ապլան:

Հանէի աղօթքի վրայ հաւաքուած կանալք ձեռքերը դէպի վեր պարզեցին և աղերսախառն-արտասուախառն հայեացքով ջինջ կապուտակ երկոնքին նայեցին, այնտեղ վինտուելով երկնքի և գետնի Թագաւորին, այնտեղ ուղղելով իրենց սրտաբուղիս աղերսները:

—Ա՞խ, քուրիկ ջնն, Աստուն կսենք «ցածաշէ», համա մենք էլ անարժան ենք, մենք էլ. էսքան մալի ու դեկլիթի մէջէն, սաղ գեղ ենք մի սըրտով մատաղ չենք էնէ, որ էն էլ վերըդիէն տեսնի, սիրտը դութ ցըէ:

—Լաւ կսէ. հաշուեցէք թէ էն իրեք-չորս կողը եա եղը սատկել են—, առատասրտութիւնն ուղեց ցոյց տալ մի ջահէլ հարս:

—Աղջի, գետինը մտնիս—, աչքելը շոեց չանէ Ապլան—, էլ ինչ խելքէդ գուս գուս կուտաս. Աստծու հետ հանմար կէնհս, ինչ է:

—Ճա, ճա... յանկարծ վիտկացին մի-երկուուը.—սատկածով Աստծուն կուղէ պատիւ ինչ... կսես Աստուած երէկուայ տղէն ըլլի...ու նորից ծիծաղեցին:

Զահիլ հարսը կարմրաւ՝ թուջ կտրաւ. նա տեսաւ իւր ասած միամիտ խօսքի անմտութիւնն, ու պատասխան չգանհելով տալու՝ մնաց լուսծ:

—Դէ լաւ, հիմի խեղճը խարուաւ միամիտ միքան լսաւ, գուք էլ սրաերսուդ աշեցէք, էնտէս ծիծաղեցէք, մատի վաթթթան միք շինէ—, նրանց նըկատեց չանէ Ապլան հնայեց ծիծաղողների երեսին:

—Թէ լաւը կուղէք իմանալ, էսքան որ կտան-ջուինք, բոլորը մեր մակելու մեղքն է. էն անէծքն է, որ Աստծու անկջին հանի... չալա մէկ գուք պիտի աեսնէիք, թէ երէկ ինչ տեսակ կբուային Ալվբրոնց մակըրը, կսես մահի ձեռնէն փախիլ կուղէին. էն մի յոնտըլիկ, կուննիկի կոտշներով ձերմակ աշաւ որ ունէին, էն տշաւը փախաւ, մինչի Սրբի սարի ծէրն ելաւ, ետեէն էնքան մարդ կվաղէին՝ չէին կարայ բռնէ, որ բերէին գլուխը կտրէին...

—Ը՞լ-ը՝, մարն էլ իրեն տեղսովը մահի ձեռնէն կվախի, ապլիել կուղէ՛, էն էլ ջանի ցաւ ու հոգու կսկիծ ունի—, զրեթէ երգելով օրօրուելով վըրայ բերեց մէջ տեղից հաստացած կինը, որի օրերը մօտ էին, և որի միտքը կասես մի նոր բան լինէր միւսների համար:

Նրանք մի-երկու բոպէ մտորան:

—Քա, մի բան միաքս լնկաւ, տիրող լոռութիւնը խղեց Հանէ Ապլան:

—Ի՞նչ է:

—Արիք կըսի երթանք տէրտէրի քով, աչն առնինք, խնդրենք էս շաբաթ իրիկուն մի ծանուցում էնէ, ես մի քարոզ տայ, մեր Յակօ էրիկմարդկանցը հասկցնէ, մատաղ էնել տայ, բնաքի Աստծու աշըը վրէներս քաղցրանայ, բնաքի անարժան մեղաւորներուս միտքը ցըէ, հէչ օր չէ էն ինդ անլիդու-անբերան մալերուն մեղքնայ. լաւ չեմ ըսէ:

—Հա-ա, շատ լաւ է —, վրայ բերին չորս կողմից:

—Դէ որ էղակս է, կեցիք ես ու Սանամէր Քիշմիշը երթանք տէրտէրի քով, խնդրենք. կուպաս սանամէր:

—Քա լաւ կըլի, ինչի՞ չէ. էդ տեսակ բանին էլ մարդ չէք ըսէ:

Գեղջկուհիները քիչ մխիթարուած լինելիք մատաղով ցըուան իրենց աները:

VIII

—Աղջի Տուտօ, աղջիկի՞:

—Էդ վել է ձէն հանողը:

—Ե՛ս եմ, ես, զոյն եմ:

—Ի՞նչ է, երթկին ինչի ձէն կհանես, ցած իջի:

—Չէ, չէ, շտաղով է:

—Ի՞նչ է որ:

—Դնւս արի, դնւս. թէզ:

—Ի՞նչի, ինչ կայ էղակս հաւարով:

—«Ինչի» ո՞րն է, սադ զեղն իրար է խառնուէ, գու տղէդ զիրկդ առէ ծիծդ բերանն ևս գրէ:

—Քա ի՞նչ կայ. էլի ի՞նչ է եղէ. չըլի հիմի էլ սազ նախիրը պիտի չարդեն:

—Չէ, չէ. գու էլ բերանդ խէր բաց:

—Հըպը ի՞նչ է, եօզի մէջն է ցաւ ընկէ:

—Չէ, չէ:

—Դէ, զը ըսա իմանամ ի՞նչ է:

—Սադ զեղը՝ մէր մանուկ, հարս աղջիկ, էրիկմարդ կնիկմարդ, հալիւոր պառաւ ի՞նչ կայ չկայ ժամ կվազին:

—Քա ի՞նչի, ի՞նչ է եղէ:

—Քա մեակամ չխոնէս:

—Չէ, զէ մէկ ըստ, սիրաս պատուաւ:

—Տէրտէրը քարնզ պիտի տայ, տէրտէրը. պատիրել է ինչքան որ գեղը մարդ կայ՝ բոլորը ժամ երթան, քարտզն իմանան, տէրտէրմեա էնեն:

—Քա հապա ի՞նչ էնեմ, զըողի խեղդած կեռուքս էլ էստեղ չէ, որ տղէս զիրկը տամ, զամ երթանք. ի՞նչ էնեմ համ:

—Էն պառաւ կըլկըլը մւը է գնացէ:

—Բման զետինը մանի, օրը մի սուրբը կերթայ. հիմի էլ գնացել է Գէօնդիւրու սուրբը, մալերու համար մոմ է տարէ վարելու:

—Դու էլ զիրկդ առ երթանք. էսքանը տղէրը գրկերը վաղեցին:

—Է, կըլի՞:

—Ի՞նչի չիլի, ի՞նչ կաէ:

—Դէ որ էղակս է, կեցի շալս զլսուս առնիմ գամ:

Ճողօն ու ծուտօն երբ բարձրացան միւս կը-
տուրները տեսան, թէ ինչպէս ողջ զիւզը ցրիւ
եկած մըջիւնների նման ման էին գալիս կտուրնե-
րով և փաղցներով, վաղ էին տալիս եկեղեցի:

Ճողօն ու ծուտօն բարձրացան վերնատունը,
որ արդէն լցուած էր հարս ու աղջկերով. տղա-
մարդիկ բանել էին եկեղեցու տափը, ծերերը առա-
ջին մասում՝ դասի մօտ թերը զցած ճաղերին՝
սարդինկի նման կիտուել-դարսուել էին իրար վրայ,
իսկ վերնատան տակ պառաւները հասա շալերը գըլի-
ներին քաշած, մումեաների նման խիտ շարուել էին
իրար կողքի:

Երբ սովորական ժամասացութիւնը վերջացաւ
Տէր Զօրաբարէլլ դառաւ դէպի ժողովուրդը, երեսը
խաչակիքեց.

— «Անուն չօր, և որդւայ, և հոգւնին, սրբայ ամէն:
— «Միրելի ժողովուրդ.

— «Աւետրնի մէջ Տէրն մեր Յիսուս-Քրիստոս
գրել է մի անառակ սրգու պատմութիւն, թէ ինչ-
պէս էդ անառակ աղէն հօրէն բաժնուել, իրեն բա-
ժինն առել, գնացել է օտար երկիր, կերել-խմել,
ինչ որ կայ-չկայ փչացուցել, վերջն անօթի մնացել.
անօթութենէն գնացել է մի հարուստ մարդու քով
խողերի շոբան մտել. էդ տարին էլ սով է եղել, հա-
ցի թանգութիւն. էդիկ իրեն տուած հացով չէ կըշ-
տացել, արթը խողերու հետ խառնուել, Էնոնց հետ
ամեն տեսակ քոք կերել. վերջը-վերջը տեսել որ
շիլի, մեռնելու է, էլի եկել է իրեն հօրը քով, ա-
ռաջը ծունկ չգերել ու ըսել. «Հայր, մեղայ քո և եր-
կընքի առաջը. ես մեղաւոր եմ, ինձի ներէ. դուսը

մի թողնի. ընդունէ, թէ ես էլ քո էդքան խզմա-
քեար ունիս, Էնոնցէն մէկն եմ»:

— «Եդ օրինակը որ կայ, իսկը Քրիստոս մեղի
համար է զրէ, որ կարգանք հասկնանք, թէ էն մար-
դիկը, որ Աստծու ճամպեցէն կելնեն, էն անառակ
տղին են նման, որ խոզ արծող դարձաւ, վերջը խո-
զերու հետ խառնուաւ, խոզերուն հաւազըրաւ:

— «Ծօ Յովակ, զու երկան ես, առաջը մի կըտ-
րէ, քիչ ետև կայնի. Յովսէփ, զու առաջ արի, դու
էլ քիչ էնդին զնա, Մոսէս. է, դէ հիմի լաւ է:

— «Հա, լսի, թէ Աստծու ճամպեցէն կելնին,
չէ. հիմի խօսք մեր գեղի վրայ է. մենք հիմի էն
անառակ որդու պէս ենք, որ Աստծու ճամպեցէն
դուս ենք ելէ, էգոր համար էլ Աստուած վերըդիէն
վըէներս բարկացել է, էս ցաւը մեր մալի մէջն է
գրէ. էդ իսկը մեր մեղերի շատութենէն է: է՛է,
գուք էնակէս միք մտածէ, թէ ինչ որ էստեղ կէնէք,
գուք էնակէս միք մտածէ, թէ ինչ որ էստեղ կէնէք,
Էմինատեսի աշքերէն ծածուկ կմնայ: էնիկ էն-
տեղ արդարութեան կշեռքը ձեռքը ամեն առաւօտ-
երի կուն մեր մեղերը կըշցուէ. հիմի մեր մեղերն էն-
քան շատըցել են, որ կշեռքի թաթն էլ տեղէն չի
կենրայ, մէկել դին (միւս կողմը) ինչքան էլ կուզէ
լրացնոց քարեր գնեն:

— «Հիմի պիտի ըսէք, թէ մեղերս ինչ է:

— «Ի՞նչ, լսեմ:

— «Ամենից առաջինը պաս ուտելը: Ես քանի
մարդ զիտեմ. որ մենծ պասին անգամ լիկերը չեն
կրցէ պահէ, պասերը կերել են. ախըր ինչ բան է
պաս ուտելը. Աստծու օրէնք պատռել. բուկ ըսածդ

ինչ է, ինչ դնես՝ նես կերթայ. հայ շիշ բանի էղպէս բուկը, հա:

— «Երկրորդ քիւֆիւր էնել. ծօ էդ ինչ բերնի մունտառութիւն է. ետե էլ էդ մունտառ բերնով կուդաք հաղորդութիւն կառնիք. թիւշւ...

«—Երբորդ, գողութիւն. քանիքանի անդամ քարոզիս մէջ զգուշացրել եմ, թէ որդիք, մէք էնէ, միք ըլլի, զողութիւնը լաւ բան չէ, ասաը պատուիրանիներէն մէկը պատռել է, համա չեղաւ-չեղաւ. էլի հաւ, գառ, ուլ, սեր, մոզի, մալի զլիսէ իւլար (նոխտա), իրարու խոտնոցէ խոտ, ուլափ (վարսակ) զողնալու թարկը չէք տայ:

— «Չուբորդ ժամ չդալ. տարին քանի անդամ է պատահել, որ ժամի մէջ ես եմ եղել, մէկ էլ ժամկոչը, մենք ժամ ենք ըսէ, մենք էլ իմացէ. զիտէք ինչի նշան է ժամ չգալը՝ Աստծու աշխցէն հեռանալու.

— «Էլ որ մէկն ըսեմ, մեղքերդ էնքան շատ են, որ համրել էլ շիլլի. ինչպէս կոէ նարեկը «աններելի են մեղք իմ, անքաւելի են յանցանք իմ, վայ ինձ, վայ ինձ, վայ ձեզի...»

— «Ի՞նչ, զուք զիտէք, թէ Աստուած էդ ձեր մեղքելը միաքը պահելու, էն աշխարքն է պատիժը տալու. հըն, էնոր Աստուած կսեն, քէֆը չէք, մէկ էլ տեսար համբերութիւնը հատաւ՝ պատիժն էս աշխարքը զրկեց. կարան բան ըսէ...այ օրինակ էս մալի ցաւը, թէ չէ էն անկիզու-անբերան անսսուններու մեղքն ինչ է. էդ բոլորը մեր մեղքն է:

— «Վայ մեզի, վայ մեզի—, կըծքին երկու անգամ պինդ խփեց Տէր-Զօրաբարէլը.—մեղքի մէջ

թաղքի բկերս թաղուել ենք, դեռ էլի կսենք, թէ «Աստուած, ինչ ենք էրէ քեզի...

Ժողովուրդն ևս կըծքին խփեց, «մեղայ, Տէր, մեղայ» շնչաց և կասես ուսերի վրայ ծանրութիւն զգալով՝ նրա բեռան տակը ճնշուեց:

Այդ ժամանակ ծուաօի երեխան յանկարծ լաց եղաւ, և աիրող լուռթիւնը սուր ճիշով խղեց: — «Կնկտիք, անիծեալ եւայի աղջկներ, ինչ տղոցը բերել էք էստեղ, շան ձիները կհանէք:

Տուաօն չորս կողմից շփոթ ու յանդիմանութիւն լսեց, ու տակից էլ մի-երկու գնքստոց, որ այդպիսի լալիկան երեխային ժամ էր բերել:

— Վու զողո, բիւարիմ զոռքազոռ ըլլիս հա, բան չեմ ըսէ, որ պատճառ չդառնայիր ժամ գալու, և հաղիւ ճղելով կանանց կծիկը, շոքի, ևս առաւել ամօթի քրաինքն երեսին ելաւ դուրս:

Քահանան շալունակեց.

— «Ի՞նչ, էն Աստուածը, որ նստել է ոսկեցէ թաղթին, երկու կուշան առել Սելորէ ու Քերորէ հրեշտակնելը, որոնք թըերը հանած զիշեր-ցերեկն կրաշեն, էն Աստուածը մեր մեղքերը շի տեսնի վելլզիէն:

— «Ես երկօրս փուչ հարսի մէկը, որ էդ ըսի, անունն էլ ըսեմ, Թըափենց Փեփիկը ինչ որ քոք է խաչէ, հիւանդ մալերուն խմցուցէ, իրեն խելքովը զեղ է էրէ. զուք հալա կնիկմարդու լրբութեան աշեղեղ է էրէ. թէ ինչ տեսակ զլիսէն վեր, Աստծուն հակացէք, թէ ինչ աշխատ կը կառնէ... կսես, թէ Աստուած որ ուզենայ, ուակ բան կրոնէ... կսես, թէ Աստուած որ ուզենայ, ինքն էդ հիւլնդութիւնը չի կարայ վերցնէ... կանայք, որ ամբողջովին ականչ դառած լսում

էին քալողը՝ Փէփիկի անունն իմանալու պէս իրար անցան. ու մի խուլ ազմուկ բարձրացաւ:

—«Կնկտիք, անիծից արմատներ, հերիք եղաւ, դա, դալմաղաներդ կարեցէք:

նորից տիրեց լոռվթիւն:

—«Դու Խաչօ-Ատա, հալիւոր մարդ ես, դադունա տիրացու Բարսեղ:

—«Հա, դեղ կէնէ... Մտքէրդ է էսօրէն իրեք թէ վեց տարի առաջ, էն մեծ ժամանակին էլ, թէ հըլլ ժամանակի մայիս մէջ շատ լուսաւ. գնացքադէն գոխտուք բերեց, ուղեց գեղ ու դարմանով լաւցնէ. համա էնիկ քանի գեղ ու դարմանին զօռեց, շատ էլ էնքան, մալին զօռեց. վերջը տեսաւ, որ չիլլի, եկաւ առաջո չորս, թէ «Տէր-Զօրաբարէլ, Աստծու սիրուն, վերցու Կարմիր-Զօրաւոր անետրանդ, թաղա օծած արծթէ խաչը, երթանք մայիս մէջ խաշլաւա (խաչլուա) էրա, բարձրի Աստծուած վերըդիէն տեսնի, խոճայ, թէ չէ մեռած եմ». էդպէս էլ էրինք: չիմի դուք ի՞նչ շատ մայիս կուտաք քաղքէն եկած գաղակներուն. էնոնք որ կան՝ բոլորն էլ Աստծու ճամբեցէն զուս ելածներ են. վերէ աշեցէք, այ, էնոր, էն չէքիմբաշուն մաքերդ բերէք, որ Լոխմանն էլ քովը հէջ է. մեր տեղն էլ էն է, դարմանն էլ էն է:

—«Աւելաբանը կաէ, թէ մինչի Աստծու մատը մէջը չըլլի, մեր մի մաղն անգամ չի ճերմկի. ըսել է էս ցաւը որ կայ՝ իսկը Աստծու հրամանով է, եկել է մեզի պատժելու համար. ի՞նչ կարանք էնէ. Աստծու հրամանն է, անտեսունչ պիտի տանինք, պիտի

համբերենք. Քրիստոս էլ նեղ օրերին համբերել կը քարողէ. գուք գիտէք, սիրելիք, եփ որ իրեն Տէրն Մեր Յիսուս-Քրիստոսին խաչեցին՝ ինչպէս հեղ գառը զլուխը խոնարհեց, հէջ մէկ չաքաց, հէջ մէկ «օ՛Փ մարիկ ջան» ջըսաւ... մենք էլ համբերութիւնով էնոր պիտի նմանինք:

—«Մեր ձեռքէն եկածն հիմի էն կլինի, որ, թէ կարանք, կիրակի առաւօտ մատաղ կտրենք, գեղի չորս բոլորը թափոր մանգանք, մեղքերուս թողութիւն ինդրենք, մնացածը իրեն Աստծուն թողնինք:

—«Դէհ, օբհնեալ էք և օբհնեալ եղիցուք:

Ու դառաւ գէպի տիրացուները.

—Տիրացու Մանուկը ծունկ չոքեց. Նրա հետ

ծունկ չոքեցին երկու դասի տիրացուները և ժողովուրդը: Տէր-Զօրաբարէն ինքը բարձրացաւ սեղան, ճաղատ զիխից հանեց իւղոտած ֆէսը, հայեացքը յառեց Տիրամօր պատկերին և բաղուկները պարզեց վերի:

Տիրացուները նուազ և մելամաղոտ ձայնով երգում էին տէր-ողորմեան, ժողովուրդը հայեացքը ծով դարձած արտասուակալ աչքերը յառած Աստծու տան կամարներին, բազուկները տարածած վեր՝ սրտաբուղի աղօթքները վեր էր առաքում. Նրա շըրթունքները հաղիւ էին շարժւում, որոնց արանքով շշոնջը դուքս թուշելով կասես հեռանում-վերանում էր գէպի Սմենաբարձրեալը:

Երբ տէր-ողորմեան վերջացաւ, միքանի վայրկեան խորհրդաւոր և խոր լոռվթիւն տիրեց, մինչեւ

որ իւր աղօթքը վերջացրեց էրէցը, արտասուալիս աչքերով դէմքը քսեց ո. սեղանին և յուշիկ քայլեցով իջաւ ներբռն:

և թէ աղամարդ ընծապատեցին ակը հօրոք:

— Վո՞ւ կարգիդ հաստատ մնաս, տէրտէր ջան,
տուր, տուր իդի սուրբ աջդ համբուրեմ:

— օծեալ կարգդ հալմալ ըլլի, Տէ՛լ Զօրաբա-
քէլ, Եղ ինչ անկող (կոխաս) քարող էր:

—Պաշտում-պատարագի քեզի օգնական-պահապան ըլլի, աէր հայր, որ մեզի համար էդպէս միջնորդ ես Աստծու առաջ:

Երէցը գլուխը շարժելով աջը մեկնում էր աջ
ու ահեակ համբռութելու և անդադար կրկնում.

—Աստուած օրհնէ, որդի, Աստուած օրհնէ...

IV

Հետևեալ կիրակի առաւօտ աղօթալանը նոր
էր կարմրել, որ գիւղի արեելեան կողմում մի բարձր
թմբի վրայից կապսյա ծուխը վեր էր բարձրանում
և թեթև հովիկի առջե ցրիւ գալով անհետանում էր
օդի մէջ: Թմբի վրայ իրար քովէքով շաբած էին
երեք կաթսայ, որոնց շուրջը մի խումբ մարդիկ ան-
դադար շարժման մէջ էին. Նրանցից ոմանք ձեռքե-
րի ակինչները կաթսաների մէջ ձգած խառնում էին,
ոմանք կաթսաների տակի կրակին աթար էին աւե-
լացնում, ոմանք գնում-գալիս էին ամանեղին և ջուր
էին կրում. Նրանք մատադ էին եփում:

Այդ երեք կաթսայից բաւականին հեռու երեք

մեծ քաղի վրայ զրած էր չորրորդ կաթոսան, որ լլց-
րած է աղբիւրի մաքուր ջրով և բերանը դաստա-
ռակով խնամքով ծածկած:

Սրբն արդին Արուկի սարի ետևից նոր էր դուրս հանել իւր մեծ, կարմիր երեսը, որ եկեղեցու զանգակները սկսեցին հատ ու որոշ զօղանջել. այդ զօղանջը կասես արդարներին լինէր հբաւիրում երկրպագելու: Հաւատացեալներին լինէր հբաւիրում երկրպագելու: Զօղանջող կոչնակի ձայնի տակ ամեն ինչ հանգիստ էր, լուր և խաղաղ. բայց յանկարծ եկեղեցու դրոնից լսուեց մի շփոթ, մի աղմուկ, մի իրարանցում, մի խոնումն, որոնց մէջ թագաւորողը տիրացու Մանուկի զիլ-բարձր ձայնն էր, որը շարավանը տուած փոքր տիրացուների ձեռը ինքը գլուխը վեր ըընած երգում էր. «Որ յանէից Ստեղծող գոյից արարչակիցը». Նրա կտեսից Տէր-Զօրաբարէլը խաչը ձեռին, շուրջառը վրան գցած, որի մի կողմից խաչվառը կրող տիրացուն էր գնում, միւս կողմից բուռվառ անող ախրացուն, իբրև առաջնորդ հաւատացեալ հօտին՝ շարժուեց դէպի մատաղատեղը. Նրա ետեից ընթացաւ ժողովուրդը, որն այդ գուրս գտնու ըստէին նման էր այն ձագ տուող վեբակին, որի մեղուներն հեղեղի պէս դուրս են վիժուալ նեղ ծակից. Բոպէապէս կտուրներն ու վողոցները լըցուան մարդկանցով: Հառաջանքների, արտասառքցուան մարդկանցով: Հառաջանքների, արտասառքների և աղօթքների մըմունջը տիրացուների ձայնի հետ խառնուած մի անսովոր շարժում, մի վեհափառ ուղերձ էր ներկայացնում դէպի Ասենակալլ-Սմենակարողը:

Երբ ժողովուրդն հասաւ մատաղի աերգը՝ Քա-

հանան բարձր ձայնով սկսեց «օրհնութիւն և փառք չօրը», ու հետո էլ լիքը կաթսայի շուրջը ման գալը. իսկ տիրացուները սրապուղիս ոգևորութեամբ կոչում էին «ամէն, ալելուխ, ամէն ալելուխա»-ն: իսկ երբ հասաւ այն խորհրդաւոր-սրբազն բոպէն, որ հարկաւոր էր ջուրը օրհնել-օծել՝ երէցն հանեց իր զիմից ֆէսը, որից նրա մեծ դէմքը վարզորդեայն շեշտակի ճառագայթների առջև իւր լայն և փարթամ, այդ օրը ինսամբով սանրած մօրուքի հետ աւելի պատկառելի-վեհ տեսք ընդունեց, չոքեց գետինք: մաշտոյն առաւ ձեռը: Նրա հետ ծունկ չորեց, գետնին տարածուեց բազմաժիւ ժողովուրդը, որն ամբողջ թումբը բոնել էր, աղերսալի հայեացը յառեց գէպի Աստծու կապսյու աթոռը և յուսավառ մըմնջաց. «Տէ՛ր բարերար, Արարէ՛չ երկիքի ու գետնի, Քեզ ենք ապաւինել, Գնա զիտես»...

Նախագահ անհամնաբոյժն ու թուրք բէզն ևս դնացել էին թափուրին ներկայ լինելու. նրանք լոկ հանդիսատես չկարացին մնալ, չոքեցին գետնին անզիտակցաբար բնազգով, իրենց սիրտն ու հաւատը խառնեցին-հաւատաբերեցին այն անգէտ, պարզ և ուամիկ ժողովրդի սրտի ու հաւատի հետ, և ինքնարեցար մըմնջացին. «Տէ՛ր Թագաւոր, Գու որ Ամենակարողն ես, ամենի Կառավարիչը կեանք տուողը, մահ ուղարկողը, Գնա լսես այս տանջուած սրտերի ամբիծ աղօթքը»:

Այդ, սրտերին հանգստութիւն և փափկութիւն պարզապատ բնովէին նախագահի աշքն ընկաւ գիւղանես կաս-կարմիր ներկուել էին. դա հայ զեղջ-

կուհիների կարմիր զոկնոցների զոյնն էր, որ փայլում էր արել ճառագայթների զիմաց:

— Նայիր, պապաշան, նայիր թէ ինչպէս այդ գեղջկուհիները ծածկել են ողջ զիւղի կառւրները, և ինչպէս ծանկ չոքած, ձեռքերը վեր պարզած հաւատով և յուսով լի աղօթում են. նայիր, և երանի գետապով հազար երանի, որ նրանք, այդ անդէն ժողոտուր, հազար երանի, որ նրանք, այդ անդէն ժողոտուր, վուրդը թշուառութիւնների և աւերումների մէջ էլի ունի կեանքի մի յենարան, սրտի մի սկսն:

Այդ բոպէ քահանան վերկացաւ. վերկացաւ և ժողովուրդը: Քահանան «օրհնեսցի և սրբեսցի»-ն բարձր և ահեղակոչ երգելով աղաւնու բերանից սրբած երեք կաթիլ կաթացընեց ջրի մէջ և աջի Մեռոնը երեք կաթիլ կաթացընեց ջրի մէջ և աջի խառնուց, ու «Հայր-մերով» թափորը վերջացը:

Այդ ժամանակ ժողովուրդը սաստիկ ուժով զըրոհ տուեց գէպի կաթսան այնպէս, ինչպէս ոշխարը աղին. բարձրացաւ մի իրավանցում, մի աղաւրը աղին, բարձրացաւ մի կանչ ու ճիշ, մի անկարպուզակ, մի շփոթ, մի կանչ ու ճիշ, մի անկարպուզակ, մի շփոթ, մի կանչ ու ճիշ, մի կարպելի է շուտ ջուր վերցնէ, շատ սան, որ սրբան կարելի է շուտ ջուր վերցնէ, իւղ-ջուր վերցնէ, երեսի մեռոնու տեղից վերցնէ, իւղ-ջուր վերցնէ, երեսի մեռոնու տեղից վերցնէ: Իւղ-ջուրի միջից բարձր գոռաց աջուահեակ խփելով, ծիկի միջից բարձր գոռաց աջուահեակ խփելով, միջից բարձր գոռաց այս սիմեոնի միջին անդէն այդ բոպէին մի պէտին, կեանքի ու մահուան ինդիր այդ բոպէին մի

կաթիլ օրհնած ջուլը նրանց համար աւելի թանգ
էր, քան աչքը, երեսը:

Երբ բէզն ու նախագահը վերադաշտան տուն,
լինը դեռ պատկած էր անկողնում. նա նրանց տես-
նելով ձգուեց տեղաշուրում և մատերը ճկատացնե-
լով ու յօրանջելով հացցրեց.

Թափորին հասնք:

—Այն, հասանք:

—Է՛, ինչ տեսաք:

—Հաւատ ու աղօթք:

—Հաւատ ու աղօթք:

—Այն, հաւատ ու աղօթք:

—Միամյն... ել ուրիշ ոչինչ... եսկ հրաշք...

—Ինքդ բժիշկ ես. նախ գտիր, հնարիր այդ
դժբաղութեան դէմ մի միջաց մի հրաշք, ապա և
մի հաւատիր նրանց հաւատին ու աղօթքին:

—Ո՞հ, տղիսութիւն, տղիսութիւն, դեռ որ-
քան խոր են քո արմատները, որ հաւատն ու ա-
ղօթքն անգամ քեզ համար հալսուահարւում են—,
համարեա անլսելի քթի տակ մըմուաց լինը:

ԹԱՐՈՒ ԾՂԻ ՄԱՐԹՈՆԾ

ՈՒՂԵ

—Այժմ արդէն նրանք երկուոն էլ մեռած են.
ես կաբող եմ ձեղ պատմել այն զէպքը, որ աելի է
ունեցել իմ մանկական հասակում. այդ զէպքն յիշո-
ղութեանս մէջ այնքան թարմ է, այնքան կենդանի,
որ կաւս այսօր պատահած լինի—, այսովէս սկը-
սեց Մկոյնից Մարկոսն իւր պատմութիւնը ընկերա-
կան մի փոքր շրջանում.

—Ես և մեր հարեան Թորոս աղայի թուր
Սանոօն գառնարածներ էինք. ամեն առաւօտ սովո-
րական ժամանակ գառները դուրս էինք հանում
գառնոցից, խանուում իւրաք հետ, աանում արածաց-
նելու, և օրը ճաշ գառած վերադաշնում տուն:

—Ես երբէք-երբէք չեմ կաբող մոռանալ իմ
կեանքի գարունը, երբ դեռ ես տակաւին զիւղական
պարզ, անսպաճոյն աշխոյժ մանուկ, առաւօտները
վաղ վեր էի կենում տեղիցս վաղ տալիս ոչխարա-
նոց, բաց անում գառնոցի դուռը, գառները տա-
նում արածացնելու գալաք մարգագետինները, սե-
ղաւէտ թմբերը, ծաղկազարդ բլուները, ճնճպա-
զաւու կալերը, ուր վերեկց ջերմացնում էր սսկի
շրաբու կարաւաց վշում կենուունակ հովը, ձորակում
կարկաչում վծիտ առուակը, ծաղկից ծաղիկ տղալ-

դում աշխատասէր մեղուն, շուրջս դէսուգէն վազ
տալիս փոքրիկ չնիկս, վերևում ճախրում ու երգում
դեղասէր արտօւաը, մօափիկց լւում աշխատասէր
մաճկալի «մաճկալը մաճին» երգն ու հօտապի «հօ-
տաղ, քշէ վար անենք», անհոգ հոբովէլլ... որոնք
մի բնական ներգաշնակութեամբ կեանք ու ուրա-
խութիւն էին աւետում-աւրածում չորս կողմը; Ես
նայում էի այդ ժամանակ իմ փոքրիկ հեղ և խոնարհ
հօտին՝ կարմիր, կապոյտ, ու ու սպիտակ խատու-
տիկ գառներին, որոնք մուշ-մուշ արածելով նոր բը-
սած խստը անհոգ կերպով կայտում էին... և չգիտեմ
ինչու, ես լցւում էի մի ինչոր անհուն երջանկութեամբ:

—Երբ արկը զէնէթին մօտենում էր, մենք
գառները բերում էինք ոչխարանոց, վակում գառ-
նոց կոչուած բաժնում, սպասում ոչխարին: Քիչ ե-
տոյ գալիս էր ոչխարը: Տանտիկինը քուղանները
թենքը զցած գալիս էր ոչխարը կթում, ապա մեզ
իրաւոնք տալիս գառները թողնելու մօրերու վրայ:
չէնց որ բաց էի անում գառնոցի դուռը, գառներն
հեղեղի նման իրար գլխով թռչելով դուրս էին
թափում գառնոցից և մա-մա անելով վազվելով
իրենց մայրերին վնասում: իսկ ոչխարները բա՛լա
անելով զնչերն երկարացրած հոտոտելով իրենց զա-
ւակներին էին որոնում: Նրանք վերջապէս գանում
էին իրար, գառը չոքում էր մօր տակը, պինդ-
պինդ խփում նրա ուրին, որ կաթը վէր անի, ծը-
ծում պտուկներում եղածը չորացնում, վեր կենում:

—Մենք բաժանում էինք զաւակներին մայրե-
րից, ոչխարն յանձնում հօփուին, իսկ գառները նո-
րում տանում արօտ:

—Մի օր էլ ըստ սովորականին, երբ մեր ոչ-
խարանոցի մօտ մեր և Թողոս աղի գառներն էինք
հօ՛գ-հօ՛գ անում, այսինքն միմիանցից ջոկում, մեր
աչքին ընկաւ մի փոքրիկ կապտագոյն փամփլիկ ու-
լիկ, որ երկու հօտի մէջ մոլորուած մկմկալով
դէսուգէն էր գառնում, ու չէր իմանում որ կողմը յա-
րի, որին միանայ:

—Մեր հօգ-հօգին անսովոր լինելոց երեսում էր,
որ նա օտար էր լինելու:

—«Սանո՞ւ, էս ո՞ւմ ուլն է—, հարցըրի ես:

—«2զիտեմ:

—«Խոյ ձերը չէ:

—«2է՛, մենք էղպէս. առանց նշանի ուլ չու-
նինք:

—«Ապա ո՞ւմն է:

—«2զիտեմ:

—«Օտար ուլ է. հարցնենք աղոցն իմանանք:

—«Ինչի՞ համար իմանանք:

—«Տեսնենք ուլն է, տիրոջն իմաց տանք, գայ
տանի:

—«Եփ որ իրեն ոտքովն է եկէ, ու ինչ հար-
կաւոր է իմաց տալ, որ գան տանին:

—«Հապա ինչ էնինք:

—«Ինչ էնենինք:

—«Հմա:

—«Տանենք մորթենք:

—«Մորթենք»—, կրկնեցի ես և զգացի թէ
ինչպէս ջանս մի անսովոր դող ընկաւ և սիրտս
սկսեց արագ-արագ լսիել:

—«Հմա, մորթենք:

— «Ե՛, մեղք չէ:

— «Ի՞նչ մեղք... էսքան որ գառ ու ու կմոբ-
թեն կուտեն, մեղք էլ...»

— «Այսը ուրիշի է:

— «Ի՞նչ լաւ, որ ուրիշի է:

— «Ե՛, ես չեմ կարայ. տէրտէրս իմանայ կը-
ծեծէ:

— «Ի՞նչի պիտի իմանայ. կատանիք մեր օչխըր—
գոմը, էնսեղ կմոբթենք:

— «Ե՛, պապկ իմանայ չի հեռուաի:

— «Ի՞նչի պիտի հեռուաաի. հակատակը, կուրա-
խանայ, կոռիք... Մերոնք՝ պապս, հօրօղբակըս, մե-
րնք բոլոըը եփ որ մեր օչխըր մէջ օտար գառ ետ
ու կպատահի կըունեն, կմոբթեն կուտեն:

— Իմ մանկական ականջին այդ խօսքերը հընչ-
ւում էին առաջին անգամ, և թւում էին անհաւատա-
լի, անիրական:

— «Ե՛, ես չեմ կարայ, ես տիրոջը իմաց...

— «Ի՞նչ—, աչքերն երսիս չոեց Սանոօն.—
դու գիտի ինձի... Ու վրայ հասաւ,

— Սանոօն թէե տարիքավ մեծ չէր ինձանից,
բայց իսկապէս ասած լրտոթեան հասցրած յան-
դուկն էր. ես նրանից վախենում էի:

— «Դու տիրոջն իմաց տնւր ու տես հալդ:

— «Ե՛, չէ—, երկիւղից խօսք տուի ես:

— «Դէ երթանք, ուլը տանինք—, քարչ տուեց
իւր ետեից ինձ Սանոօն գէպի իրենց ոչխարանոց.

— Ուլը պառկեցընք. ես բռնեցի ոտքերը, նա
նստեց վորին և սկսեց մոբթը:

— Այդ բոպէ ես կատարելապէս խղճում էի

փոքրիկ անպաշտպան ուլիկին, որ Սանոօի ծան-
րութեան տակ ճնշուած մարմնի զալարումներով ու-
զում էր վլուխը մի կերպ ազատել նրա ձեռքից:

— Սանոօն տեսաւ, որ իւր գանակը չի կարող
կոկորդի վրայի փափուկ մազերը կտրել, սուր ծայ-
րը խըց ներս և ուժով թափ տուեց առաջ, կո-
կորդը կարեց:

— Արկմը դուրս հոսեց: Մենք թողինք վեր
կացանք. ուլիկն սկսեց չարչարուիլ, ոտքերն իրար
տալ:

— Այդ բոպէ ոչխարանոցի դուռը ճռռալով բա-
ցուեց, տեսնելունախ ներս շարժուեց ոտնամանը վրան
մի սպիտակ ոտք. ապա սե վափաղի սուրուկիկ ծայր,
ապա շալուարի լայն վողքերով միւս ոտքը, և ապա
շուխէն հատին մի հաստ իրան, որի ուռած փորն
ու լայն կուրծքը պարփակում էր լաստիկ փայլուն
վերից մինչև գօտին կոճկաւոր արխալուզը: Սա Սան-
ոօի պապն էր, Թորոս աղէն, որ ծանը ու մեծ քայ-
լերով եկաւ, ըստ սովորականին իրենց գառներն
համարելու:

Պ

— Նա երբ մեղ պատի հետ կանգնած տեսաւ
արնոտ ձեռքերով, ուլն առջևներս թապլտուելիս,
հարցըց:

— «Ե՞լ ինչ կէնէք:

— «Գառներու մէջ մի օտար ուլ կար, մոբթե-
ցինք աղա, էն' է—, համարձակ, նոյն իսկ հպարտ
կերպով պատասխանեց Պապին Սառօն:

— «Հայ լաւ էր էրէէ, ապրիլիք. այ, միշա էղ-
պէս զոշաղ եղէք... Ապա, տեսնինք լամն է. գէր է.
վաղնաց է միս չէի կերէ... Ու մօտեցաւ ուլին:

— Ուն առնելով մեծիկ թաթեղի մէջ շուռու—
մուռ տուեց, նայեց, ասպա յանկարծ վայր ձկեց ձեռ-
քից, աչքերը մեղ վրայ խոժոռեց ու զոռաց.—վայ
ես էն ձեր... Ու յարձակուեց մեղ վրայ:

— Ես առանց պատճառն իմանալու սրտաճար
դուրս թռայ:

— «Ի՞նչ է, ինչի կը քը ես—, վախեցած իմ
ետեկց վաղ տալով հարցրեց Սահոօն,

— «Ելիդ քնոն է, շան լակոտներ, մեր նոր
ծնած ուն էք մորթէ...»



ԾԱՅՐԵՐ

I

Պարզավառի շաբաթ երեկոն էք: Հիշտեկ լի-
նելու պատճառով ծ... գիւղի բնակիչները այդ օրը
սովորականից վաղ էին վերադարձել դաշտից. նը-
րանցից միքանիսը հաւաքուած Մօսիկենց շաբախի
տակ, իրար հետ զրոյց էին անում: Այդ երեկոյեան
խօսակցութիւնն այնքան դանդաղ էք, այնքան տաղ-
տուկ, որ կասես վրան սև քող կրում լինէք:

— Բախօն գեռ չէ եկէ—, տիրող լոռութիւնն
ընդհատելով հարցրեց Մօսիկենց տան ծերունի Պու-
պուշ Ատան:

— 2է:

— Եղակս էլ ձախորդութիւն. իմ՝ զմ մարդը
սաղ օրը ոտով ընկել է գեղէգեղ, աէրտէք չի կա-
րայ ճարէ, որ գայ մեռելը թաղէ:

— Ե՛է—, սիրալ քաշեց Պուպուշ Ատան.— էդ
ձախորդութիւնը միք կարծէ, թէ մենակ Ռարօի հա-
մար է. էդ ձախորդութիւնը սաղ գեղի համար է:

Նրա խօսքերը նստողների տրամադրութիւնն
աւելի տաղտուկ, մինչև իսկ խղճակի դարձրին: Խօ-
սակիցները սրտերում ինչոր մտախոհելով դէմքերը
թթուացըին և նայեցին երկինք:

Սրեմուաքի վարդագոյն ամպերն արդէն զըր-
կուելով արեկի վերջին ճառագայթներից, կասես ար-
նաքամ դէմքի նման դալկացել էին. նոր ծնած լուս-

նի մահիկը սողալով նրանց բարակ շղարշի ետև՝ երբեմն դուրս էր նայում ճեղքելից և իւր թոյլ դողդողացող շողքերը մաղելով երկրի երեսը՝ ազօտ կերպով լուսաւորում էր խօսակից գիւղացիների դէմքերը, որոնք այդ ուրախ տրամադրութիւն պատճառող տեսարանի առջև դարձեալ դալուկ էին, դարձեալ վշտափի:

— Մեղք ու կրակէ էս տեսակ բանը:

— Մեղք ու կրակ ըսկիր ու պրծամար, մեռածի համար մեղք բան է ու մեղք բան, ուաղի համար էլ աւելի:

— Հըլըն, տղէք ջան, էն մեռածի մեղքն էլ մնացած ողջերունս է—, վրայ բերեց Պուլպուշ Ատան, երբ յանկարծ նրանց առջև կանգնեց բարակ մահակը ձեռին, փափազը ճակատից ետ քշած, չէրքէզն ուսին Ռարօն, և թունաւոր սրտով ժայթքեց.

— Վնասառուածներ... էգուց էլ մեռելս գետինն է մնալու...

Սյդ խօսքը կառես մի ծանր հարուած լինէր, որ Ռարօն իջցրեց նրանց սրտին: Խօսակիցները թէ մի ջերմ կարեկցութիւն զգացին դէպի Ռարօն և թէ մինոյն ժամանակ ծանր յանցանք իւրենց հոգուն:

— Էս ըլլելու բան է, համ, ըսէք, էս ըլլելու բան է, որ ամառ ժամանակ մեռելն երկու օր գետինը մնայ. էս գեղականութիւն է, էս քրիստոնէի չնո՞ք է... հայ քանդուի էս տեսակ գեղը, հա, որ էսքան ժամանակ է, անտէրտէր է—: Քարկութիւնից Ռարօն շրթունքներն, ինչպէս և ամբողջ մարմինը դողդում էին. նրա քրտինքի մէջ կորած, կարմրած դէմքը ինչոր անախորժ արտայայտութիւն էր կը-

լում.— զնացի Ջիզրաշէն տէրտէրի քով, թէ «էկուց մեծ մեռել ունիմ, պատարազով եմ վերցնելու»:

— Մեծ մեռել... քթի տակ մրմռաց Պուլպուշ Ատան. — մետամ (միթէ) մեռելի էլ մեծ ու պատիկը կայ:

— Անտէր մնայ հարստութիւնը, չիտես Պուլպուշ Ատա, հիմի ով որ փող ունի, էնոր մեռելն էլ մեծ կըլլի—, վրայ բերեց նրա մօտինը և սիրով քաշեց:

— Գնացի Տիլիֆ—, առաջ տարաւ Ռարօն, — էլ շթողին էլ թէ տէրտէրի երես տեսնիմ, սազ գեղը վրէս թափաւ. «մկա մընք էրէց լը ձեռնազընը տուեր հնք, մկա խաց լը կիտանք, կպախնք մըն ժամ պատարագի լը խամար. յորի ամեն օր էրէցի աղքատի լը սկէս մըք գեղ կի վագէք. մկա էրէց խատ մէկ լը կեղնի, երկուս լը կեղնի. մկա ինչ շատ խոզի կի կսանէք... Մկա մընք լէ խայ քրիստոնի-ա ինք, վաղը մատաղ-պատարագ լը ունինք, մըկըլ օր-սի վաղը մատաղ-պատարագ լը ունինք, մըկըլ օր-սի վերեզմաններ օրխնիլս տի տանք... Մկա էրէց ըսած-ըսդ զգալ ետ շերեփ լը չէ, որ ամեն անգամ լը փոխ խանք... Մկա շընք խայ. գինա, մկա էս խեղը լը ուրիշ տեղէ ի տար:

— «Հնիք տայ» ո՞րն է. ինչ իրաւունք ունիք շտալու. այ գործակալի հրամանը ծոցս է». գառան թէ, «մկա պարուն գործակալ էդ զիր լը տալու տեղլակ յորի ինք լը չեկաւ ձըզ մըռել թաղելու. ընդոր խամար, որ ունդնք քաղքցի ին խամ. զոռքան ին խամ, մըզի լը բանի տեղ չեն ի զներ խամ: — էդ ժամանակ տեսնիմ տէրտէրը դէմին կուզայ. որ տեսայ ճուացի, թէ «զօրնիկ կտանիմ, իշխա-

նութեան հրաման է. գանգատ կուտամ սաղ գեղիդ Սիբիրական կէնիմ. ոռ տէրտէր, արի երթանք»: Դարձան թէ «—Այ էրէց, թը որ լի տի զինաս՝ այ շիտակը քզի կսենք, մկա էլ մըր գեղ զոտք չի դնես...Մկա մընք էլ չընք ուղեր...»

—է՛, տէրտէրն ինչ ըստ—, հարցրեց լսողներից մէկը:

—Էն էլ գարձաւ թէ, «յորդի», մկա կի տենաս ինչ կզրուցեն. վաղ լը չըմ կարայ, թէ լը կուղես մըլըլ օր սի կիդամ...

—Կճուամ, թէ «տէրտէր, աշքդ բանց, իշխանութեան հրաման է»: Դարձաւ, թէ «այ, իդա լը իմ իշխանաւորներ...»

—Թէրւ, թէրւ... անխսաւ հարամդադաներ... մարդ էլ էրքան անխիզ ըլլի, որ տեսնի մեռելի տէրը դէմը կանդնած, էլ տեսակ խօսքեր խօսի—, տաքացած վրայ բերեց մէկը:

—Մշեցի քրդի ջինս են, է, ախր ինչ պիտի ըլլի...

—Ճշմարիտ է, էրածները լաւ բան չէ, համարդդանց ինչի բան կսես—, խօսեց մի երբորդը. —մարդիկ մի կողմով էլ շիտակ կիսուին. ինչի էնոնց վրայ կնեղանաք. նեղանանք մեղ վրայ, որ էս քանի ամիս է առանց տէրտէրի կմնանք:

Լսողները խօսք չգտնելով այդ մասին ասելու, դարձեալ լրեցին, և նայելով Ռաբօի երեսը կատրելապէս մնացին քարացած:

—Աստուած օղորմի Տէլ-Մելիտոսի հոգուն—, ցածը ձայնով սկսեց Պուտուշ Ստան. էնոր մեռնելն անցել է հինդ-վեց ամիս, քանի հեղ էս տեսակ

բան է պատահէ, քանի հեղ խօսք է եղէ տէրտէր ջոկելու համար, էլի մնացել է էնպէս... Ամեն անգամ, որ մեռել կամ կնունք է պատահէ՝ մեր քաշածն էս է եղէ. հիմի դուք ըսէր, ինչ էնէ էս մարդը, որ ջուրն ընկնի... Երկօր է մեռելն աչքերու առաջը պատկեցըած՝ լաց ու շիւանը աներէն անպակաս է. մարդ որ առն կմտնի՝ անեցոց մաղիկ-մաղիկ գալուց միսը վրէն կսարսուի...

Այդ խօսքի վրայ Ռաբօն աւելի զգացուեց ու յուղուեց. Նրա ներսը կասես փուլ եկաւ, սկսեց բարձրքարձր սաստիկ հեկեկալ, «Եմլըում, եաւըում ջահէլ ջիւան ախպէս... ինչքան անբաղդ ես դու, որ կանանչ արեդ մարելին ետե էլ պիտի անբաղդ մնայիր, ու հողը գրուելու էլ չպիտի արժանանայիր»...

Այդ հեկեկանքը կասես մի կենդանի անէծք, մի անզզում մեղք լինէր գիւղացիների համար. անզգայ կերպով նրանց աշքերը տամկացան, և արտասուքի կաթիլները վլորուեցին ցած:

—Էս հայ քրիստոնէի չնորք չէ, դուքքան ձեզի, էս հայ քրիստոնէի չնորք չէ, որ էպուցուան օրը սաղ գեղը մնալու է ասանց պաշտում-պատարագի. էդ բանը սաղ մնացածներու համար մահուան հաւասար է. սկիհը, մեռնիմ իրեն, վայ ինձ, վայ ինձ, բերանս ինչ կուզայ, կեցած տեղը ժանդ է բռնէ, էնքան որ անմահ բաժակ չէ լցուէ մէջը. էդ ըլլեկու բան է. էպուցուան օրը էնքան մանր բա էդ ըլլեկու բան է. էպուցուան օրը էնքան մանր ու խոշոր մնալու են առանց հաղորդի. մէկել օրը էնքան հին ու նոր գերեզմաններ մնալու են առանց օրհնելու...

— Լաւ կիսոսի Պուլպուշ Ատան, ես ու իմ Աստուածս, շատ տեղակի կիսոսի —, վրայ բերին չորս կողմից:

— Տպայ կըլլի շարժներով Աղամայ մեղքի մէջ կմնայ, շատն էլ մեւսնի չհասած կմեռնի, դժողբի բաժին կդառնալ:

Պուպուշ Աստան քանի խօսակցութիւնը քաշաց-նում էր, այնքան ազդեցիկ էր գառնում նրա ասածը և այնքան լսող էին գառնում ունկնդիրները:

— ծանկը հիւանդ կրլի՝ տէրտէր շունինք, թէ
երթայ վրէն մի-երկու վլուս նարեկ ետ աւետան
կարգայ, նստի հետը խօսի, մեղքերն ու ցաւերը քիչ
թէ թէ կանչ... էղքան մեղքերն առել ենք շալիներս
ման կուզաննք, դեռ ելի չենք մտածէ տէրտէր ունե-
նայու մասին:

Տիրեց բաւականին երկար լռութիւն, կասես
բոլորի շվետունքները համբացան, լեզուները կա-
պուեցին, ոչոք ոչինչ չէր գտնում առելու, զա մի
դրութիւն էր, որի գէմ այդ լողի կռուել չէր լինի.
հարկաւոր էր լոել և հնագանդութեամբ ու համբե-
րութեամբ տանել:

— Տպէք ջան, տխրելով ու սուս կենալով բան չիլլի. եկէք առաջ-առաջ մտածենք էս մարդու մեռելն էզուց վերցնելու համար, Էնիկից ետև կարգով կանոնով հաւաքունքը, խօսինք, մեր միջի եղած տիրացուներէն մէկին տէրատէք ջոկինք:

— զատ խելօք կիսոսիս Պուպուշ Ատա, չատ
լաւ կան:

Ուարօն կսկիծ ըստառմուշատաստրին աչ քերին

դեռ շուտաբած դրութեամբ նոյն տեղում կանգնած մնագել էր, որ Պուլպոշ Ատան հարցրեց.

— 2 կղնէն սրի ձին տունն է:

Հսողներն իսկոյն հասկացան նրա միտքը ու վրայ բերեն.

— 11 —

— 14 —

—his & his:

— Ուաքօ չան, գնա մէկ սահնահօրս ձին բեր,
ես հիմի և եթ նստիմ, երթամ Սուլտա, Էնոնք եր-
կու-երկը տէրտէր ունին, մէկնումէկին խնդրեմ բե-
րեմ: Համա դուք էլ խօսք տուեք, որ քանի ցըտերը
չեն բնիչ, մի քահանայ Ծնտընիք:

—Մեր զիսի, մեր աշքի վրայ —, լոռեց չուս
կողմից:

— Հայ Աստուած օդորմի օլսալ պոլումբուկ պուն, Պուղմաւշ Ատա:

— Անըսը կաթէ մեսեն ներուդ հոգին, Վուլպիչ
Ատա—, նրան մօտենալով շնորհակալական երախ-
տափակառաթեամբ լցցեց Ռաբոն:

II

Նօթաճին, այսպէս էր ծ... գիւղի համբայ Ա-
լէքենց Մկօի պլատի եղրօը՝ Խնկանոսի մականունը,
միքանի տմիս մնալով Ախալքալաքում այնտեղի վար-
ժապետի մօտ «աւարաել» էր նօթան, վերադարձել
գիւղ, սկսել էր եկեղեցի յաճախել և իւր «կարասի
միջն ելնող» ձայնով սաղ գեղը գարմացնել: Կա
այժմ վափաղի փոխարէն զլուխը դնում էր «շապ-

խա», շալուարի լայն փողքերը թողնում էր քաշ, որ ներքեց ծավի էին տալիս լուզած ոտնամանների երեսի հետ, ման էր գալիս զլուխը քաշ և երկու ձեռքը սրտին դրած, բարե բռնած, որ ասէին ինչ խոնարհ տիրացու է, խօսում էր «ասպէս», «անպէս», «ապ», «ած» և այլ «է»ի փոխարէն «ա»-ով արտասանուող բառերով, ինչպէս խօսում են լոբազ ախալքարցիները, հաստատ համոզուած լինելով որ գրարառը (իմա գրական լեզուն) այդ է. մօրութը տանրում էր մեծ խնամքով, մաղերը կտրում էր ետերի կողմից ալա-գեղջնակ և այն.

Մեռելաթաղց նոր էր վերադարձել տուն Մըկօն, որ տեսաւ եղոսը՝ ննկանուին իրենից առաջ տուն եկած գարձեալ նստել էր իւր սովորական տեղը, քանոնով պինդ-պինդ խփում էր պապին *) ու երգում, փօօ՛, է՛է, վէ՛է, բէ՛է, խօ՞օ՞..,

— Ղուտումսաղներ, տէրտէլ կուղեն. էսորէն լաւ տէրտէրացու, մարդու ինչն է պակաս. գիշեր-ցերեկ իւրեն ժամ ու ասմոնքի հետ է—, քթի տակ մըմուաց նա և նստեց սաղրին:

Այդ ժամանակ ներս մտաւ իւզբաշին:

— Բարի աջողում Մկօ Ամի:

— Հայ Աստու բարի ին, իւզբաշի աղա, բանվ, հրամմէ, հրամմէ էսպէս օջիով զլուխը,

իւզբաշին արեխները հանեց, հողոտած ոտ-

*) Պտպ ասում են օդայի սաղբե (թալստի) երեք հաղեց մէկի՝ հայրենի գլուխի, որ ըստը է, կորը դուռ սղոցած: Այդ ամբողջ հայրը մեր առ տառի նմանութեան ունի հակառակ դեքով:

քերը միքանի անգամ խփեց տափին, իբրի թէ մաքրեց, արեխները խնամքով դասաւորեց դառապայի տակ իրար մօտ, բարձրացաւ վերև:

— Ե՛, բարնվ իւզբաշի ջան, հաղար բարի. էլ ինչ բարիդ հարցնեմ:

— Գոհանամ, շուքըեմ *):

— Աղջի նարըն, աղջի, ով կայ էղտեղ:

Սկօյի ձայնի վրան եկաւ դռան մօտ կանգնեց քիթ ու բերանը եազմայով փաթաթած մի գիրուկ, թութուշիկ հարս:

— Բեր օջախը վառէ, գիւգիւմը վրայ դիր:

Իւզբաշին ուրախացաւ, որ չայ էր խմելու, աւելի քիվ տեղաւորեց բարձի հետ:

— Դէ, կեանքիդ ու արեիդ մատան, կանչելուս պատճառը ինքդ լաւ գիտես. քեզնէն շատ բան է կախուած, չունքի էս սահաթիս սաղ գեղի տէրն ու թագաւորը դն ես. ուղենաս բոլորիս էլ թերը ետեներս կկապիս, Սիրիք քշել կուտաս...

Ո՞հ, ողորմելի փառասիրութիւն... օձը բնէն հանող լեզու...

Իւզբաշին այնպիսի մի հպարտութիւն զգաց, որ ինքն էլ չիմացաւ, թէ այդ ըոսէ ինչ էր, ինչի նման. կասես նրա երկու թեկից բռնեցին վերև բարձրացըին...

— Է՞ս սահաթիս, որ հրամայես, «Մկօ, աղէդ բեր առաջս մատաղ էրա, խնայողը չեմ. համա ախուցը խնկանոսը ինձի համար սաղ աշխաքէն վեր է. պէս իւզբաշի է, համա Աստուած առաջ շիտակ է. պտակ ախալէրս է, համա Աստուած առաջ քիզի կեանք տայ, ետե ախալօս, ետե ինձի:

*) Շեւքիւթ=թ. = շորհակալութեւն:

Խնկանոսը որ մինչ այդ փօ՛-է՛-լէ՛-ով էր զբա-
ղուած, այդ խօսքերից ոգեսրուած աւելի սաստիկ
զեց:

Այդ ժամանակ պղորտը ցայելով ներս մտաւ
թրքախառն վրացնակ տարագով մի բարակ և եր-
կար բոյով անձնաւորութիւն, որ թէև ծ...-ցի էր,
սակայն գեղջնական ոչինչ չէր թողել վրան:

—Բարի իրիկնան աղանձնում:

—Հայ Աստծու բարիշն, Պաւլէ կնեազ, բա-
րով. հրամմէ, հրամմէ էսպէս օջախ զլուխը, իւզբա-
չուս դիմացը:

—Բարով եկար Պօղոս բակ—, իւր կողմից չե-
ղած բակին ու սուտ կնեազին բարեեց իւզբաշին:

Պօղոսը, կամ ինչպէս զիւղում նրան կոչում
էին Ամպարտաւան Պօղոսը ձեւը տարաւ բերանին,
ետոյ աշքին, ետոյ ճակատին և ապա օդի մէջ: Ապա
չուխայի լայն թերերը ետ ծալեց, մատերի երկու
ծայրերով ոլորեց-պեց բարակ պեխերի երկար ծայ-
րերը և հանեց ծխատուփը:

—Դէ, Մկօ Ամի խօսքիդ թելը մի կտրէ.

—Աւելորդ խօսելու ինչ կայ, Պաւլէ կնեազ
ջան. իմ խօսելս հեռի ձեղնէն, ձեզի չհասկցողի
տեղ դնել կըլի. հըն, առջիներդ է, կայ ու կերե-
ւայ. թէ անարժան է միք կամենայ:

—Խօ՛օ՛, նէ՛է՛, պաշա՛, փօ՛օ՛—, չհայելով նը-
րանց խօսակցութեան էլի իր նօթան էր շարունակում
Խնկանոսը:

—Սպասիր, ինչպէս թէ «անարժան»—, ցոյց
տալով, թէ սաստիկ վիրաւորուած է «անարժան»
խօսքից, որ Մկօն ուղղեց եղբօր վիրաբերմամբ, ա-

ռաջ տարաւ Պօղոսը,—մենք տիրացու պարոն Խըն-
կանոսի ուսումը, զիտութիւնը չիտենք, ինչ է, որ
էդ տեսակ կխօսիս:

—Էդ էդպէս է. Պօղոս բակ ջան, շիտակ է,
համա Մկօ Ամու ըստածն էնէ, թէ Մարանչոնց Դաւ-
թի մանչուն Քիստոսին էլ ուղող կայ:

—Ո՞վ, էն թիզուկէսը... մեակամ ես մե-
ռած պիտի ըլլիմ, որ էնիկ տէրաէր զառնայ... Տէր-
տէրութիւն չէ էնոր զիւլիւով տալու է, զիւլիւով...

—Ջիտակ կսէ Պաւլէ կնեազը, ես իմ Աս-
տուածու—, վրայ բերին նոր ներս մտնողները, —էն
օրս էն խայտաւակութիւնը հանեց չայիսը (խոտա-
տեղ), էն խայտաւակութիւնը, որ...

—Ցօ, զուք էստեկ բանի անկաջ էրէք—, ա-
ռաջ տարաւ Պօղոսը,—վիճակ ենք ցքէ, չայիրը բաժ-
նել պլծել ենք. մէկ էլ էսիկ եկաւ, թէ «զու հա-
րամ ես. քու տեղդ լամ է, մերը վատը. փոխենք.
տօ, կսեմ, էն վախտը որ վիճակ կցըէինք խելքի
նրանեղ էր. ինչի՞ ձէն չհանեցիր... Դարձել է կսէ,
թէ «ես զիտէի, թէ լաւ տեղն ինձի է ընկնելու...»

—Դէ առ իւզբաշի ջան, առ, առ մեղի օրն-
է—, օղու գաւաթը նրան մօտեցըց Մկօն:

—Զէ, առաջ Պօղոս բակին տուը:
—Զէ, առ, լաւ ձեռք է. էսօր-էսօր իւզբաշին
դնել ես, հօլը քուկդ է—, վրայ բերեց Պօղոսը:

—Է՛, Մկօ ամի, Աստուած առաջ-առաջ տի-
րացու Խնկանոսին իրեն մուրազին հասցնէ, ետե
օջախդ միշտ և հանապաղ էսպէս շէն ու պայծառ
պահէ. Պօղոս բակ, քեզի էլ միշտ Աստուած էդպէս

դոչաղ պահէ, բարեկամիդ հետ բարեկամ, դիւշմնիդ
հետ դիւշման:

— չապա ինչ է. լաւ կսէ իւզբաշին. մարդի
էն է, որ չնութիւնն էլ ձեռնէն դայ, մարդկութիւնն
էլ—, Պօղոսի հասցէին խրախուսական շնչացին
միւս նստողները:

Երկրորդ բաժակը վերցրեց Ամպալտաւան Պօ-
ղոսը. նա փափաղը գլխից վայր առաւ, դրեց գե-
տին ու դառաւ.—այ, նվ որ էսօրուայ խօսքէն ետ
դաւոնայ՝ գլխուն կնկայ լաշակ ունենայ ծածկած.
խօսք մէկ, Աստուած մէկ. մեր տէրտէրացուն տի-
րացու պարոն Խնկանոսն է, մինչի էնոր մեր զըլ-
խուն տէրտէր ձեռնադրել չտանք, հանգիստ չնըս-
տինք. իմ մասին անհոգ եղիք. ես խօսքիս տէրն
եմ. ես Պօղոս բակն եմ, ինձի Պաւէ կնենդ կսեն.
սաղ ըլլիք—, ու կոնծեց:

Գիրուկ, թութուշիկ հարսն սկսեց թէյ մա-
տուցանել:

— ես էտօրէն լաւն ըսեմ—, առաջ տարաւ
միւս եկողը,—միքանի որ առաջ ինձի փողոցի մէջ
բռնեցուցել է, թէ «Սանդրօ, ինձի ինչի չես ուզէ,
որ տէրտէր ըլլիմ էս գեղի վրայ. ըսի գրէէս» չեմ.
չեմ ուզէ». գարձաւ թէ «սպասիր, թէ քու մկխտանդ
փակել չտամ, նաշալնիկին գանգատ չգրեմ» ես Քիս-
տոսը շրլիմ: «Ճօ, կսեմ, ուադ եղի քանի ուաքիս
տակ չեմ առէ, քեզի չզնամիշ չեմ էրէ...» Սոխըլի
մէջ կճուայ, «ամօթ քեզի, ամօթ այդի փափիդ,
հազար ամօթ, որ գլուխի ես դրէ...»

— 2այի հետ փունջ ովկ կկամինայ—, Սանոօի
պատմութիւնն ընդհատեց Մկօն:

Բոլոր հրաւիրուածների աչքերը մնացին երկ-
րորդ շնչին:

Մկօն առանձին շախով օդու չիշը զընց իւզ-
բաշու և Ամպալտաւան Պօղոսի մէջտեղը սեղանին:

— Դուք որ հիմի էսդից կերթանք, կիմաննք,
ամեն մէկդ հաւաքեցէք ձեր մարդոցը, իրաստ աղ-
մէք, որ բերններէն ինչ որ կուզայ՝ ընտրութեան
օրը չխնացին. ըսեն, թէ պաս ուտող է, ժամ չի եր-
թայ, փարմասոն է, Աստուած չի ճանչէ, աղջիկ
խազցնող է. խառնակիչ է... մի բան կմնայ, էն էլ
ես կսեմ:

— Եկ ինչ է որ Պաւէ կնեաղ չան—, հետա-
քըրքրուած հարցըին չորս կողմից:

— Զեր ինչ բանն է. եփ որ էնակդ կսեմ, կիմա-
նաք—, գլուխը թափ տուեց Պօղոսը և յօնքերը մի
վերշոկ վեր քաշելով պաւնչը փռշտացրեց:

Տիրեց լուռթիւն, որի ժամանակ լսւում էր
թէյարանութեան ֆոշտոցը:

Այդ ժամանակ տիրացու Խնկանոսը մի-երկու
անդամ հազար, կոկորդը մաքրեց, երգեց՝ վօ՞օ՞՝ էէ՞,
վէ՞է՞, բէ՞է՞ ու դառաւ.

— Ինձի խօսք չի համնի, քանի որ մեծ ախ-
ալէրս էտակդ նստած է, համա թէ իրաւունք կու-
տաք, հեռի ձեզնէն, հեռի ձեր յարդէն, մի քանի
խօսք կուզեմ ըսեմ:

— Բսամ, տիրացն Խնկանոս, ըսամ, հակառակը,
մենք կուզենք, որ զու միշտ խօսիս մենք անկաչ
էնենք—, վրայ բերին չորս կողմից և հետաքըրուե-
ցին, թէ ինչ էր խօսելու տիրացու Խնկանոսը.

— Եփ որ քաղաքը կկարգայի, նօթա դաս
8

առնէի, սաղ քաղաքը շաշմել մնացել էր վրէս, թէ ինչ խորը գիտնական տիրացու է, իսկը քաղաքի արժան, ափսնս չէ էդ տեսակ ձէնով-ուսումնով տիրացուին, որ էն տեսակ էշ գեղացոց մէջ է:

— չըսլը գիտէք թէ մեղի պէս անգէտ են, որ մարդն էլ մէկ հաշուեն, մարդակն էլ—, վրայ բերին մի-երկուաը:

— Քանի հեղ—, առաջ տարաւ տիրացու նընկանուը—, աստուածբանութեան մէջ վէճ ունեցանք էնտեղի տէրտէրներու հետ, բոլորի էլ բերանը կապեցի, ինչպէս որ գուլպի թելի վրայ գէկապ կէնեն՝ գէկերու բերանը կլապեն, որ գիշելը դաւաը մնացած զրսաղներուն, չուտեն. փօ՛, է, վէէ... հա, համա էդ բաները մեր գեղացիք ինչ կհասկընան. գլուխ գովնէլ ըլլի, Աստուած հետու տանի, հիմի էս տիրացու տեղովս հարիւր տէրտէրի մէջ որ նըստեմ՝ թէ յիծծընէն ցած ըլլիմ, մի սաքսանէն (80) էլ վեր կըլլիմ, էլ ուր մնաց տէրտէր դաւնալէս ետե, որ գիտութիւնս կաւելնայ. ըէ՛, խօ՛, նէ՛, պա՛, փօ՛, փօ՛օ՛, փօ՛օ՛օ՛—, որքան կրծքումը շունչ կար, կոկորդում ոյժ ձիդ տուեց նա:

— է՛ֆֆ, տիրացու ննկանոս, հալալ ըլլի նօթաճի անունդ. մեղի գուրացուցիլ. էդ ըսածդ նօթա է:

— Հապա ինչ է, նօթա է, էն էլ խրթին տեղերէն:

— Դէ մի բան ըսա, մի տաղ ըսա անկաջ էնենք—, խօսեց Պօղոսը և օգնեց թութուշիկ հարսին խոնչան դնելու:

Նաըլնը հացերն երկարութեամբ կիսածալ առած դարսեց խոնչայի տիրտի հետ, երկու երկար

փեշկիրն (անձեռնոցիկ) էլ երկու կողմից երկարաց նրանց վրայ:

— Պօղոս բակիս թասի վրայ մի բան ըսա, տիրացն ինկանու:

Պօղոսը մի առանձին անձնասիրութեամբ յենուեց բարձին և սպասեց երդին:

— «Կապուտ երկըն քու-ում,

— «Ասպեր են վայ լու-ում:

— «Կապուտ երկինքում, աստղեր են վայլում, այլ է լուսնինկը»...

— Էս գիտէք, չայաստանի վրայ է կապած—, սկսեց բացատրել նօթաճին.— եանի կապուտ երկինքը՝ չայաստանն է, աստղերը՝ տէրտէրները, լուսնիսկը՝ այլ է, ըսել է մէկ է՝ կաթուղուկոսն է:

— Կտեսնիք դրկըցներ, կահսնիք, թէ ինչ խորեցն կիսուի—, աջ ցուցամատով մի-երկու անզամ խոնչայի ափին թակեց Պօղոսը:

— Ճալքաթ, ասում է առէ, խորեցն է անցէ, խոյ մեղի պէս աշխարձէն բէխարար հայվան չէ մնացէ—, վրայ բերին իւզպաշու հետ միւսները:

— Էն փառքը, որ կըցանկանք քեզի համար, քեզի արժան ըլլի, Աստուած մուրադիդ հասցնէ. քուլիկ, սալ ըլլիս, քեզի էլ մէկ օր իրիցկին խանում ըսենք—, նրա գիրսուկ թշերից և աչքերի սկութիւնից բերանի ջրերը գնացած թօթովից Պօղոսը և բաժակը գատարկեց:

— Ո՞վ, էն թիգուկէս՝ գեանի-բզէզ Քիստօն պիտի զէմս ելնի. էն տեսակ խորն ու խրթին տեղերէն հարց տամ, որ չիմանայ, թէ ձեռնէս ուր փափի, որ աղատի, որ մկի ծակը տասը թիւմնով ու-

առնէի, սաղ քաղաքը շաշմել մնացել է թ վրէս, թէ
ինչ խորը գիտական տիրացու է, իսկը քաղքի ար-
ժան, ափսան չէ էդ տեսակ ձէնով-ուսումով տիրա-
ցուին, որ էն տեսակ էշ գեղացոց մէջ է:

— Հըսլը գիտէք թէ մեզի պէս անգէտ են, որ
մարդն էլ մէկ հաշուեն, մարդակն էլ—, վրայ բե-
րքին մի-երկուսը:

— Քանի հեղ—, առաջ տարբաւ տիրացու Խըն-
կանոսը—, աստուածբանութեան մէջ վէճ ունեցանք
էնտեղի տէրտէրներու հետ, բոլորի էլ բերանը կա-
պեցի, ինչպէս որ գուլափի թելի վրայ գէլկապ կէ-
նեն՝ գէլերու բերանը կլապեն, որ գիշերը դուսը
մնացած զրասպներուն չուտեն. փօ՛, է՛, վէ՛է... հա՛,
համա՛ էդ բաները մեր գեղացիք ինչ կհասկընան.
գլուխ գովել շըլի, Աստուած հետու տանի, հիմի
էս տիրացու տեղովս հարիւր տէրտէրի մէջ որ նըս-
տեմ՝ թէ յիծծընէն ցած ըլլիմ, մի սաքսանէն (80) էլ
վեր կըլիմ, էլ ուր մնաց տէրտէր դաւնալէս ետե, որ
գիտութիւնս կաւելնայ. թէ, խօ՛, նէ՛, պա՛, փօ՛,
փօ՛օ՛, փօ՛օ՛օ՛—, որքան կըծքումը շունչ կար, կո-
կորդում ոյժ ձիգ տուեց նա:

— Է՛ֆֆ, տիրացու Խնկանոս, հալալ ըլլի նօ-
թաճի անունդ. մեզի դուրացուցիք. էդ ըսածդ նօ-
թաճ է:

— Հապա ինչ է, նօթաճ է, էն էլ խրթին տեզերէն:
— Դէ մի բան ըսա, մի տաղ ըսա անկաջ
էնենք—, խօսեց Պօղոսը և օգնեց թութուշիկ հար-
սին խոնչան դնելու:

Նաբընը հացելն երկարութեամբ կիսածալ տ-
րած դարսեց խոնչայի ափերի հետ, երկու երկար

փեշկիրն (անձեռնոցիկ) էլ երկու կողմից երկարաց-
րեց նրանց վրայ:

— Պօղոս բակիս թասի վրայ մի բան ըսա, տի-
րացն Խնկանոս:

Պօղոսը մի առանձին անձնասիրութեամբ յե-
նուեց բարձին և սպասեց երդին:

— «Կապուտ երկըն քու-ում,

— «Աստղեր են փայ լու-ում:

— «Կապուտ երկինքում, աստղեր են փայլում,
այլ է լուսնինկը»...

— Էս գիտէք, Հայաստանի վրայ է կապած—,
ոկուց բացատրել նօթաճին.— Եանի կապուտ եր-
կինքը՝ Հայաստանն է, աստղերը՝ տէրտէրները, լուս-
նիակը՝ այլ է, ըսել է մէկ է՝ կաթուզուկոսն է:

— Կտեսնիք դրկցներ, կանմնիք, թէ ինչ խո-
րեքն կխօսի—, աջ ցուցամատով մի-երկու անդամ
խոնչայի ափին թակեց Պօղոսը:

— Հալբաթ, ասում է առէ, խորեն է անցէ,
խոյ մեզի պէս աշխարձն բէխաբար հայվան չէ մնա-
ցէ—, վրայ բերին խզբաշու հետ միւսները:

— Էն փառքը, որ կըցանկանք քեզի համար,
քեզի արժան ըլլի, Աստուած մուրազիդ հասցնէ.
քութիկ, սան ըլլիս, քեզի էլ մէկ օր իրիցկին խա-
նում լսենիք—, նրա գիրսուկ թշերից և աչքերի սկու-
թիւնից բերանի ջըկը գնացած թօթովեց Պօղոսը
և բաժակը գատարկեց:

— Ո՞վ, էն թիզուկէս՝ գետնի-բգէդ Քիստօն
պիտի դէմս ելնի. էն տեսակ խորն ու խրթին տե-
ղերէն հարց տամ, որ չիմանայ, թէ ձեւնէս նոր փա-
խի, որ աղատի, որ մկի ծակը տասը թիւմնով ու-

զենայ՝ չգտնի—, աւելի ոգևորուած տռաջ տարաւ Խնկանոսը.—օրինակ, որ հարցնեմ «արևելքը դըրախաին», արևմուսս հօրս», չէ ներողութիւն «մօրս վերջին», ինչ պիտի ըսէ, հա, ըսէք տեսնիմ ինչ պատասխան պիտի տայ. կամ թէ, որ հարցնեմ, թէ «Յովհաննէս Աւետարանիշը քանի մարդ սադ-սադ զըլիսըվէր հողի մէջ թաղեց», ինչ պատասխան պիտի տայ:

—Եդ գնաք զիտէք, էդ մենք ինչ զիտենք—, հաւի միսը բերանները տանելով խօսեցին հրաւիրուածները:

—Էդ հէջ մէկըմ չիտէ, էդ մենակ ե՞ռ զիտեմ:

—Թա՛ռ ւռ ւռ—, շնչայ Մկօն. — տիրացու Խնկանոսը որ մէկ բերանը բանայ՝ էլ վերջը չկայ, ջրի պէս կթափէ; էնքան որ նեսըդին կայ, չի պարսի—, և ձեռը շարժեց օդում:

Ընթրիք վեց շիշ օդիով վերջացաւ, որից հրաւիրուածները տաքացած վերկացան գնալու: Մկօն բոլորին ձեռ տուեց և ճանապարհ դրեց մինչի զրսի դուռը. իսկ իւզբաշու բոլի մէջ մի կարմիր տասանոց զբեց ու ականջին փսփաց. —մի էսքան էլ եփ որ օրշչի պրիգաւորը գլաւուն հաստատել տաս:

Օղու աղդեցութիւնից Խնկանոսն իրանով սաստիկ ոգևորուած դառաւ իւր ամուսնուն. —տեսանանը, նարըն ջան, տեսնար ինչ էրի, բոլորի էլ բերանը բաց թողի. էնքան քեզի, որ ինձի պէս էրիկ ունի... դէ արի, արի մէկ պազեմ...

—Էմանն, դու էլ վախտը գտար—, շնչաց նարընը և փախաւ գուրս:

III

Բայցի նօթաճուց ծ... գիւղում քահանայութեան համար մի ուրիշ թիկնածու ևս կար, որ սովորել էր Ներսիսեան գպրանոցում. դա Մարանջոնց Դաւթի որդի Քիստոսն էր, որ երկու տարի առաջ դուրս գալով գպրանոցից, ուղեցել էր մնալ Տիվիսում, ինչպէս այժմ մոլի ախտ է դառել գիւղական շատ երիտասարդների համար, եթէ ոչ բոլորի, ճարել պաշտօն և հան զիստ ապրել. բայց իւր պաշտօվ ամհամապատասխան գտնուելով կեանքի էական պահանջների առաջ, երկար ժամանակ աշխատել էր, սակայն ոչինչ չէր վաստակել... Եւ այդպէս բաւականին ժամանակ մնալուց հտոյ երբ արդին մաշուել էին նրա շորերը, կոչիկները շքացել ոտքերի տակ, գլխարկը խունացել և նրա եղբները հիւանդացած անասունների ականջների նման լոշլոշ կախ ընկել, օր-աւուր քաղցածութիւնը ներսից գլուխ բարձրացը ել՝ ստիպուած նա վերադարձել էր զիւղ, ուր կեանքից ամեն մի արդար թէ անարդար մերժուածի ու հալածուածի համար քրիստոնէաբար բաց են գոները, և մտքում զբել էր քահանայ դառնալով ապահովել իւր բաղին ու կեանքը:

Մարանջոնց Դաւթիթը թէս անձնապէս զօրեղ չէր ինչպէս Ալեքենց Մկօն, բայց ունէր բաւականին մեծ թուով ազգ ու երամ, որ այդպիսի խնդիրներում զործում էին միացած ոյժերով. Քիստոսը նըրանց համար իւր «ուսումով» մի պարծանքի առարկայ էր. և ոչ թէ միայն ինքը Դաւթը, այլ ամբողջ

Մարանջոնց աղզը հպարտանում էր, որ իւր ցեղի մէջ առաջացել է մի «ուսումնական» անձն:

Քիստոսն ինքը հեռու պահելով իրեն գիւղական ժողովրդի հետ սերտ յարաբերութիւններից՝ իւր միտքը մնուցել էր նրանով, թէ գիւղացիները մեծ զոհողութիւն պիտի համարէին իրեն գիւղ վերադառնալը քահանայանալու նպատակով... հետեապէս պարտական էն իրեն յարգելու և լսելու։ Սալայն ժամանակի ընթացքում նրա մտքում մնուածը չէր իրականացել։ Նրա ասածով «չնշին գիւղացին» նայելով նրա վարձունքին ու բարձին չէր մոռացել իւր անձն ու պատիը, ու լոելեայն հրաժարուել էր յարգանք տածելուց... Այդ երեսոյթը աստիճանաբար ծնեցրել էր նրա մէջ զայրոյթ, որ նա առանց անալիղի ենթարկելու նրանց կողմի հոգեբանական պատճառաբանութիւնը՝ արդարն ու իրաւատէրն իրեն էր համարէլ։ Եւ այն դէպքերում, երբ որևէ առթիւ իրան լոելեայն արհամարհում էին, կամ կարճ խօսքով ազգու պատասխան տալիս՝ նա պեսինեն առնում էր ատամների տակ կոծոտում և պավիրոսը երկու գեղնած մատերի մէջ բռնածքերանը տանելով պուհի-պուհ ծխում։

Դարձեալ մի այդպիսի դրութիւն տիրեց նըրան, երբ իրիկնապահին ներս մտաւ նրա հայրը Դաւիթը ու նրա բիձու որպի Սիմօնը. Դաւիթը ինչոր բարկացկոտ հայեացքով նայեց դէպի նրա կողմն ու յայտնեց, որ հետեւալ կիրակի ժողով է լինելու, քահանայ են ընտրելու, որ Ալքենց Մկօն ահապին պատրաստութիւն ունի, որ գիւղացիները

դէպի նա՝ Քիստոսը վատ են տրամադրուած, վատ են խօսում նրա հասցէին...

Մի անզուսպ կըքի փոխուեց Քիստոսի զայրոյթը, երբ հօրից լսեց իւր հասցէին ուղղած տոնով լուրի հաղորդումը։ Նա այդ բոպէ մի կոիւ, ընդուժմախօսութիւն, հարց-պատասխան, բացատրութիւն, վերջապէս անարգանք էր վինտուրմ, որ ասէր, թափէր նախ այն մարդկանց զվահին, որոնք յանդիմանական տոնով շատ անգամ հաղորդում էին իրեն գիւղացիների զժգործութեան ու արհամարհանքի մասն, յանցաւորն այդ բանում իրեն Քիստոսին համարելով, երկրորդ այն բոլոր «ուամիկ» գիւղացիների դէմ, որոնք արտաքինով սռասուիլիկ և հանգիստ ցոյց տալով իրենց մտքի մէջ իրենց խօսուն լիգուն ու աղմուկն ունէին և իրեն Քիստոսին չէին կամնուում ընդունել իրենց սրտի մէջ, չէին սիրում ու յարգում, բացի այդ ինչոր մեղմ կերպով կին էին հանում...

— Ընդհանուր կըքով ֆշաց նա, տապ օդը ծխի և բարկութեան հետ միասին դուրս թողնելով և գլուխը շարժելով։

Դաւիթն հասկացաւ որդու հոգու միջն կատարուածը, էլ չուղեց այդ առթիւ երկարացնել և կանչեց հօտաղին։

— Ցըմանչ, Կորէլ։

— Համամէ։

— Մէկ գնա մեր Խանեմին, Տօնէին, Կուճոյին, Եւվանին, Պուլառուն, Թրափին, Տնկեմին, մի խօսքով մերոնց բոլոր թափումին կանչէ զան. Էնդից էլ գնա սանահօր էկատին, Այվաղին ու Քար-

թուին իմաց տու, թէ հաւաքուել են, ձեզի կսպասեն, իմացան:

— Իմացայ, հրամանք ես:

— Դէհ:

— Դահ, պընտ-պընտ—, իբրև թէ ձի է վարում պլոշներով ճղղացրեց Կորէլը և թուաւ դուրս:

Մինչև հրաւիրուածների դալը Դաւիթը վերելաւ սատրը, բաց արեց պատի միջև եղած պահարանը, նայեց իւրք շշեցին և մի գաւաթ ածելով տուեց Սիմօնին, մի հատ էլ ինքը խմեց, ապա մըտաւ թոնքատուն իրիկնահացի մասին հոգալ տալու:

— Ելի ինչ է ամպոտէ—, հօրը հասցէին խօսելով հարցրեց Սիմօնին Քիստոսը:

— Թիթիզ մանդ է ջանըմ, մի նեղանայ... էսօր միքանի գէշ բան են ըսէ քեզի համար, սիրտը ելել է, էդ է...

Այդ խօսքից կիրքն աւելի տիրեց նըա սրտին ու հոգուն, նա ջղերը լարեց, բռունցքները պինդ հուաւ տուեց և գերասանական շարժումով խօսեց.

— Բաւական չէ էս տգէտ հասարակութիւնը, կամ ճիշտն ասած զիւղական յիմար ամրոխը դատապարտում ու նեղացնում է ինձ, զրա արարմունքն էլ աւել, ասինք զիւղացի անասունները խաւարամիտ յիմար են, չեն հասկանում... հօ ինքը քչից-շատից հասկանում է. ասել եմ, խօսել եմ, հասկացրել եմ, թէ այդ բոլորը ինչոր կայ մեր այժմեան զիւղական կեանքում՝ յիմար, անմիտ, աննպատակ բաննը են, որ ոչինչ կատարեալ, ոչինչ բաւարար հետեանքի շհասցրած՝ ժողովրդին լոկ թողնում են միենոյն խաւարի ու տգիտութեան մէջ. հարկաւոր է ճղել,

պատուել այդ սուտումուտ սարքովի բաները, դէն շպլիտել. հարկաւոր է ուսում, հարկաւոր է լոյս, լոյս, առաջ դիմել, աղատ մտածել... ինչ բաներ են էս պահէ, էս ծէս է, էս տատական է, էս պապական է, էս ինսամութիւն է, էս քաւորութիւն է... ինչ բաներ են Աստուած կսիրէք էդ ախմախութիւնները... զերօ, զերօ... պիտի քանդել, քանդել այդ բոլորը հիմքից, ինչպէս ասել է մեր մեծ մարդկանցից մէկը, որ նորը կարենաս շինել...

— Վնաս չունի, հէր է, մի նեղանայ—, պատասխանեց Սիմօնը, որ Քիստոսի ասած խօսքերից այնքան բան հասկացաւ, որքան Քիստոսն իւր ասածի իմաստը...

— Մէկ տէրտէը ըլլիմ, ես զիտեմ—, վրայ բերեց Քիստոսը, երբ ներս մտաւ նրա հայրը Դաւիթը, և հարցրեց զէմից եկող Կորէլին.

— Հը՛ը՛, ինչ խաբար:

— Բոլորն ըսին «լաւ կըլի կուզանք», հըմը...

— Ի՞նչ հըմը:

— Քարթոն ըսաւ, թէ «գործ ունիմ, չեմ կարայ»...

« Հը՛ը՛, գործ ունիմ», մտքի մէջ կր կնեց Դաւիթը. « ամենից պէտքականն ու երկիւղալին զիւղի մէջ էն է, էն էլ՝ գործ ունիմ»... ու ծածկուեց խոժու ու անախորժ արտայայտութեամբ:

— Դէ բե՛, դէ բե՛ օջախը վառէ, ետև գնա խանում ասլայիդ քով օգնէ:

IV

—Դէ, համ չայլ խմենք, համ էլ խօսինք, ժամանակը կարճ է. հակառակ կողմն ընկել է գեղը, ամեն մէկին իրեն կողմը կզբաւէ—, թէյի բաժակը վերցներով խօսեց Սիմոնը և նայեց հաւաքուածների երեսին, որ բռնել էին սաղ գոմի օդէն:

—Մէնք, Սիմոն ջան, պիտի կիրակի օրուան շաղասկնք, առաջուց մեր զործը կուկսնք, որշաբ պըլովուրը կրենք, կհաղթենք, հալա զեռ ինքներս էլ կստորապիենք, մնացածն էլ կիրակի ստորագրել կուտանիք:

—Լաւ էք միտք էրէ, լաւ—, չայի փոշտոցի հետ լսուեց չորս կողմից, որ մի խուլ բայց անընդհատ աղմուկ էր առաջացրել օդայում:

—Եդ լաւ—, ձայնեց Քիստոսը.—ասենք էդ բանը զլուխ եկաւ, ապա ոտճիկ. ապա տուն. պայման...

—Սը՞ս—, իսկոյն նրա ականջին փսփսաց Սիմոնը,—էդ էստեղ մերժոց քով ըսկի, ոչինչ, ուրիշ տեղ մի ըսէ, խալսի անկաջը կընկնի, ետեւ զործդդ բոլորվին խարար կըլլի...

Քիստոսի համար մի անճնշելի կուր էր այդ առաջարկութիւնն իրեն մէջը թաղյնելը, շասելը, բայց միւս կողմից չէր կարող Սիմոնի խօսքից ու խրատից զուրս գալ, քանի որ նա իրեն բարեկամն էր և աշխատողը: Ներքին ծանր ճնշումից յօնքերը վրայ բերեց, ուսերը վեր թօթուեց ու ձեռքերը պինդ-պինդ շիեց:

—Եդ ինչ կխօսիք իրարու անկջի—, Սիմոնին հարցըին նստողները, որոնք պարզ շիմացան Քիստոսի ասածը:

—Ոչինչ, էնպէս առանձին բան էր—, խօսքը ծալեց Սիմոնը և շարունակեց.—զիտէք Մարանջոնց թախում, մի անգամ բանն էստեղ չպիտի համարի, որ հասել է նաւսանաթի (պատուասիրութիւն) բան է, ամեն կերպ պիտի աշխատինք, որ զլուխ բերենք, թէ չէ Մարանջոնց ջնսին շատ մեծ ամօթէ:

—Բոլնըս, բոլնըս կայնած ենք—, նորից վրայ բերին չորս կողմից և շարուեցին սեղանի շուրջը:

—Մեր բոլնը բարեկամներուն ու խնամիներուն կտեսնիք, կհամոզէք, որ կիրակի մեր կողմը խօսին: Գիտեմ, էնոնց (հակառակ) կողմը քիչ զալմազաճի են, Ամպարտաւան Պօղոսն էնտեղ է, համա ըսէք իսկի չվախնան, մէկին տան ըսեն, հըլը թող առաջուց էլ միերկու հատ կոնծեն, որ աւելի համարձակ խօսին—, թելաղըց Սիմոնը:

—Յրախին ինձէն, յրախին ինձէն—, վրայ բերից Դաւիթը, —ինչքան կուզեն թող խմեն—, և նորից ածելով օդու գաւաթը բաժանեց ընթրիքի նստածներին.

Այդ բոլէ Դաւիթի մտքովն անց կացաւ ապաց աչողութիւնը, որդուն իւր փառքին համենը, փարաջէն հազին, ապահով... և զէմքը փայլեց մի գոհ ժպիտով. իսկ Քիստոսի մտքով անց կացաւ, թէ ինչպէս ինքը, երբ զործը զլուխ գայ, կգնայ ծրփիս, իներկայանայ իւր տանտիկնոջը, որի տանը 4—5 տարի ապրել է, առաջարկութիւն կանչ նրա աղջտարի ապրել է, առաջարկութիւն կանչ նրա սիրած Մաշօին, քաղաքի օժիտով կառան՝ իւր սիրած Մաշօին,

նի, կգայ զիւղ, հետն էլ մի ոռուս քոծ կրերէ, որ ծառայութիւն անէ, 3-4 սենեակով տուն ու տեղ կտարքէ և... ջան...

Սիմօնը բաժակն առնելով առաջարկեց Քիստոսի կենացը, և բարեմարդեց, որ զիւշմնի սրտով չըլլի, Մարանջոնց ազգի մէջ պարծանք ունինան: — Եղ ըստ, Եղ ըստ, զիւշմնի սրտով չըլլի, ուրիշ բան չենք ուզէ —, տաքացած վրայ բերին չորս կողմից:

Քիստոսն առաւ բաժակը և խօսեց. — Ես հիմի շատ բան չեմ ըսէ, թէ քահանայ դառնալէս ետեինչ տեսակ փոփոխութիւններ պիտի մաշնեմ զիւղի մէջ, էղ դուք իրեն ժամանակին կտեսնիք. Էն կուեմ, որ շատ չնորհակալ եմ իս ազգ ու երամից իմ մասին աշխատելուն համար, ու չի ուղէ, որ զիւշմնի սըր, տով լինի. զրա փոխարէն ես որ քահանայ դառնամ առաջին գործս պիտի լինի էն Ամպարաւան Պօղոսին զիւղից քշել տալը, Սանդրօի մկիտանը փակելը, էն հայվան Խնկանոսին ժամի ժամկոչ շնորհը, մնացածներոն էլ էնալիս պիտի էնիմ, էնալիս, որ դէմս ուռի պէր դողան, ուռի պէս...

— Հայա մէկ առաջ Աստուած աջողէ —, նորից նրա խօսքերը ծալեց Սիմօնը, — ետեւ:

— Հըպը ինչ կտէք, մարդն ուսում ունի, զալամ (գրիշ) ունի, լեզու (ռսերէն) գիտէ. Էլ ինչ ուղենայ, որ չէնէ —, վրայ բերին միւսներն և տաքացած վեր կացան սեղանից:

— Եղ բոլորը լամաւ, համա որ իւղբաշին էնոնց կողմն է, Եղ էնչպէս էնենք —, հարցըց Դաւիթը: — Եղ հեշտ է —, հանգստացըց Սիմօնը, —

Թուղթը ստորագրելը որ աջողի, ես կտանիմ գըլաւու քով, բուռը մի քսանընկանց կընեմ, ստորագրել կուտամ —, և նայեց սենեակի մէջ տեղում տասստաղից բարակ թոկով կախած լամպարին, որ դանդաղ կերպով ճողքում էր աջուձախ և աղօտ կերպով լուսաւորում էր տաքացած, թմբած դէմքերը:

Մինչ այդ Քիստոսը համախօսականը պատրաստեց, տուեց ստորագրելու:

Եկողներն ստորագրելուց յետոյ ելան դուրս, իսկ Սիմօնը երկու շիշ օղին զրպանները դրած, թուղթն ու զրիշը թանաքամանի հետ Քիստոսի ձեռու տուած ելան դուրս:

Անլրում լուսինը լողալով կապոյտ երկնակամարի տակ, իւր առատ լոյսը բարձունքից թափում էր ցերեկուայ աշխատանքից յոգնած, վաստակած մայր երկրի վրայ. ամասային գիշերուայ զով օղը խաղաղ կանգնած էր նրա կախարդական ճառագայթների հմայող լոյսի տակ, կարծես չուզելով որ ի է շարժումով վրգուիլ նրա խորհրդաւոր հրապոյրը; Խոտերն ու ծաղիկները քչքչացող առուաների ամերին քովելքով իւրաք գլուխ խոնարհած՝ կասես փափսում էին իրար ականջի, պատմում էին բնութեան այդ անարուեստ վեղեցկութիւնը:

Եգնարածները փարախների մօա սայլերի վրայ կամ պատերի զլսին մէջքերին պառկած՝ անվերջ նայում էին այդ սորով, բայց կապոյտ երկնքին, այնաեղ լողացով, կասես սահող լուսնին, ու քանի գնում այնքան հոգով ու մտքով սաւառնում վերեւ, համուռմ աստղաղարդ երկինքը և խառնուում

այնաեղի լուսատու մարմիների հետ, մոռանալով
իրենց տակ գտնուած վասակարել մայր երկիրն
իւր հեծող վշտերով։ Կրանց ուշադրութիւնը եր-
բեմն զբաւում էր հեռուից լսուող հասարակ տու-
տուլից շինած փողի ձայնը, որ հնչեցնում էր մերթ-
զօրեղ, մերթ քնքոյց ու մեղմ մէջընդմէջ ընդհա-
տուող գեղջնական լէյլիների կամ ջանդիւլումների
ներդաշնակ սահող, կլիացող երեխներ։ Այդ ձայնե-
րը կասես սկիզբն առնելով երկրից, սփռում էին
լուսնի քնքոյց ճառագայթների տակ և ապա նրանց
հետ հիւսուելով՝ սաւառնում, թոշում վերև...

Փարախների մօտից լսում էր պառկած որո-
ճացող եղների հանգիստ մշոցը, որ միախառնուե-
լով իրարու փոխարինող չների կենտուկունա հա-
ջոցի և գիշերապահների երկար ու նշանացի սուլո-
ցի հետ կազմում էին մի աններդաշնակ, սակայն
կենդանի ազմուկ։

— Ե՞ֆֆ, ինչ անուշ գիշեր է, ջան... շնչաց
Սիմօնը, երբ նոր էին բարձրացել հարկան տան կը-
տուըը, — Աստուած ինչ տեսակ գեղեցիկ բան է
ստեղծէ մարդուս համար։

Քիստոսն աւելի քան ուշադրութիւն չդարձ-
րեց այդ արտաքին աշխարհի վայելչաղարդ տեսա-
րանի վրայ, այնքան որ լարուած ու շփոթուած էր
նրա ներքին, հոգեկան աշխարհը։ Նա, պապիրոսը
բերանին, ոստիկներով բոլորուած հաստ ձեռնա-
փայտը կուանը տակ հուզ տուած, մօտեցաւ մի
երթկայ։

Ճրագը վառ էր:
Նա վրայ կախուեց.

— Տեփան Ավանար։

— Հա-ա,

— Բնել ես։

— Եղ ավ է խօսողը։

— Մենք ենք։

— Դուք ավ էք։

— Սիմօնն ու Քիստոսը։

— Ի՞նչ կայ։

— Քիսած ե՞ս։

— ԶԵ... ը՝ ը... նոր հանուայ։

— Մէկ դուռը բաց։

— Ի՞նչ կայ Եդակէս հաւարով։

— Մէկ էս թղթին ձեռք քաշէ։

— Եղ ի՞նչ թուղթ է։

Քիստոսը լսեց, նա այդ վայրկեան մի սաս-
տիկ ճնշում, մի անպատճութիւն զգաց իրեն համար
այլքան ստորանալը, որ զոնէզուր էր ընկել... Տե-
փանի պատասխանները լսելուց ետոյ նա լսեց և
պարզ չհասկացաւ, լոեցնողը նրան կիրքն էր, թէ
հապատականը։

— Տեփան Ավանար, այս անդամ ձայնեց Սի-
մօնը, — դուռը բաց։ Քիստոսի տէրտէրութեան թուղ-
թըն է։

— Սիմօն ջան —, ցածից ձայնեց Տեփանը։

— Հայշան։

— Քու խաթերդ ես համ թեպուլով (փետուր)
չեմ դիպնի, հըմը էդ թող մնայ կիրակի, Էնտեղ
կստորագլեհնք...
Սիմօնը պարզ հասկացաւ, թէ դրանով ինչ էր

ուղում ասել Տեփանը, «բարի գիշեր» մաղթեց և մօտեցաւ հարևան երթկին:

Լուսինը գեռ լողում ու լողում էր երկնքում, կասես աշխատելով իւր ճանապարհը ժամանակից շուտ կարել, վերից անխնայ կերպով ճառագայթները ցանելով ներքի, Բնութեան այդ անվրդով խաղաղութիւնը՝ հանգստութիւնը կասես անփոյթութեան էր հասել և մտել զիւլացու սրտի մէջ, որին անտարբեր էր գարձել գէպի կտուրից ոտորագրութիւն մուրացող տէրտէրացուն: Քիստոսի զայրոյթն աւելի սաստկացաւ այն ժամանակ, երբ երկրսրդ, երրորդ... կտուրներից էլ լսեց համարեա նոյն պատասխանը, ինչ առաջնից...

.... Ու կէս գիշերին մօտ, որանեղած մենակ վերադարձաւ տուն:

— Չատ մարդու ձեռք քաշել տուի՞իք:

— Ե՞՞հ ես զբանց Ե՞ն... ես զիւղ գամ, խոնարհիմ էդ աւանակների համար քահանայ դասնալ, ու նըանք էլ էդպէ՞ս...

Դաւիթն աւելի պակաս չզայրացաւ Քիստոսից, երբ նըա հայհայաներից հասկացաւ անյաջողութիւնը, նա միտքը մի վայրկեան յառեց որդու ընթացքի վրայ ու վիթփինթաց.

— Ենոնիք Ենքան մեղաւոր չե՞ն...

— Ինչի՞—, աչքերը զայրոյթով հօր կողմը շըրդեց Քիստոսը:

— Ե՞նպէս:

— Այսինքն:

— Մարդու վրայ սիրտ թողել ե՞ս... Եւ ապա

սկսեց խորհել, թէ ինչ անէր մինչեւ կիւրակի և ինչպէս վարուէր կիւրակի օրը:

Լուսնի վերջին ճառագայթները այդ ժամանակ գուրս թուան Մարանջոնց տան երթկից. սենեակում տիրեց խաւար, որ կասես տարածուեց Քիստոսի սրտի վրայ. Նա ինչոր վատ վախճան նախազգաց գործին և հանգնելով ճրազը խռոված հոգով մտաւ անկողին:

Վ

Հետեւալ կիւրակի արեն ուսը գէմ տուած հորիզոնին սարերի կատարներով նոր էր վերև բարձրացըել, զնիթի ճանապարհը կէս արել, որ զիւղի գզերը՝ Բգէն կարճ ու լայն շալուարը ծուռը հագած, կիմէ զօտին մաշուած ու կարճ չէրքէզի վրայից մէջքին պինդ հուպ տուած, արխալուղի մաշուած կրծքկալի տակից կուրծքի մի մասը բաց թողած, թաղիքէ ու զիւարկը հազիւ պալեցրած զլիի կատարին, կարճ, ծայրից երկու մաս ճղուած ճիպոտը կուան ատակը սեղմած՝ կշտի-կշտի վազ էր տալիս գիւղի փողոցների միջն ու երգում.

«Ճուն գլուխ մի մարդ.

«Ճան գլուխ մի մարդ,

«Ճուղբաշու դնուոը...

«Հայդէ բալամ, հայդէ...

— Տօ, էդ էլի ինչ է—, ձայնեց նըա ետեկը
մէկը:

«Ճուն գլուխ մի մարդ...
 —Տօ-օ՛, քեզի հետ ենք—, ճուաց երկրորդը:
 «Իւզբաշու դմռու,
 «Իւզբաշու դմռու:
 —Տօ չես իմանայ, քեզ հետ ենք, տօ-օ՛—, այս
 անդամ գոռացին միքանիսը միասին:
 —2է վալլա—, յանկարծ նրանց դառաւ Բղէն:
 —Բա խելքդ ո՞րտեղ է:
 —Ենաեղ էր, թէ կարամ երկու սոլուդ քա-
 շելով «էծէծի» *) պէս սաղ գեղը ման գամ, բոլո-
 րին իմաց տամ:
 —«Էծ-էծ».
 —Հա:
 Այնպիսի մի ծիծաղ փրթաւ դրա վրայ, որ
 թղէն իւր խեղճուկ հագուստով, առաւել ևս իւր
 խեղճուկ խելքով նրանց գուարճութեան լոկ առար-
 կայ թուաց...
 —Լաւ, էդ «էծէծդ» իրեն կարգին. էլի ինչի
 են կանչէ. խոյ էլի կոռուրէզեար չկայ:
 —2է, չէ—, վախեցած նրանց աչքերին նա-

*) Էծ-էծը մանկտկան խաղ է. գառնարածները
 հաւաքւում են մի տող «ըբնա» ընտրում կանգնում և
 այնտեղեց հերթով, կուացած՝ ոտքքը լի արանքով ճիպոտնե-
 րը ուժով դէպի ետ շպրտում. ո՞ւմ ճիպոտը որ քիչ գը-
 նայ, նրա աէքը պարտաւոր է էծ-էծ, կը կնելով գը-
 նալ բոլոր ճիպոտները հաւաքել ըերել բինէն նթէ
 պատահէ, որ աեղ չկասած երկորդ անդամ շնչէ «էծ-
 էծ» ասելիս, միւսներն խոյոյն յարձակւում են նրա վրայ
 և մէջքին թակում:

յելով վրայ բերեց Բղէն, երկիւդ կրելով մի գուցէ
 էլի զիսուն բամփեն... ասելով, թէ «բաւական է էս-
 քան կոռուրէզեարը», կամ «հերթը հիմայ ուրիշինն է»:
 —Ապա ինչի՞ համար է:
 —Ինչի համար, ը՝ ը՝ ... վայ, մտէս ընկաւ...
 Առաջուայ ծիծաղին յաջորդեց աւելի թունդ և
 աւելի բարձր ծիծաղ, որ շատերին հաւաքեց Բղէի
 շուրջը:
 —2է, Աստուած վկայ կոռուրէկեարի հա-
 մար չէ, որից իրեն արդարացրեց Բղէն:
 —Դէ ըստ տեսնինք ինչի՞ համար է:
 —Հա, միտքս ընկաւ, տէրտէրի...
 —«Միտքն ընկաւ», հա, հա, համա... վոյ կը-
 րակ չուաես Բղէ, որ սաղ գեղի դաշմարը (կլոուն)
 չըլիս—, շարունակուեց քրքիջը:
 —Ո՞ս տէրտէրի:
 —Զոկելնա:
 —Էդ է՞՞:
 —Հա—, ձայնեց Բագէն և
 «Ճուն գլուխ մի մա՛րդ
 «Իւզբաշու դուռը,
 երգելով թուաւ:

VII

Իւզբաշու դուանը բաւական մեծ քանակու-
 թեամբ ժողովուրդ էր հաւաքուել, ու զալմաղալը
 զցել: Այնտեղ էր Ալքենց Մկօն, որ բարձր սուրու-
 լիկ սկ փափաղը զլուխը, հաստ երկար չպուխը զըն-
 չին անդադար ֆստֆստացնում էր. նրա մօտ էր Ան-

պարտաւան Պօղոսը, որ կնեազի հանդի նստած ինչ-որ իշխանութեան ու իրաւոնքի տէր էր համարում իրեն. Սանոօն, որ թւարքելի հետ ընկերացած ամեն գիշեր գողացած կավ ու ոչխար էր իր մկիտանն ուղարկում ծախելու. Դրակոն Խոտակը, որ երեք անգամ գիւղի ժամը մտաւ թալանեց. Նաչարի արբան Պօղոսը, որ ապակու կտորն անգամ տեսնելիս ճռները դող էր ընկնում, բերանի ջուրը վազում. Հեյվարա Գիրգորը, որ չորս եղբօրը շարունակ աշխատեցնում էր ու ինքն ուտում. Խումար խաղցող Յովակը, որ վերջը միքանի տարի խրացի դառնալով իւր գործը դրստացրեց. Ստորահոգի Համիկը, որ քաղաքում երկու այր-բեն սովորելով եզուխա հոգով վերադարձել էր գիւղ և մի անքարոյական ախտ ու շար օրինակ դառել գիւղին. Քաշալ Մինասը, որին կինը սիրականների խորհրդով 3 անգամ թոյն էր խմցրել, երեք անգամին էլ դըրացիները օգնութեան էին հասել, վրկել. Տէրտէրանց եւանը, որ երկրորդ անգամ ամուսնալով քաղաքցի աղջկայ վրայ, բաժանուել էր եղբայրներից և կոչ խորհրդով հոյն ու մալլ ծախել, գիւղում խանութ բաց արել, որ վերջը կոչ եղբայրները քաղաքից եկան ողջը մաքրազարդեցին. Վարդեկեսը, որ 12 տարի ալթուակալ մնալով եկեղեցու գանձանակն այնպէս մաքուր պահեց, որ մէջը փոշու նշոյլ անգամ չժողովեց. Պող Ներսէսը, որ գիշերները մտնում էր տները, հարմների ճակատներից քնածքամանակ չէրիաները (ոսկե) փախցնում. Պուլտին, որի կինը մարճակալի դեր էր կատարում նորատի երիտասարդների և մանկամարդ հարմների մէջ.

Եսայինց Տեփանը (որին կանչեցին երթկից), որի այրի քոյրը ապօլինի ժառանգ ծնեց, ժառանգը ծնածէին ինքը խեղզեց, տուեց խողերին ուտելու, ետոյ էլ ամօթից կախուեց. Շուտիկ Յարութը, որ մի բան ասելիս կամ պատմելիս լսողին ծիծաղից կթուլացնէր. Դրան, որ որտեղ ինչ տեսնէր, էն ըսպէին կգողանար. Մարանջոնց Սիմօնը, որի վարպետ լինելուն համար անունը դպել էին «ուստա». Դարդոտ Եղիշը, որը գիւղի Շուշանի ամուսինն էր և որի համար այնքան շքնաղ կին ունենալը մի կատարեալ պատիժ էր, որովհետև սաղ գիւղի աշքը այդ շուշանի վրայ էր... Սըտիկ Միկին, որ տասը կոպէկով երդում էր ուտում և սուտ վկայութիւն տալիս դատարաններում. Աբգարի մանչը Յովսէփը, որի կինը տարէնը մի հատ բերում էր և 12 տարուայ մէջ մի գիւժինը լը-րացրել իրար կողքի շարել էր. Մարանջոնց Պաւոթը, որի չորս բոլորին էին հաւաքուել նրանց աղջ ու երամը. Ֆերունի Մօսիկինց Պուպուշ Ատան որի միակ ցանկութիւնն էր գիւղում տէրտէր տեսնելը. Ռարօն, որ տիրապէմ Պուպուշ Ատայի մօտ էր նըստել. և ուրիշ շատերը, որոնցից ամեն մէկը մի պատկերի նիւթ է...

— Գեղական —, յանկարծ բարձր ու զիլ ձայնով զոռաց իւղաշին, — ոէ հերիք ճուաք, հիմի արթը կարգ ու կանոնով գործի աշենք —, ու միքանի անգամ ձեռի ճիպոտով տափը թափեց:

Մակայն գործի վարժատան նմանութիւն բերող աղմուկը չէր դադարում:

—Գեղական, ձեզի հետ եմ, անկաջ էրէք—,
աւելի ուժեղ տափը թակեց խզաշչին:

—Տօ մէկ սնևս կեցիք, իւզբաշին բան է ըսելու։
—Տօ սնևս, է՛, չէ՞ք իմանայ։

— Տօ դէ մարդ էք, մէկ ձէներդ կտրեցէք, հերիք ճուաք:

— Σο ηπιατάτιμων γηνέρει, βίντη λαπιαρά, χριστι καρ-
θατοπέδην ιυπή γέ—, λαστική ιυβιστι φαρδόρ φοιταγ
χορροφρητή, πρή δαγκνή φρωτή τηρετηγ ιωανηπιθήμην:

— Կեզական —, նորից ճիպուտվ տափը թա-
կեց իւղաշին, և զլուխը շարժելով հազար, երբ
արդէն ապահով էր, որ իրեն պիտի լսէին.—Էսօր,
որ էստեղ հաւաքուել ենք, ը՝-ը՝-ը՝, բոլորիդ էլ յայտնի
է, որ աշնանից մինչ օրս տէրաէր չունինք. ինչ,
խոյ ծ... գեղը աշխաքի դաշմարը (կլօուն) չէ. զորթ
չեմ ըսէ...

—**Qápθ** ή **qapθ**:

— չաւաքուել ենք, դուք ել զիտէք, սակ աշ-
խարքն ել զիտէ, որ աէրտէք շունենալու պատճա-
ռով ժամ ու պատարագէ զուրկ ենք. ինչ խոյ ան-
հաւատ թուրք չենք...

— Հայ բերնիդ մեռնիմ, իւզբաշի, մէկ էղման
խելքով խօսի, Ե':

— Էսօլ որ էստեղ հաւաքուել ենք, Էնոր համար է, որ մեզի համար ինչպէս հարկն է մի օրինաւոր, ժամ-ասմոնք գիտառող... Էնպէս չէ կրկից...

— Եղալէս է, Եղալէս, Ժամ-ասմունք զիտցող,
ըսմ դու, մենք անկաջ կէնենք —, աղաղակեցին
չորս կողմից:

—Թէ էղպէս չէ՝ զեր կացէք մի-երկու հատ էլ

գլխուս զարկէք... Մի արժանի տիրացու ջոկենք. դէ,
հիմի ումն է մարերդ, ում կուղէք, որ էս փառքը
տանք, ըսէք լմանամ:

— Իւզբաշի աղա —, առաջ անցաւ Ամպարտաւան Պօղոսը . . . սադ գեղին յայտնի է, թէ ով է մեր տէրտէրացուն. Էլ ի՞նչ աւելորդ հարցուփորձ. մնացել է, որ թուղթը զբենք, ստորագլենք վերջանայ —, այնպիսի մի եղանակով ասաց նա, որ կարծես այդպէս էլ անպատճառ լինելու էր, այդպէս էլ պարտական էին անելու միւսները:

— Ո՞վ է եղ անբարեացուն, որ սաղ գեղին
յալտնի է, ու մենք չզիտենք մինչ օրս:

Մկօն երբ լսեց Գալթի այդ տեսակ զաւեշտական հալցմունքը՝ զայրոյթից քթածակերը լայնացան, կնճիռները հաւաքուեցին ճակատին, դէմքի արտայայտութիւնը փոխուեց, երեսը կասես ուռաւու աւելի պոլողացաւ (երկայնանալ), վարի շրթումքն ու բոլովախը սկսեցին դողդողալ. Նա չըպահիը հեռացրեց գնչից, հաղաց ու նայեց Սմաբաժաւան Պօղոսի երեսին, որն իւր հերթում նոյնպէս սկսել էր դողդողալ:

—2դիտես, ինչէ, որ կհարցնես:

— 26 —, վրայ բերեց Փօղոսին Քաւիթը.

—Դէս որ մինչի հիմի շիտես, էսքասիս հարգանքն:

— Տիրացու Խնկանսալը՝ ըստ լուրջ մի զիլ
աղաղակ:

—*ən'q*, *n'q*. *tq* *nq* *lən'hp:*

—Խոնարդութեան կամաց առաջատար առաջարկը —, առաջարկ կամ առաջարկութեան առաջարկը:

— Խլանաք դմտք. մեր տէրտէրացուն Քիստուն
է, պարոն Քիստոսը—, վրայ տուեց Սիմօնը:
— Զէ, չէ, Խնկանոսը:
— Զենք ուգէ Խնկանոսին, չենք, Էնիկ անար-
ժան է—, բարձր զոռաց Սիմօնը:
— Ինչի, ինչ է պակաս էն մարդուն, որ էս-
քանի մէջ կճուաս, թէ «անարժան» է—, դառաւ Սի-
մօնին Ամպարտաւան Պօղոսը:
— Ջատ բան:
— Թրինակ ինչ.
— Ա՞ր մէկն ըսեմ:
— Թրինակ:
— Թրինակ՝ ուսում շունի:
— Այ հազը ուստա գլխուդ... դմտ եղար էնոր
էկզամին էնորը, որ իմացար ուսում ունի, թէ չէ:
— Հողն էլ զլխուդ ձիւնն էլ հետը, էլ ինչ էկ-
զամին, տիա, կայ ու կերևայ. Ասածու հայինի մէկը...
— Դը մի թուքքընայ—, ճաց Ամպարտաւան Պօ-
ղոսը,— զը մի թուքքընայ, մարդն էն տեսակ ուսում
ունենայ, աստուածքանութիւն գիտնայ, որ սաղքաղ-
քին դարմացնէ, հիմի էսպէս բոշի իշու մէկը...
— Դէ, դէ, բերանդ, բերանդ...
— Բա որ Խնկանոսը անուսում է, ուսումնականն
էն փուզա, «Թիգուկէս, գետնի բգէզ» Քիստոնն է...
— Մէկ իդոր Սահուօին հարցուցէք, թէ խել-
քը բոյի մէջն է, թէ զլմի—, մէջ մտաւ զուակի
Յարութը.— բա չէ իմացէ «գետնի դաւակ՝ իջի սա-
ւադ» *) առածը:

*) Բոյը բարդէ, մէջը դատարկ:

— Հա, կնեազի տղայ, ըսա, խելքը գլխի մէջն
է, թէ բոյի...
— Ես գտայ—, աւելացրեց Զուտիկ Յարու-
թը,— միլրի մէջն է. Խնկանոսը երկան միլրուք ունի:
Այդ խօսքի վրայ բարձրացաւ մի խառն քըլը-
ռոց:
— Ինչի համար էնոր միլրի վրայ կըխնդանք.
բա որ Քիստոսը հէշ միլրուք չունի...
— Միլրուք չունենալը հէշ, կնիկ էլ չունի...
— Ե՛հ, դուք էլ բան ըսկիք—, նորից մէջ մը-
տաւ զուշիկ Յարութը.— հիմի քաղքցոց համար պը-
սակուին ինչ է... մի գիշերուայ մէջ քսանը հինգ
անգամ կպատկուին...
— Զէ, չէ, մեղի էդ տեսակ տէրտէրացու հար-
կաւոր չէ. Խնկաննաը, Խնկաննաը...
— Խը... խը... խըն... կա... նո... նոս... սը, հա, խը-
խը... խըն-կաննոսը—, զլորուելով մէջ մտաւ արբած-
նաշարի Պօղոսը:
— Տօ իդի պիանիցին կորուցէք էնդին, էդ ինչ
կմուայ—, զայրացած վրայ բերեց Քիստոսի փեսան,
որի բերանից պակաս չէր փշում օղու հոտը:
— Քիստոսը ժամ չի երթայ...
— Ըժժա... ժամմ չի երթայ—, նորից մէջ-
տեղ զլորուեց նաշարի Արբան Պօղոսը և ուղիղ զի-
մեց Քիստոսի փեսին, որն իրեն քիչ առաջ հե-
ռացրեց:
— Քիստոսը պաս կուտէ...
— Պա... պա... պա... պա... պաս կուտէ...
— Քիստոսը Փարմասան է...

— Փարմմմա...մա...մաս...օն է,— կշտի-կշտի
գնալով նորից ճշաց Արբան Պօղոսը:

— Տօ ճուացէք ֆարմասոն է, է,— առաջնոր-
դեց Ամպարտաւան Պօղոսը:

— Փարմասոնէ է է,— լսուեց մի այնպիսի բարձր
աղաղակ, որի զօրեղութիւնից շարդախի ծածկը
ճօճաց:

— Խնկանոսը հայվան է, ճուացէք, տօ Մարմա-
ջոնց թափում,— առաջնորդեց Սիմոնը:

— Հայվան է է է,— լսուեց աւելի զիլ կոչ ա-
ռաջինից:

— Դէ արի, Պուղուշ Ատա, հիմի հասկցի, թէ
տէրտէրութեան համար ո՞րն է լաւ. ֆարմասոնը, թէ
հայվանը,— այս անդամ ծերունուն լրջօրէն ասաց
Ճուափիկ Յարութը:

Այս անդամ արդէն երկու կողմերն իրար խառ-
նուեցին. նրանցից ոչոք կատարելապէս չէր հասկա-
նում, թէ ինչ է զործում, ինչ է ցանկանում. շա-
տերն արբած մէկի մասին լաւ էին ասում, ապա՝
հակառակը: Ազմուկը, կանչը, ճիշը, մինչև իսկ հայ-
նոյանքն իրար խառնուեցին. ամեն մէկը բղաւում
էր, ուզում էր խօսել, որ գիմացինը լսէր, սակայն
լսող չկար, որովհեակ լսող չկար:

Այդ երեսիթը ոչ միայն զարմանալի, այլև խիստ
տարօրինակ թուաց Պուղուշ Ատային. նա մօտ ութ-
սուն տարեկան ծերունի էր, կեանքումը զեռ այդ
տեսակ ժողովի չէր պատահած, որ երեկուայ տղէն
վեր կենար տարիին առած մարդու հետ հաւասար,
նոյն իսկ անդամակառ խօսէր, անարգէր, հայնոյէր...
նա վերկացաւ նստած տեղից, կանգնեց ժողովա-

կանների մէջ տեղը, երկար նայեց սրանքա երե-
սին, աչքելով քիշքիշ պատկառանք աղղեց ու դա-
ռաւ:

— Մատմաղ ըլլիմ ձեզի, ախար տէրտէր ջոկեն
էրպէս չիլի. էղ, մեռնեմ իրեն, Քրիստոսի փոխա-
նորդ ջոկել չէ. Էնպէս կճուաք-կրուաք, որ կտէք, թէ
մի չորան եա մի հորթընի կրոնէք (վարձել). ամօ-
թը մի կնդմ, մեղք ու կրակ է. հանդարտ, հան-
դարտ:

Այդ խօսքերի վրայ տիւեց կատարեալ խաղա-
ղութիւն, երբ ամեն մարդ խօսեց իւր ամօթի ու
գիտակցութեան հետ և կասես խոնարհուեց ծերու-
նու ասածի առաջ:

— Լաւ կտէ Պուղուշ Ատան, հապա ինչ է. հան-
դարտ, խուռումսայներ. իլլաքի (մանաւանդ) Մա-
րանջոնց աղղը... վերկացաւ ոտքի իւզբաշըն և ճի-
պոտով սպառնաց:

2Կայելով իւզբաշու անտակտ վարմունքին, սա-
կայն ժողովուրդը զեռ լուռթիւնը շարունակեց:

— Այ, էղպէս. տնաշէններ, Էնպէս կճուաք, որ
կսես թէ գէլ խեղդելու կերթաք: Դէ հիմի ըսէք,
ում կուգէք:

— Խնկանոսի ինչ:

— Քիստոսի ինչ,— առաջին կանչին պատաս-
խանեց երկրորդը:

— Դէ ըսէք տեսնիմ, ինչի Խնկանոսին կուզէք:

— Ենոք համար, որ մարդը նօթա գիտէ, Ժամ-
ամունք գիտէ... Քիստոսն ինչ է որ...

— Քիստոսը ուսում ունի մարդը, ուսում. այ
թէ ինչ է Քիստոսը:

—Դէ՛ լաւ, թէ Խնկանոսի ուսումը էնորէն քիչ
պակաս է, էնոր էլ վաղքն է լաւ, մարդը նօթա գիտէ,
նօթա—, Սիմօնի խօսքին հատ ու որոշ վրայ
բերեց չէյվարա Գրիգորը:

—Բա Խնկանոսի հօթան էն չէ, որ փօ՛-փօ՛
էնելով մի զիշեր էնքան էր թակէ կնկայ լիքը փո-
րին, որ տղէն անցուցել էր (վիժեր):

Ճուտիկ Յարութի այդ խօսքի վրայ մի այն-
պիսի՝ ծիծաղ փլթաւ, որ երկար-երկար արձագանք
տուեց ողջ գիւղում. շատերը ծիծաղից փորերը
բռնեցին:

— Դէ ըսէք նօթան կնկայ փոր անցընել կուտայ, Ելի—, վրայ բերեց Տնկեմը, որից Մկօի բարկութիւնն իւր կատարին հասաւ. նա աեւնում էր կէս ծաղր, կէս ամօթալի խօսքերը, լցում մի տեսակ ծխացող բարկութեան հրով, որ կամաց-կամաց մօտենալու էր բոցավառուելու, եթէ չլսէր հետեւա ապասախանո Սանօհո.

— Բա որ Քիստոսը կնիկ չունի, ուրիշի կընկայ փորին ու մէջքին կխփէ...

Այս վերջին խօսքն աւելի վիպատքեց Դաւթին
ու Մարանջոնց ազգին, քան առաջին խօսքը Մկօին:
Դաւթիթը աշքերը հրհրացրեց Սանոօի երեսին,
բռունցքները կծկեց և սւզում էր վեր թըռ-
չել տեղից, որ Ռւստա Սիմօնը նրա թերց քաշեց
նստացրեց և խօսեց.

— Գուք մարդու ուսման մասին խօսք ունիք, Ե՞ն
լսէք, թէ չէ եղ զարդակ հաջոցներ են...

—Անամօթ, շան լակոտ—, Սիմօնի ետելից
ժայթքեց Դաւիթը - , և փափաղը դրստացրեց:

— Բա Քիստոսի ուսումն էն չէ՝, որ ժամ չի
երթայ, թէ տարիին մի անգամ էլ երթայ՝ ձևաներն
հակը կդնէ էնպէս կլայնի...

— 80 դէ սր իմ տղիս ուսումին չէք համի,
կանչենք էնոր է՛լ, էնոր է՛լ. թող գան էստեղ էկ-
զումին բռնեն—, առաջ անցաւ Դաւիթը:

—չա, լւա կսէ—, էլի խօսեց զուտիկ ճարովթը—, թող գան, թող դրան էլ գողովթենէն հարցաքննէ, աեսնի, թէ ո՞րն աւելի վարժ դուս կուդայ, ո՞ր աշբատէք դառնալին ետև...

Ամբոխն ամեն մի խօսդղիս պատասխան գտնում էր տալու, բայց զուտիկ Յարութին ոչ, վասն զի նա իւր սուր լեզուով, միևնույն ժամանակ ուղիղ խօսքերով բոլոր գիւղին ցոյց էր տուել իւր անձը, և վախենում էին նրան պատասխան տալուց, երկնչելով աւելի խիստ պատասխանից իրենց անձի վերաբերմամբ։ Նրա խօսքի վրայ նորից տիրեց լուռթին, որի ժամանակ նորից վերկացաւ ծերունի Պուտուշ Ատան, յենուեց ցուլիքին ու խօսեց.

— Ե՞, բալամ, ինչպէս զառարկու ե՞ւ
նակները փոխուել են, տէրաշէրացուներն ել են փո-
խուէ, տէրաշը ջոկող մարդիկն էլ... Մենք որ Տէր-
Մելիտոսին ջոկեցինք, Աստուած՝ օդորմի հոգուն,
Է՞ն ժամանակ էս տեսակ բաներ չկային. լաւ բան
չէ ձեր էրածը, լաւ նշան չէն... Ե՞հ, հիմի ինչ կու-
զէ լեր էրէք, ես էլ չեմ կարայ մնայ. անկջներս խլա-
զէք էրէք, ես էլ չեմ կարայ մնայ. անկջներս խլա-
նային, չլսէի... Ե՞հ... Աստուած հ'նքը բարին առաջ-
նորդէ... Երթանք Ռաքօ, բալամ. զու մնուելի տէր ես,
մեր է առօրդ հոգուն...

Եւ ծերունին, չնայած շատերի խնդիրքին, որ

մնայ, սիրտը քաշելով Ռաբօխ հետ հեռացաւ։
— Լաւ կաէ մարդը, հասլա լինչ է, էս լինչ տէր-
տէր ջոկիլու չնորը է —, նկատեց Տեփանը. էսպէս
ընտրութիւնը Աստծոն ունդունեի չէ...»

— Բոլնը պատճառն այդի Մարանջոնց ազգն
է,— վրայ բերեզ Մանոօն:

—Մարանջոնց աղքի միսն ինչի կուտես—,
լսուեց մի քանի ձախ:

— Հապա ի՞նչ է. աղջիկ խաղցնողին բերել էք մէլդան, զալմազալ կէնէք:

—בְּנֵי־יִשְׂרָאֵל:

—Աղջիկ խաղցննդ. թէ լաւը կուզէք իմանալ՝
մենք էնոր մեր կնկտացը չենք հաւատայ. սաղ օրը
զուշանի հետ է, սաղ օրը աղբըի գլուխն է, սաղ
օրը հարս ու աղջկայ հետ «Ճիթ» կէնէ:

Դասիթն իրեն կատարեալ կորցըեց. ուզում էր
աւելի խայտառակ խօսքերով պատասխանել, որ լը-
սեց միքանի ձայն.

—Ենիկ որ տէրտէր ըլլի՝ առաւօտները սահա-
թը տասնիւրեքին կվերկենայ, կաթով չայ կուղէ, որ
ետև ժամ երթալ:

—Մաշալլա՛ աէրտէր—, վրայ բերեց Զուտիկ
Յարութը.—Թուրքի մոլլին էլ պիտի մոռցնէ:

Նորից կը թաւ ծիծաղ, որից ետոյ խօսեցին.

— զիտա՞կ կսեն, շիտա՞կ. Էսիկ որ տէրտէր ըլլի, դժուար է էնոր պահելը. Էնիկ մեզէն մէկի տեղ տասը կուզէ.

-2ξ, նորողութիւն. ξնիկ իրեն հախսր կու-

զէ—, պատասխանեց Սիմօնը.—իսկ թէ աւել ուղե՞միք տայ:

— Զենք տայ, համա կառնի, դօլով կառնի:

—Ի՞նչպէս պիտի առնի, որ կխօսիք:

— Հիգն գիտէ, նաչալնիկի քով կերթայ, գանգամ կատ կուռայ:

—ξω', ηω', ξηθηκε πληρού τηντέ, πορπολή καπνή.
ανηστέ' ρ μάνακ έη πληρού τηντέναλε:

— Քէց, հիմի մի բան մնաց, իւզպաշի ջան, չն
էլ Աս ըսեմ —, դառաւ Ամպալտաւան Պօղոսը. — Քիս-
տոսը խառնակիչ է, ինձի ըսել են, որ իշխանու-
թեանը հակառակ է. իմացմք... սադ գեղը կրակը
կորէ...

Այդ խօսքը թրի նման հարուածեց Դավթին.
Նա տարաւ մինչ այդ միքանի ծանր խօսքեր որդու
հասցէին նրա վարքի վերաբերմամբ, բայց երբ լսեց
այդ խօսքը որդու իբր անբարեյուսութեան մասին,
մաղերը զլսին բիդ-բիդ կանգնեցին, Ծղերը ցնցուե-
ցին, բուռնցքներն իրենք-իրենց կծկուեցին և գո-
ռայով վրայ հասաւ.

—Սուտ կհաջես, ա՞նսմօթ. իս տղէս էդ տեսակ մարդ չէ... էդ գու ես, էդ Մկօն է...

Այդ վերջին անտեղի խօսակցութեան վրայ երկու կողմի կըքելն էլ այնպէս սաստիկ գրգռուեցին, որ միմիանց հասցէի հայոցանքը, կանչը, ճիշը, ծաղը, սպառնալիքը... բոլորը, բոլորը բռունքը-ների հետ իրար խառնուեցին... Գիւղում մի այնպիսի իրարանցում, մի խառնակութիւն ընկաւ, որ բոլորին հիմնովին շարժեց... Մինչ օրս չտեսնուած աղմուկի արձագանքը տարածուեց գիւղից դուրս...

Աւելի խոհեմները ու այեղները (ոչ արբած) թողին ժողովատեղին գնացին իրենց տները. իսկ արբածներին ու ջարդուածներին անեցիք եկան տարան: Մնացին միմիայն նրանք, որոնք ուխտել էին մինչև վերջը մնալ և իրենց ասածն անել... կամ խանգարել:

Սակայն ալդպէս չեղաւ,

Մկոն երբ նկատեց, որ Մարանջոնց կողմից շատերը հեռացել էին, իսկ իւր մարդկանց թիւն աւելի շատ էր, իսկոն աշքով արելոց իւզաման:

— Դէք, հիմի ինչ եղաւ, եղաւ. ով որ տիպացու Խնկանոսին կուզէ, էսդին կայնի —, համարեա խաղաղ տօնով խօսեգ իւղաշին:

Ժողովուրդը կրոն առևեց դէպի աջ և ստուար
բաղմութեամբ կանգնեց տիրացու խնկանոսի օդ-
տին:

— Էս մէկ, էս երկու, էս իրեք... էս քառսուն, էս քառասընը մէկ ու էս քառասընը իննը... էնդին բոլոր-մոլոր քսանըիրեք հոգի են:

— 2 Ե՞նք ուզէ, չենք ուզէ —, նորից լսուեց մի
կատաղի աղաղակ Մարանջոնց ազգի կողմից, — մենք
իշխանութեան գանգատ կապինք...

— Ես օբշի պլիգաւորը գրել կուտամ կհաստատեմ, դուք միք ուզէ —, դառաւ խղբաշին. — զրէ տիրացու Մաթոս, զրէ, որ տիրացու Խնկանուին ուզողների թիւը շատ է, 49-նէ, չուզողների թիւը 23. Էդակս էլ զրէ;

VII

Հետեւեալ կիւրակի առաւօտ, երբ ամեն ինչ
պատրաստ էր, սաուրագրած և վաւերացրած, հա-
մախօսականը մի ծոցում, «ատամի տակ զցելուն»
միւս ծոցում Մկօն ձի նստած գնաց քաղաք: Այն-
տեղ զոլծակալ քահանային տուեց երկու ծոցինն
էլ, ապա մի համակ տոնելով երկրորդ օրը գնաց
Ախալցիա:

Այդ ժամանակ Ախալցիսայում յաջորդի պաշտօն էր վարում մի սկ կադ վարդապետ (այժմ մեռած)։ Նա գործակալի նամակը կարգալով ժպտաց։ կասես մայիսի վարդի պէս սիրալ բացուեց և «աջլ» տուեց Մկօխն առնելու։ Մկօն աջն առաւ.. Ասում են, որ այդ ժամանակ վարդապետի զրապանում մի բան լոյս տուեց։ Ասում են, որ կաշառքն է լոյս տալիս այդպիսի մութ՝ տեղերսում...»

— Քնա՞ սրդի ապրիս, Աստուած օքնինէ. հայր գործակալը վկայել է, որ եղբայրդ, պարսն Խնկանոսը միծ ուստմ է ստացել, արժանի է քահանայութեան. զնա և հանգիստ սպասիր հրամանի գալուն:

...Եւ արդարեւ, աշնան վերջերին տիրացու Խճկանոսը կոչուեց Տիմիս... Քա այն ժամանակին էր, երբ մի բարձրաստիճան հոգևորական առաւտաները «վաղ-վաղ» էր ձեռնադրում «արծանաւոր տիրացուներին»...



Յ Ա Կ Ա

1) Օջախի մարումը	11
2) Ամուսնական խաչը	45
3) Կըա՞լէ	59
4) Թողոս աղի մորթած ուլը . . .	103
5) Ծայրեր	109



Հնիթերցողի ներողամտութիւնն եւ ինդուս
հետեւեալ աչքի ընկնող սխալների համար

տաղ	երես	սխալ	ուղիղ
9	9	հետեւեղ	հետեւել
14	13	փայփայելով, սբրելով սբրելով, փայփայելով	
»	27	կողով	կոշով
22	10	իրան	վրան
59	1	Կրակէ	Կրակէ
86	5	շմնաց	շմնաց
87	7	էսօրէն	էսորէն
129	4	պասէ	պասէ

Կենդրուսական նշ Կովկասիան գրավաճառա-
նոցներում ու ինձ ժօտ ծախութ նն հետե-
ւեալ աշխատութիւններս. —

- | | | |
|---------------------------------|-----------|-------|
| 1) ԵՐԳԱՒԹ, վեպ. | սակաւաթիւ | 40 կ. |
| 2) ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԺԵՐ | | 15 կ. |
| 3) ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՅՈՄԲ. Ա. մաս. | | 40 կ. |
| 4) " " " " | Բ. մաս. | 40 կ. |
| 5) ՀՕԹԾ-ՄՈՐՈՑ Առաջին զիրք | | 30 կ. |
| 6) " " Երկրորդ զիրք | | 30 կ. |

Պատրաստ են տպագրութեան համար,
«ՀՕԹԾ-ՄՈՐՈՑ»-ի երրորդ զիրքը.
«ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՅՈՄ»-ի Գ. մասը.

Իմ հասցեն՝ Տվյալի, Թեուտովսկայա փողոց, № 39.

804 101

ՀՀ Ազգային գրադարան



NL0352197

91.500

891.99

U-15